Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Դեկտեմբեր

թիվ 12 (184)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-132-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Տանդեմ Փեյմինթս» դրամական փոխանցումներ իրականացնող ՍՊԸ-ին «Տանդեմ Տրանսֆերս» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն տրամադրելու, որոշ ՍՊԸ-ների և «Բիզնես Լիդեր Հոլդինգ» ՍՊԸ փոխանակման կետի թիվ 3 մասնաճյուղին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ-ին «Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն, որոշ ՍՊԸ-ների գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաներ տրամադրելու, իսկ «Ոսկե Նահանգ» ՍՊԸ-ի գրավատան կազմակերպման լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները մի շարք ՍՊԸ-ների տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական ՓԲԸ-ին ինքնալուծարման թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Ինգո Արմենիա» ապահովագրական ՓԲԸ-ի և «Գուդկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի որոշ մասնաճյուղերի գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ

8 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Ֆինքա» և «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ-ների որոշ մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև 4 արտարժույթի փոխանակման կետերի և 1 ՈՒՎԿ ՍՊԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

8 Ֆինանսական շուկայում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

9 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 230-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

29 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 231-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության նվազագույն ցանկը սահմանելու մասին»

30 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 241-Ն որոշումը «2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

36 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 242-Ն որոշումը «Սուրբ Գեղարդ» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին»

37 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 255-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

38 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 289-Ն որոշումը «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին մասնակցին տրամադրվող տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ը հաստատելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 299-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

42 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 300-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/13-ը հաստատելու մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 301-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ը հաստատելու մասին»

165 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 309-Ն որոշումը «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների հաշվին կատարվող ծախսերի կազմն ու առավելագույն չափը» կանոնակարգ 10/12-ը հաստատելու մասին»

166 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 310-Ն որոշումը «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած մասնակիցների՝ ֆոնդերի կառավարիչների միջև բաշխման կարգը սահմանելու մասին»

167 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 312-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 166-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

169 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 315-Ն որոշումը «Պարտադիր կամ կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնության ստացման կարգը և պայմանները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարման փոխանցման նպատակով կառավարչի ընտրության մրցույթի անցկացման կարգը» հաստատելու մասին»

172 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 316-Ն որոշումը «Ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության տրամադրման կարգը» հաստատելու մասին»

174 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 317-Ն որոշումը «Ապահովագրական ընկերությունից պարտադիր աուդիտետի ժառանգման կարգը և աուդիտետի ժառանգման դիմումի ձևը հաստատելու մասին»

177 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 318-Ն որոշումը «Կուտակային կենսաթոշակային աուդիտետի պայմանագրում ներառվող էական պայմանների մասին»

179 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 319-Ն որոշումը «Աուդիտետի մնացորդային գումարի հաշվարկման և այլ ապահովագրական ընկերության փոխանցման կարգի մասին»

181 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 320-Ն որոշումը «Կուտակային կենսաթոշակային ավանդի գումարն այլ բանկում բացված կուտակային կենսաթոշակային ավանդային հաշվին փոխանցելու համար բանկի կողմից գանձվող վճարի առավելագույն չափը սահմանելու մասին»

182 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 321-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի և դրա կառավարչի արտաքին աուդիտոր իրականացնող աճի ընտրության կարգը» կանոնակարգ 10/18-ը հաստատելու մասին»

184 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 322-Ն որոշումը «Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից մասնակիցներին ներկայացվող և հրապարակվող հաշվետվությունների կազմման և ներկայացման կարգը սահմանելու մասին»

185 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 323-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի և յուրաքանչյուր ենթաֆոնդի զուտ ակտիվների նվազագույն արժեքը սահմանելու մասին»

186 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 324-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» կանոնակարգ 10/06-ը հաստատելու մասին»

188 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 325-Ն որոշումը «Երաշխիքային ֆոնդը կառավարող աճի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ը հաստատելու մասին»

192 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 326-Ն որոշումը «Երաշխիքային ֆոնդը կառավարող աճին կենսաթոշակային գաղտնիքի տրամադրման կարգը» կանոնակարգ 10/21-ը հաստատելու մասին»

193 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 327-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը» կանոնակարգ 10/22-ը հաստատելու մասին»

198 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 328-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ը հաստատելու մասին»

217 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 329-Ն որոշումը «Ներդրումային ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցմանը նախնական համաձայնության տրամադրման կարգը, նախնական համաձայնություն ստանալու համար փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման ձևն ու կարգը» կանոնակարգ 10/24-ը հաստատելու մասին»

218 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 330-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

219 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 331-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

219 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 332-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

220 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 333-Ն որոշումը «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության ընդհանուր կանոնները սահմանելու մասին»

221 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 4 պաշտոնական պարզաբանումը «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների մասին»

226 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 5 պաշտոնական պարզաբանումը «Նոտարներին և ժառանգներին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ»

231 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 6 պաշտոնական պարզաբանումը «Պարտատեր բանկերի կողմից ժառանգատուների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելու հարցի մասին»

235 ԴՐԱՄՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հոդված 1. «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-244-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 2-րդ և 7-րդ կետերի «և հավելված 2-ի ցանկերում» բառերը փոխարինել «ցանկում» բառով.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 38-րդ և 39-րդ կետերով.

«38) **կուտակային վճարի պարտավորություն՝** մասնակցի (նրա համար կուտակային վճարներ հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող հարկային գործակալի) կողմից կամուրջ հաշվին մուտքագրման ենթակա՝ սույն օրենքով սահմանված կուտակային վճարի և դրա նկատմամբ հաշվարկված տույժի գումար.

39) **գերավճար՝** մասնակցի (նրա համար կուտակային վճարներ հաշվարկելու և փոխանցելու պարտավորություն ունեցող հարկային գործակալի) կողմից կամուրջ հաշվին սահմանված կարգով հաշվարկված կուտակային վճարի պարտավորության գումարից ավելի մուտքագրված գումար:»:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածում՝

1) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին մասով.

«3.1. «Հաստատագրված վճարների մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին»**** Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին»***** Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակների մասով անհատ ձեռնարկատեր կամ նոտար հանդիսացող՝ սույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ պարտադիր կուտակային բաղադրիչին կամավոր միացած մասնակիցը պարտավոր է ամսական կատարել կուտակային վճար 5000 դրամի չափով, որը համարվում է «Հաստատագրված վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հաստատագրված վճարներով հարկվող կամ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված 7-ի ցանկում ընդգրկված կամ «Շրջանառության հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով շրջանառության հարկով հարկվող գործունեության տեսակներից ստացվող եկամուտներից հաշվարկված կուտակային վճարի գծով վերջնական պարտավորություն:».

2) 5-րդ մասի վերջին նախադասությունը «10 տոկոսի» բառերից հետո լրացնել «, այդ բազային եկամտից հարկային գործակալների կողմից արդեն պահված կուտակային վճարների» բառերով.

3) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Սույն մասում նշված մասնակիցը լրավճարման ենթակա կուտակային վճարի գումարը կարող է վճարել յուրաքանչյուր ամիս՝ իր ամսական բազային եկամտի 10 տոկոսի և այդ բազային եկամտից հարկային գործակալների կողմից արդեն պահված կուտակային վճարների, ինչպես նաև տվյալ ամսվա համար պետության կատարած համապատասխան վճարի տարբերության չափով:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին հոդվածով.

«Հոդված 8.1. Պարտադիր կուտակային վճարների պարտավորությունների հաշվառումը

1. Պարտադիր կուտակային վճարի պարտավորությունների հաշվառման նպատակով հարկային գործակալի (գործատուի) կամ պարտադիր կուտակային վճարները

** ՀՀՊՏ 2010 N 69 (803)[1], 30.12.10:*
*** Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին (ՀՀՊՏ N 73 (1013), 28.12.13):
**** ՀՀՊՏ 1998 N 15 (48), 27.07.98:*
***** ՀՀՊՏ 2010 N 69 (803), 29.12.10:*
****** ՀՀՊՏ 2012 N 66 (940), 28.12.12:*

սույն օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույնաբար կատարող անձանց համար հարկային մարմնում բացվում են անձնական հաշվի քարտեր: Անձնական հաշվի քարտի ձևը և վարման կարգը սահմանում է հարկային մարմինը:

2. Պարտադիր կուտակային վճարի պարտավորությունները մարվում են ժամանակագրական կարգով՝ ավելի վաղ առաջացած պարտադիր կուտակային վճարի պարտավորության չափով. առաջնահերթ՝ կուտակային վճարը, այնուհետև՝ տույժը, անկախ վճարման փաստաթղթերում (անդորրագրում, վճարման հանձնարարականում) նշված պարտադիր կուտակային վճարի պարտավորության վճարման նպատակայնությունից:

Կուտակային վճարի (բացառությամբ ճշտված հաշվարկի ներկայացման արդյունքում առաջացածի) պարտավորությունը տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար համարվում է մարված և ենթակա է ռեեստր վարողին փոխանցման, եթե կամուրջ հաշվին մուտքագրված կուտակային վճարի պարտավորությունների գումարները բավարար են այդ հաշվետու ժամանակաշրջանի կուտակային վճարը և տույժը մարելու համար:

Սույն մասի կիրառման իմաստով կուտակային վճարի ճշտված հաշվարկների ներկայացման արդյունքում առաջացած լրացուցիչ պարտավորությունը հաշվառվում է ճշտված հաշվարկի փաստացի ներկայացման ամսվա կուտակային վճարի պարտավորության կազմում:

3. Կամուրջ հաշվին մուտքագրված գերավճարները ենթակա են վերադարձման հարկային գործակալի (գործատուի) կամ պարտադիր կուտակային վճարները սույն օրենքով սահմանված դեպքերում ինքնուրույնաբար կատարող անձանց դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու օրվանից հետո՝ 15 օրվա ընթացքում, կամ հաշվի են առնվում հետագա կուտակային վճարները հաշվարկելիս և վճարելիս:»:

Հոդված 4. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մասնակիցների ռեեստրը վարողը պարտավոր է Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով, ժամկետներում և պարբերականությամբ հանրությանը մատչելի դարձնել տեղեկատվություն այն մասին, որ անձի կողմից կենսաթոշակային ֆոնդ չընտրելու դեպքում կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը անձի համար կատարում է մասնակիցների ռեեստրը վարողը՝ ծրագրային մոդուլի միջոցով՝ պատահականության սկզբունքով, որից հետո մասնակցի հետագա կուտակային վճարներն ուղղվում են ընտրված կենսաթոշակային ֆոնդին:»:

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1) առաջին պարբերության առաջին նախադասությունը «թղթային» բառից հետո լրացնել «տարբերակով, եթե մասնակիցն այլ տարբերակ չի ընտրել» բառերով.

2) երկրորդ պարբերության առաջին նախադասությունից հանել «թղթային տարբերակով» բառերը:

Հոդված 6. Օրենքի 39-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 39. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարելը

1. Սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության հիման վրա անձի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարվելու դեպքում մասնակցի համար կենսաթոշակային ֆոնդի ընտրությունը կատարում է մասնակիցների ռեեստրը վարողը՝ ծրագրային մոդուլի միջոցով՝ սահմանված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը:

Ծրագրային մոդուլը պատահականության սկզբունքով բաշխում է ընտրություն չկատարած մասնակիցներին բոլոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների միջև այլ մասնակիցների կողմից կատարված ընտրությանը համամասնորեն՝ հիմք ընդունելով սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն կենսաթոշակային ֆոնդի փայերը մասնակիցների կենսաթոշակային հաշիվներին փոխանցելու օրվան նախորդող օրվա դրությամբ առկա համամասնությունը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի:

Կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած անձանց կուտակային վճարների հաշվին ձեռք են բերվում սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված սկզբունքով պատահական ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի միջին ռիսկայնության (պահպանողական (կոնսերվատիվ)) կենսաթոշակային ֆոնդի փայեր:

2. Եթե անձը չի ներկայացրել սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված դիմումը, ապա մասնակիցների ռեեստրը վարողը տվյալ անձի համար կենսաթոշակային հա-

շիվ բացելուց և նրա անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրությունից հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գրավոր (թղթային) ձևով տեղեկացում է ուղարկում տվյալ անձին: Ընդ որում, սույն մասի առաջին նախադասությամբ նախատեսված տեղեկացումը պետք է պարունակի Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված տեղեկությունները:

3. Կենտրոնական բանկը կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած բոլոր մասնակիցների կամ նրանց մի մասի համար սահմանում է կառավարիչների միջև բաշխման կարգ, եթե դա անհրաժեշտ է կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, ինչպես նաև կուտակային կենսաթոշակային համակարգի և (կամ) ֆինանսական համակարգի կայունության ապահովման համար:»:

Հոդված 7. Օրենքի 76-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությունով.

«Գանձված (մուծված) տույժերի հաշվին մասնակցի պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերը որոշվում են՝ մասնակիցների բազային եկամտից (այդ թվում՝ ստուգմամբ հայտնաբերված) պահված (վճարված) կուտակային վճարի ընդհանուր գումարում տվյալ մասնակցի համար հաշվարկված կուտակային վճարի գումարի չափից ելնելով:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին և 1.2-րդ մասերով.

«1.1. Սույն օրենքի դրույթների համաձայն՝ մասնակցի բազային (պայմանագրային) եկամտից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) պարտադիր կուտակային վճարի գումարները (այդ թվում՝ սույն հոդվածի 1.2-րդ մասում նշված՝ բազային (պայմանագրային) եկամուտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում) հարկային գործակալի կողմից մասնակցից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար:

1.2. Բազային (պայմանագրային) եկամուտը թաքցնելու կամ այն պակաս ցույց տալու դեպքում պարտադիր կուտակային վճար կատարողից (հարկային գործակալից) սույն օրենքով սահմանված կարգով գանձվում է թաքցրած կամ պակաս ցույց տված բազային (պայմանագրային) եկամտի նկատմամբ հաշվարկված (հարկային մարմնի կողմից) պարտադիր կուտակային վճարի գումարը:

Բազային (պայմանագրային) եկամուտը թաքցնելը կամ պակաս ցույց տալը հարկային մարմին ներկայացված պարտադիր կուտակային վճարների հաշվարկներում բազային (պայմանագրային) եկամուտը ցույց չտալն է, պակաս ցույց տալը կամ բազային եկամուտներ չառաջանալու մասին կեղծ տվյալներ ներկայացնելը:

Պարտադիր կուտակային վճար կատարողները (հարկային գործակալները) թաքցված կամ պակաս ցույց տրված բազային (պայմանագրային) եկամտից պարտադիր կուտակային վճարի գումարները, ինչպես նաև սույն օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ստուգման ակտով հաշվարկված տույժերը վճարում են հարկային մարմնի կողմից ստուգման ակտը ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում: Ստուգման ակտով առաջադրված պարտադիր կուտակային վճարի գումարների նկատմամբ նշված 10-օրյա ժամկետում տույժերը չեն հաշվարկվում: Այդ ժամկետը լրանալուց հետո ստուգման ակտով առաջադրված պարտադիր կուտակային վճարի գումարների չվճարման կամ մասնակի վճարման դեպքում տույժերի հաշվարկի վերսկսման ժամանակ նշված 10-օրյա ժամկետը հաշվի չի առնվում:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
28 դեկտեմբերի 2013 թ., Երևան, ՀՕ-132-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՁԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- «Տանդեմ Տրանսֆերս» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ***ստեղծման և գործունեության իրականացման թույլտվություն է տրամադրվել*** «Տանդեմ Փեյմինթս» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 274Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Վելլի Բեյ», «Ալեքս-Գրիգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին և «Բիզնես Լիդեր Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փոխանակման կետի թիվ 3 մասնաճյուղին (որոշումներ թիվ 275Ա, 307Ա, 278Ա):
- ***«Ինտելէքսպրես» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Պրոմեթեյ բանկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 276Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաներ են տրամադրվել*** «Թրասթ Կրեդիտ» և «Ռոյալ Կրեդիտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 287Ա, 297Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Ոսկե Նահանգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատան կազմակերպման լիցենզիան (որոշում թիվ 292Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Մոլտո Բենե», «Գ. Բաղրամյան և ընկերներ» և «Երևանի թիվ 2 շուկա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 294Ա, 295Ա, 306Ա):
- ***Ինքնալուծարման թույլտվություն է տրամադրվել*** «Կասկադ Ինշուրանս» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 308Ա):
- ***Դադարեցվել են*** «Ինգո Արմենիա» ապահովագրական փակ բաժնետիրական և «Գուդկրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Պիացա Գրանդե» և «Շիրակ» մասնաճյուղերի գործունեությունը (որոշումներ թիվ 1/1053Ա, 1/1101Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆինքա» և «Արեգակ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Եղվարդ» և «Ալավերդի» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/1079Ա, 1/1100Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/1059Ա, 1/1083Ա, 1/1110Ա, 1130Ա, 1131Ա):

ՅԻ ՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի թիվ 290Ա որոշմամբ 2013 թ. դեկտեմբերի 24-ից ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 7.75%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 9.25%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 6.25%:***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակով ունենալով սահմանափակել վարկային ռեգիստրի գործունեությունը, ինչպես նաև լրամշակել վարկային ռեգիստրին բանկերի, վարկային կազմակերպությունների և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից տրամադրվող տեղեկատվության հաշվետվական ձևերը,

հաշվի առնելով Համաշխարհային բանկի կողմից առաջարկված «Զարգացման քաղաքականության գործառնությունների ծրագիրը»,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և 35-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի ««Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգը» նոր խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 142-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ, ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԲԱՆԿԵՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,

2) Որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգի» (այսուհետ՝ Կարգ) նախաբանը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Սույն կարգի և վարկային տեղեկատվական համակարգի ստեղծման նպատակը արդյունավետ վերահսկողության և վերլուծության իրականացման համար արժանահավատ տեղեկատվության հավաքագրումն է:»,

3) Կարգի 1-ին գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է վարկային տեղեկատվական համակարգի (այսուհետև՝ վարկային ռեգիստր) ստեղծման, վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի (այսուհետ՝ վարկատու) մասնակցության կարգն ու պայմանները:
2. Վարկային ռեգիստրը սույն կարգով ստեղծված համակարգ է, որտեղ կուտակվում և պահպանվում է վարկառուների և նրանց տրամադրված վարկերի վերաբերյալ սույն կարգով սահմանված տեղեկատվությունը, որը հնարավորություն է ընձեռում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետև՝ Կենտրոնական բանկ)՝ վերահսկել վարկառու-վարկատու փոխհարաբերությունները, իրականացնել վերլուծություններ, ինչպես նաև օգտագործել այդ տեղեկատվությունը վարկանշում և Կենտրոնական բանկի այլ խնդիրներն իրականացնելու համար:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հոկտեմբերի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.12.2013 թ. (ՀՀԳՏ N34 (478)[1], 23.12.2013):

3. Սույն կարգի իմաստով՝ վարկ է համարվում վարկատուի նկատմամբ առաջացած այն պարտավորությունը, որն առաջացել է վարկի (այդ թվում՝ վարկային գծի), ֆինանսական վարձակալության (լիզինգի), ֆակտորինգի, երաշխավորության, ակրեդիտիվի պայմանագրերից, երաշխիքի կամ վարկային քարտի տրամադրումից, հաշվի վարկավորումից (օվերդրաֆտ), հետգնման պայմանով արժեթղթերի ձեռքբերումից, արժութային սվոպից, ինչպես նաև ցանկացած այլ գործարքից, որը դրամական պարտավորություն է առաջացնում վարկատուի նկատմամբ, որը, սակայն, կապված չէ պարտապանի կողմից վարկատուին ապրանքներ վաճառելու, ծառայություններ մատուցելու, աշխատանքներ կատարելու կամ վարկատուի կողմից պարտապանի թողարկած արժեթղթերն առանց հետգնման պայմանի ձեռք բերելու հետ:
4. Սույն կարգի իմաստով՝ ստացված և չմարված վարկ է համարվում այն վարկը, որի գծով վարկառուն չկատարված պարտավորություն ունի վարկատուի նկատմամբ:
5. Սույն կարգի իմաստով անարժանահավատ տվյալներ են համարվում Կենտրոնական բանկ ներկայացված հաշվետվությունում արտացոլված և իրականությանը չհամապատասխանող տվյալները:»:

4) Կարգի 2-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ II. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6. Վարկային ռեգիստրին տրամադրվում է վարկառուի կողմից տվյալ վարկատուի հանդեպ ստանձնած կամ արդեն իսկ կնքված պայմանագրով ստանձնելիք, սույն կարգի 3-րդ կետում նշված, բոլոր տեսակի պարտավորությունների մասին տեղեկություններ, որոնք սահմանված են սույն կարգի Հավելված 1-ով:
7. Վարկատուի կողմից վարկային ռեգիստրին տեղեկատվությունը տրամադրվում է վարկային պայմանագրի կնքման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրերի ընթացքում: Տվյալ վարկի վերաբերյալ վարկային ռեգիստր արդեն իսկ մուտքագրված տվյալների յուրաքանչյուր փոփոխության դեպքում (ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն դասակարգված վարկերի փոփոխության դեպքում) վարկատուն պարտավոր է վարկային ռեգիստր ներկայացնել այդ փոփոխությունները՝ դրանք կատարելու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրերի ընթացքում:
8. Վարկատուն վարկի վերաբերյալ ժամկետանց օրերի քանակը լրացնում և թարմացնում է յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը (նույն օրվա դրությամբ) և վարկային ռեգիստր է ներկայացնում հաջորդ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկատուն վարկի գծով ժամկետանց պարտավորությունների մարման դեպքում ժամկետանց օրերի քանակը զրոյացնում և վարկային ռեգիստր է ներկայացնում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում: Վարկի գծով ժամկետանց պարտավորությունների մասնակի մարման դեպքում ժամկետանց օրերի քանակը նվազեցվում և վարկային ռեգիստր է ներկայացվում մարման օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:
9. Ոչ ճիշտ տեղեկատվություն ստանալու դեպքում վարկային ռեգիստրը տեղեկատվություն տրամադրող վարկատուին տեղեկացնում է անճշտության մասին: Վարկատուն պարտավոր է տեղեկատվությունը երեք աշխատանքային օրերի ընթացքում ճշգրտել՝ ներկայացնելով ճիշտ տեղեկատվություն կամ տեղեկատվության ճշտությունը հաստատել վարկային ռեգիստրին:
10. Սույն կարգի իմաստով ոչ ճիշտ տեղեկատվություն է համարվում վարկային ռեգիստր ներկայացվող տեղեկատվության սահմանված ֆորմատներին չհամապատասխանող կամ տվյալների հակասություն, անհամապատասխանություն պարունակող տեղեկատվությունը:
11. Վարկատուները վարկային ռեգիստրին տեղեկատվություն են տրամադրում իրենց գրանցման և լիցենզավորման պահից:
12. Վարկատուների կողմից ներկայացվող հաշվետվությունների և դրանցում պարունակվող տվյալների անվանումների և ֆորմատների նկատմամբ պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից: Այն դեպքերում, երբ վարկառուն գրանցված է այլ (այդ թվում՝ օֆշորային) երկրում, չունի հարկ վճարողի հաշվառման համար, տվյալ վարկառուի վերաբերյալ տեղեկատվությունը վարկային ռեգիստրին տրամադրվում է տվյալ երկրի գրանցման համարով: Ֆայլերի փոխանակումը կատարվում է SFTP ցանցի միջոցով:»,

5) Կարգի 3-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ III. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

13. Վարկային ռեգիստրի տեղեկատվության օգտագործողներն են Կենտրոնական բանկը, վարկատուները միայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» համաձայն ակտիվների դասակարգման նպատակով և վարկառուները սույն կարգով սահմանված կարգով:
14. Վարկային ռեգիստրը վարկատուներին տրամադրում է պարբերական տեղեկատվություն՝ համաձայն Հավելված 4-ի՝ վարկատուի բոլոր վարկառուների մասին ամսվա վերջի դրությամբ, որը վարկատուներին է տրամադրվում մինչև հաջորդ ամսվա 6-րդ աշխատանքային օրը:
15. Այն դեպքերում, երբ վարկային ռեգիստրից ստացված տեղեկատվությունը պարունակում է անհամապատասխանություններ տեղեկատվությունը ստացած վարկատուի տվյալների հետ, վարկատուն տեղեկացնում է Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու ստորաբաժանմանը՝ անհամապատասխանությունները ճշգրտելու և ճշգրտված տեղեկատվությունը տրամադրելու նպատակով:
16. Տեղեկատվության փոխանակումը կատարվում է տեղեկատվությանը տիրապետելու իրավունք ունեցող Կենտրոնական բանկի և վարկատուի աշխատակիցների կողմից:
17. Վարկային ռեգիստրից տեղեկատվություն տրամադրվում է միայն իրավաբանական անձ (բացառությամբ՝ վարկատուների) և ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր) հանդիսացող վարկառուների վերաբերյալ, որոնք ստանձնել են կամ կարող են ստանձնել վարկատուի հանդեպ սույն կարգի 3-րդ կետում նշված պարտավորություններից որևէ մեկը:
18. Վարկառուն իրավասու է վարկային ռեգիստրից ստանալ իր մասին վարկային ռեգիստրում գտնվող տեղեկատվությունը անվճար:
19. Վարկային ռեգիստրը վարկառուներին տեղեկատվություն է տրամադրում միայն տարին մեկ անգամ սույն կարգի Հավելվածով 3-ով սահմանված ձևով և վարկառուի վերաբերյալ ցանկացած այլ տեղեկատվություն, որն առկա է վարկային ռեգիստրում: Վարկային ռեգիստրից տեղեկատվության ստացման համար վարկառուն պարտավոր է առձեռն ներկայացնել գրավոր դիմում (Հավելված 6): Վարկառուի իրավաբանական անձ լինելու դեպքում դիմումը ստորագրվում և կնքվում է իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի կողմից: Կցվում է նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը (իրավաբանական անձի դեպքում՝ գործադիր տնօրենի անձը հաստատող փաստաթղթի պատճենը): Վարկային ռեգիստրի կողմից սույն կետով նախատեսված դիմումը բավարարվում է դիմումը ստանալու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:
20. Դիմողը տեղեկատվությունը ստանում է առձեռն: Տեղեկատվությունը ստանալու համար վարկառուն (կամ նրա լիազորված անձը) պարտավոր է ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, իսկ լիազորված անձ լինելու դեպքում՝ նաև լիազորագիր: Այն դեպքերում, երբ ներկայացված փաստաթղթերը թերի են, կամ դիմումը ներկայացրած անձն իրավունք չունի պահանջելու տվյալ տեղեկատվությունը, դիմումը մերժվում է վարկային ռեգիստրի վարման համար պատասխանատու Կենտրոնական բանկի ստորաբաժանման կողմից՝ պատասխան գրությամբ: Փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմողը կարող է լրացնել կամ փոփոխել փաստաթղթերը և կրկին դիմել վարկային ռեգիստրին:»,

6) Կարգի 4-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ԳԼՈՒԽ IV. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԱՆԱՀԱՎԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

21. Վարկատուները պարտավոր են վարկային ռեգիստր ներկայացնել ամբողջական և արժանահավատ տեղեկատվություն:
22. Տրամադրված տեղեկատվության ամբողջականության և արժանահավատության համար օրենքով սահմանված պատասխանատվություն է կրում տեղեկատվությունը տրամադրող վարկատուն:

23. Վարկային ռեգիստրից վարկառուի կարծիքով ոչ ճիշտ տեղեկատվություն ստանալու դեպքում վարկառուն կարող է գրավոր տեղեկացնել վարկային ռեգիստրին՝ մատնանշելով կասկած հարուցող տվյալները և պահանջել ճշգրտված տեղեկատվությունը: Վարկային ռեգիստրը, տվյալների արժանահավատությունը ստուգելուց և հարկ եղած դեպքում ճշգրտումներ իրականացնելուց հետո պատասխանում է վարկառուին՝ տրամադրելով ճշգրտված տեղեկատվությունը սույն կարգով սահմանված ժամկետներում:
24. Այն դեպքերում, երբ վարկառուին վարկ տրամադրած վարկատուն գտնվում է լուծարման փուլում, այդ վարկի վերաբերյալ վարկային ռեգիստր մուտքագրված տվյալների թարմացումը կարող է կատարվել վարկառուի կողմից վարկային ռեգիստր ներկայացված տեղեկանքների հիման վրա: Վարկառուն տեղեկանքները ստանում է լուծարվող բանկի լուծարային կառավարչից:
25. Կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում այն դեպքում, երբ իր կողմից տրամադրած տեղեկատվությունը չի համապատասխանում վարկատուի կողմից վարկային ռեգիստրին տրամադրած տեղեկատվությանը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:»:

7) Կարգի 5-րդ, 6-րդ և 7-րդ գլուխները հանել,
8) Կարգի Հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է),
9) Կարգի Հավելված 2-ը հանել,
10) Կարգի Հավելված 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է),
11) Կարգի Հավելված 4-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է),
12) Կարգի Հավելած 5-ը և Հավելված 5.1-ը հանել,
13) Կարգի Հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է),
14) Կարգի Հավելված 7-ը և Հավելված 8-ը հանել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ին, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 4-րդ, 8-րդ, 9-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2014 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 հոկտեմբերի 2013 թ., N 230-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշմամբ

Հավելված 1

Վարկային ռեգիստր ներկայացվող հիմնական տեղեկատվություն

StartDate	dd/mm/yyyy
EndDate	dd/mm/yyyy
CreatedDateTime	dd/mm/yyyy hh:mm:ss

Վարկառուի ներքին իդենտիֆիկացման համարը	Վարկառուի անվանումը / անունը	Վարկառուի հարկ վճարողի (կամ այլ անձի՝ ծեռնարկությունների) ՀՎՀՀ	Վարկառուի (կամ վարկառուի ծեռնարկությունների կամ այլ անձանց) ընդհանուր պարտավորությունների չափը	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Վարկառուի (ֆիզիկական անձ կամ ծեռնարկատեր) ընդհանուր պարտավորությունների չափը՝ ելնելու է տոկոսից ազատված ընդհանուր պարտավորությունների չափից	Այլ նշումներ

Վարկառուի ներքին իդենտիֆիկացման համարը	Փոխկապակցված վարկառուի ներքին իդենտիֆիկացման համարը	Այլ նշումներ փոխկապակցված վարկառուի վերաբերյալ

	Վարկատու կազմակերպություն (հիմնադրամ)
	Ավտոմատ փոխանցման տուփ
	Ավտոմեքենայի ընդհանուր տեսք
	Ավտոմեքենայի ներքին հարդարանք
	Ավտոմեքենայի ներքին հարդարանքի գույն
	Ավտոմեքենայի ներքին հարդարանքի նյութ
	Ավտոմեքենայի ներքին հարդարանքի տեսակ
	Ավտոմեքենայի շարժիչի ծավալ
	Ավտոմեքենայի շարժիչի տեսակ
	Ավտոմեքենայի վարորդական նստատեղ

| Վարկի ճեղքիկ հրեթռնտֆիկացմամբ համադրում | | |

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ի ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. ***StartDate-ը*** և ***EndDate-ը*** (EndDate-ը նաև ցույց է տալիս այն օրվա ամսաթիվը, որի դրությամբ վիճակը ներկայացնում են ֆայլում ներառված տվյալները) այն ժամանակահատվածի սկիզբն ու վերջն են, որի ընթացքում տեղի է ունեցել տվյալների փոփոխություն, ***CreatedDateTime***-ը ցույց է տալիս այն ամսաթիվը և ժամանակը, երբ գեներացվել է ֆայլը:
2. ***Վարկառուի ներքին իդենտիֆիկացման համարը*** - լրացվում է վարկատուի համակարգում վարկառուին տրված եզակի իդենտիֆիկացման համարը:
3. ***Վարկառուի իրավական կարգավիճակը -*** լրացվում է վարկառուի իրավական կարգավիճակը՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր:
4. ***Վարկառուի անունը / անվանումը- լրացվում է վարկառուի՝***
   1) իրավաբանական անձ լինելու դեպքում՝ վարկառուի լրիվ անվանումը և կազմակերպաիրավական տեսակը: Վարկառուի կազմակերպաիրավական տեսակը լրացվում է կրճատ («Գամմա Սերվիս» *ՍՊԸ և այլն).*
   2) ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ վարկառուի անունը:
5. ***Վարկառուի ազգանունը*** - լրացվում է միայն ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ ազգանունը:
6. ***Վարկառուի հայրանունը*** - լրացվում է միայն ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ հայրանունը:
7. ***Վարկառուի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) ՀՎՀՀ*** - լրացվում է վարկառուի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
8. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի համարը -*** լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի սերիան և համարը:
9. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի տրման ամսաթիվը*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի տրման ամսաթիվը:
10. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագիրը ում կողմից է տրվել*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագիրը տվող մարմնի կոդը:
11. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ծննդյան ամսաթիվը*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ծննդյան ամսաթիվը:
12. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սեռը*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սեռը՝ արական կամ իգական:
13. ***Մարզի կոդը*** - լրացվում է այն մարզի կոդը, որտեղ գտնվում կամ բնակվում է վարկառուն:
14. ***Վարկառուի գտնվելու կամ բնակության վայրը*** - լրացվում է իրավաբանական անձի գտնվելու վայրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը (երկիրը, մարզը, բնակավայրը, փողոցը, շենքի և բնակարանի համարը):
15. ***Վարկառու կազմակերպության սեփականության ձևը -*** կախված իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում 50 տոկոսից ավելի կամ մնացածի նկատմամբ գերակշռող մասնակցություն ունենալուց՝ լրացվում է տվյալ սեփականության ձևը, համապատասխանաբար՝ պետական, մասնավոր և օտարերկրյա: Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում լրացվում է՝ այլ:
16. ***Վարկառուի ռեզիդենտությունը*** - վարկառուի ռեզիդենտ լինելու դեպքում լրացվում է՝ *ռեզիդենտ*, ոչ ռեզիդենտ լինելու դեպքում՝ *ոչ ռեզիդենտ*: Ռեզիդենտությունը որոշվում է համաձայն «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով սահմանված չափանիշների:
17. ***Վարկատուի հետ կապվածությունը*** - վարկատուի հետ կապվածության առկայության դեպքում լրացվում է՝ «*կապված է*», հակառակ դեպքում՝ «կապված չէ»: Կապվածությունը որոշվում է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածում սահմանված չափանիշների:
18. ***Վարկառուի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) գործունեության ոլորտը -*** լրացվում է վարկառուի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) գործունեության ոլորտը.
   1) *A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, այդ թվում՝*
      ա.(01.1/3) բուսաբուծություն
      բ. (01.4) անասնապահություն
      գ. (02) անտառային տնտեսություն և փայտամթերումներ
      դ. (03) ձկնորսություն և ձկնաբուծություն
   2) *B. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում*
      ա.(07) մետաղական հանքաքարի արդյունահանում
      բ. (08.1-12) շինանյութի արդյունահանում
   3) *C. Մշակող արդյունաբերություն*
      ա.(10) սննդի արդյունաբերություն
      բ. (10.1) մսի մշակում և պահածոյացում
      գ. (10.3) մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում
      դ. (10.5) կաթնամթերքի արտադրություն
      ե. (10.7) հացի և ալյուրե հրուշակեղենի արտադրություն
      զ. (11) խմիչքների արդյունաբերություն
      է. (12) ծխախոտի արդյունաբերություն
      ը. (13+14) մանածագործական արտադրատեսակների և հագուստի արտադրություն

թ. (15) կաշվե արտադրատեսակների արտադրություն
ժ. (16+17) փայտանյութի, թղթի, փայտե և թղթե արտադրատեսակների արտադրություն (բացի կահույքից)
ժա. (18) պոլիգրաֆիական գործունեություն
ժբ. (20) քիմիական նյութերի արտադրություն
ժգ. (21) դեղագործական արտադրատեսակների արտադրություն
ժդ. (22) ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
ժե. (23) ոչ մետաղական արտադրատեսակների արտադրություն
ժզ. (24) հիմնային մետաղների արտադրություն
ժէ. (25) մետաղե պատրաստի արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորումներից
ժը. (26+27) համակարգիչների, էլեկտրոնային, օպտիկական և էլեկտրական սարքավորումների արտադրություն
ժթ. (31) կահույքի արտադրություն
ի. (33) մեքենաների և սարքավորումների նորոգում և տեղակայում

4) *D. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում*
ա.(35.1) էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, այդ թվում էլեկտրաէներգիայի արտադրություն, փոխանցում և բաշխում

5) *E. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում*

6) *F. Շինարարություն*
ա.(41.2) բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն
բ.(42.1) ճանապարհների և երկաթուղիների շինարարություն

7) *G. Առևտուր*
ա.(45) ավտոմեքենաների, մոտոցիկլետների և դրանց պահեստամասերի առևտուր և նորոգում
բ.(46) մեծածախ առևտուր
գ.(47) մանրածախ առևտուր

8) *H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն*
ա. (49.32) տաքսու ծառայություններ
բ. (49.4) ավտոճանապարհային բեռնափոխադրումներ և փոխադրման ծառայություններ
գ. (51) օդային տրանսպորտի գործունեություն
դ. (52.1) պահեստավորում և պահպանում

9) *I. Կեցության և հանրային սննդի կազմակերպում*
ա. (55.1) հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ
բ. (56) հանրային սննդի կազմակերպում

10) *J. Տեղեկատվություն և կապ*
ա.(58) հրատարակչական գործ
բ. (60) հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում
գ. (61) հեռահաղորդակցություն
դ. (62) համակարգչային ծրագրավորում և հարակից գործունեություն

11) *K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն*
ա.(65) ապահովագրական ընկերություններ
բ. (66) ներդրումային ընկերություններ
գ. (67) այլ ֆինանսական կազմակերպություններ

12) *L. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն*
ա.(68.1) սեփականություն հանդիսացող անշարժ գույքի առք և վաճառք

13) *M. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն*
ա.(69) իրավաբանական և հաշվապահական գործունեություն
բ. (71) ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն
գ.(72) գիտական հետազոտություններ և մշակումներ
դ.(73.1) գովազդային գործունեություն

14) *P. Կրթություն*
ա.(85.4) բարձրագույն կրթություն
բ. (85.5) այլ կրթական հաստատություններ

15) Q. *Առողջապահություն*

16) R. *Մշակույթ, զվարճություն, հանգիստ*

17) T. *Տնտեսության այլ ճյուղեր*
ա.(32.1) ոսկերչական արտադրատեսակների և զարդերի արտադրություն
բ. (79) զբոսաշրջություն

19. ***Վարկառուի (կազմակերպության կամ անհատ ձեռնարկատեր) պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման համարը -*** լրացվում է վարկառու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման համարը:
20. ***Վարկառուի (կազմակերպության կամ անհատ ձեռնարկատեր) պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման ամսաթիվը -*** լրացվում է վարկառու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման ամսաթիվը:
21. ***Վարկառու կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը (անուն. ազգանուն)*** - լրացվում է վարկառու կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը:

22. ***Վարկառու կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի համարը*** - լրացվում է վարկառու կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի համարը:
23. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող հին փաստաթղթի համարը -*** լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող հին փաստաթղթի համարը:
24. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը)*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը):
25. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սոցիալական քարտ չունենալու/հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը -*** լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սոցիալական քարտ չունենալու/հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) չունենալու դեպքում:
26. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի համարը*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի համարը:
27. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի տրման ամսաթիվը*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի տրման ամսաթիվը:
28. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտը ում կողմից է տրվել*** - լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտը տվող մարմնի կոդը:
29. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող այլ փաստաթղթի համարը -*** լրացվում է վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող այլ փաստաթղթի համարը:
30. ***Վարկառուի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ընտանիքի անդամների քանակը*** - լրացվում է ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր վարկառուի ընտանիքի անդամների քանակը:
31. ***Վարկառու ֆիզիկական անձի զբաղվածության կարգավիճակը*** - լրացվում է՝
    1) աշխատում է որպես վարձու աշխատող՝ հիմնական աշխատատեղի առկայությամբ,
    2) աշխատում է սեփական բիզնեսում՝ գործունեության հիմնական տեսակի առկայությամբ,
    3) չի աշխատում՝ աշխատունակ տարիքի է (աշխատունակության տարիք է համարվում անձի տասնվեցից մինչև վաթսուներեք տարեկան հասակը),
    4) չի աշխատում՝ անաշխատունակ է,
    5) այլ դեպքեր:
32. ***Այլ նշումներ վարկառուի վերաբերյալ*** - լրացվում է վարկառուի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:
33. ***Վարկառուի ներքին իդենտիֆիկացման համարը*** - լրացվում է փոխկապակցված անձ ունեցող վարկառուին տրված եզակի իդենտիֆիկացման համարը: Կապվածությունը որոշվում է համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածում սահմանված չափանիշների:
34. ***Փոխկապակցված վարկառուի ներքին իդենտիֆիկացման համարը -*** լրացվում է փոխկապակցված վարկառուին տրված եզակի իդենտիֆիկացման համարը:
35. ***Այլ նշումներ փոխկապակցված վարկառուի վերաբերյալ -*** լրացվում է փոխկապակցված վարկառուի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:
36. ***Վարկառու կազմակերպության ներքին իդենտիֆիկացման համարը -*** լրացվում է այն վարկառու կազմակերպության եզակի իդենտիֆիկացման համարը, որի սեփականատերն է հանդիսանում մասնակիցը (սեփականատերը):
37. ***Մասնակցի ներքին իդենտիֆիկացման համարը -*** լրացվում է մասնակցի (սեփականատիրոջ) եզակի իդենտիֆիկացման համարը: Լրացվում են վարկառուի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում 20 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող կամ 3-5 ամենամեծ մասնակցություն ունեցող մասնակիցների վերաբերյալ տվյալները:
38. ***Մասնակցի իրավական կարգավիճակը -*** լրացվում է մասնակցի իրավական կարգավիճակը՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր:
39. ***Մասնակցի անունը / անվանումը -*** լրացում է՝
    1) իրավաբանական անձ լինելու դեպքում՝ մասնակցի լրիվ անվանումը և կազմակերպաիրավական տեսակը: Մասնակցի կազմակերպաիրավական տեսակը լրացվում է կրճատ, օրինակ՝ *ԲԲԸ:*
    2) ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ մասնակցի անունը:
40. ***Մասնակցի ազգանունը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ազգանունը:
41. ***Մասնակցի հայրանունը -*** լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հայրանունը:
42. ***Մասնակցի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) ՀՎՀՀ*** - լրացվում է մասնակցի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
43. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի համարը -*** լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի սերիան և համարը:
44. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի տրման ամսաթիվը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի տրման ամսաթիվը:
45. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագիրն ում կողմից է տրվել*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագիրը տվող մարմնի կոդը:
46. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ծննդյան ամսաթիվը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ծննդյան ամսաթիվը:

47. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սեռը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սեռը՝ արական կամ իգական:
48. ***Մարզի կոդը*** - լրացվում է այն մարզի կոդը, որտեղ գտնվում կամ բնակվում է մասնակիցը:
49. ***Մասնակցի գտնվելու կամ բնակության վայրը*** - լրացվում է մասնակից իրավաբանական անձի գտնվելու վայրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը (երկիրը, մարզը, բնակավայրը, փողոցը, շենքի և բնակարանի համարը):
50. ***Մասնակից կազմակերպության սեփականության ձևը*** - կախված մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում 50 տոկոսից ավելի կամ մնացածի նկատմամբ գերակշռող մասնակցություն ունենալուց՝ լրացվում է տվյալ սեփականության ձևը, համապատասխանաբար՝ *պետական, մասնավոր* և *օտարերկրյա*: Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում լրացվում է՝ *այլ:*
51. ***Մասնակցի ռեզիդենտությունը*** - մասնակցի ռեզիդենտ լինելու դեպքում լրացվում է՝ *ռեզիդենտ*, ոչ ռեզիդենտ լինելու դեպքում՝ *ոչ ռեզիդենտ:*
52. ***Մասնակցի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) գործունեության ոլորտը*** - լրացվում է մասնակցի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) գործունեության ոլորտը:
53. ***Մասնակցի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման համարը*** - լրացվում է մասնակից կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման համարը:
54. ***Մասնակցի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման ամսաթիվը*** - լրացվում է մասնակից կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման ամսաթիվը:
55. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող հիմ փաստաթղթի համարը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող հիմ փաստաթղթի համարը:
56. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը)*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը):
57. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սոցիալական քարտ չունենալու/ հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սոցիալական քարտ չունենալու/հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) չունենալու դեպքում:
58. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի համարը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի համարը:
59. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի տրման ամսաթիվը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի տրման ամսաթիվը:
60. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտը ում կողմից է տրվել*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտը տվող մարմնի կոդը:
61. ***Մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող այլ փաստաթղթի համարը*** - լրացվում է մասնակցի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող այլ փաստաթղթի համարը:
62. ***Մասնակից կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը (անուն. ազգանուն)*** - լրացվում է մասնակից կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը
63. ***Մասնակից կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի համարը*** - լրացվում է մասնակից կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի համարը:
64. ***Այլ նշումներ մասնակցի վերաբերյալ*** - լրացվում է մասնակցի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:
65. ***Վարկի ներքին իդենտիֆիկացման համարը*** - լրացվում է տվյալ վարկի եզակի իդենտիֆիկացման համարը (վարկային պայմանագրի համարը, վարկային ռեգիստրի համարը, հաշվի համարը և այլն), որը չի կարող կրկնվել տվյալ վարկատուի (ներառյալ՝ մասնաճյուղերը) մոտ տարբեր վարկերի համար: *Ընդ որում, 2014 թվականի հունվարի 1-ից տրամադրվող վարկերի համար վարկի ներքին իդենտիֆիկացման համարը պետք է համընկնի վարկային ռեգիստրի կոդի հետ:*
66. ***Վարկային ռեգիստրի կոդը*** - պարունակում է վարկատուի կոդը, վարկի մուտքագրման ամսաթիվը, վարկի հերթական համարը տվյալ օրվա սահմաններում: Առաջին անգամ մուտքագրելուց կոդը շնորհվում է համակարգի կողմից, իսկ դրանից հետո յուրաքանչյուր փոփոխության դեպքում հաշվետվությունը ներկայացնելիս՝ լրացվում է արդեն ձևավորված կոդը:
67. ***Տարբերակի հերթական համարը*** - լրացվում է վարկի տարբերակի հերթական համարը ընթացիկ ամսաթվի սահմաններում:
68. ***Վարկատուի կոդը*** - լրացվում է վարկատուի կոդը:
69. ***Մասնաճյուղի կոդը*** - լրացվում է վարկատուի տարածքային ստորաբաժանման կոդը:
70. ***Վարկային պայմանագրի համարը*** - լրացվում է վարկի պայմանագրի համարը՝ ըստ վարկատուի կողմից ընդունված համարակալման:
71. ***Վարկային պայմանագրի ամսաթիվը*** - լրացվում է վարկի պայմանագրի կնքման ամսաթիվը:
72. ***Վարկի տրամադրման ամսաթիվը (փաստացի)*** - լրացվում է վարկի փաստացի տրամադրման ամսաթիվը (չափաբաժիններով տրամադրման դեպքում՝ վերջին չափաբաժինը տրամադրելու ամսաթիվը):

73. ***Վարկի վերջնական մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)*** - լրացվում է վարկի մարման ամսաթիվն ըստ պայմանագրի: Մարման ժամկետի վերանայման դեպքում լրացվում է վերանայված ամսաթիվը: Վարկային քարտի, վարկային գծի կամ այլ դեպքերում, երբ մարման ամսաթիվ սահմանված չէ, ապա այս դաշտը չի լրացվում:
74. ***Վարկի փաստացի (մասնակի) մարման ամսաթիվը*** - լրացվում է փաստացի կատարված վերջին մարման ամսաթիվը: Այլ դեպքերում, երբ վարկառուի պարտավորությունը դադարում է վարկատուի նկատմամբ առանց փաստացի մարում իրականացնելու, լրացվում է պարտավորության դադարման ամսաթիվը:
75. ***Վարկի փոփոխության ամսաթիվը*** - լրացվում է վարկում փոփոխություն կատարելու ամսաթիվը:
76. ***Վարկի կարգավիճակը*** - եթե վարկը մարված է, կամ վարկառուի պարտավորությունը դադարած է վարկատուի նկատմամբ, լրացվում է՝ *մարված*, հակառակ դեպքում վարկը համարվում է գործող: «Վարկի կարգավիճակը» դաշտում լրացվում է «զիջված», եթե վարկատուի կողմից վարկառուի նկատմամբ պահանջի իրավունքը զիջվել է այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի:
77. ***Վարկի տեսակը*** - լրացվում է վարկի տեսակը՝ վարկ, վարկային գիծ, լիզինգ, ֆակտորինգ, երաշխիք, օվերդրաֆտ, վարկային քարտ, ակրեդիտիվ, ռեպո, սվոպ կամ սույն կարգով սահմանված այլ պարտավորություն:
78. **Տրամադրման աղբյուրը** - միջազգային ծրագրերի միջոցների հաշվին տրամադրված լինելու դեպքում լրացվում է՝ *միջազգային ծրագրով է*, հակառակ դեպքում լրացվում է՝ *միջազգային ծրագրով չէ*:
79. ***Վարկային ռիսկի դասը*** - Վարկի վարկային ռիսկի դասը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»: Վարկը արտահաշվեկշռից դուրս գրելու դեպքում լրացվում է՝ *«չհաշվառվող»*: Նշված կարգով չդասակարգվող վարկերի համար լրացվում է՝ *«չդասակարգվող»*: Այն դեպքում, երբ տվյալ վարկի վերաբերյալ առկա է դատարանի վճիռ, ըստ որի՝ չի ճանաչվել վարկատուի նկատմամբ վարկառուի պարտավորությունը, լրացվում է՝ *«վիճահարույց»*:
80. ***Վարկի օգտագործման ոլորտը*** - Վարկի օգտագործման ոլորտը որոշվում է ըստ վարկի գերակշռող մասի՝ տնտեսության որոշակի ճյուղում օգտագործելու հանգամանքի: Լրացվում է տնտեսության այն ճյուղը, որտեղ օգտագործվել է վարկի գերակշռող մասը:

    Սույն կարգի իմաստով տնտեսության ճյուղերն են.

    1) *A. Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն, այդ թվում՝*
        ա.(01.1/3) բուսաբուծություն
        բ.(01.4) անասնապահություն
        գ.(02) անտառային տնտեսություն և փայտամթերումներ
        դ.(03) ձկնորսություն և ձկնաբուծություն
    2) *B. Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում*
        ա.(07) մետաղական հանքաքարի արդյունահանում
        բ. (08.1-12) շինանյութի արդյունահանում
    3) *C. Մշակող արդյունաբերություն*
        ա.(10) սննդի արդյունաբերություն
        բ. (10.1) մսի մշակում և պահածոյացում
        գ. (10.3) մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում
        դ. (10.5) կաթնամթերքի արտադրություն
        ե. (10.7) հացի և ալյուրե հրուշակեղենի արտադրություն
        զ. (11) խմիչքների արդյունաբերություն
        է. (12) ծխախոտի արդյունաբերություն
        ը. (13+14) մանածագործական արտադրատեսակների և հագուստի արտադրություն
        թ. (15) կաշվե արտադրատեսակների արտադրություն
        ժ. (16+17) փայտանյութի, թղթի, փայտե և թղթե արտադրատեսակների արտադրություն (բացի կահույքից)
        ժա. (18) պոլիգրաֆիական գործունեություն
        ժբ. (20) քիմիական նյութերի արտադրություն
        ժգ. (21) դեղագործական արտադրատեսակների արտադրություն
        ժդ. (22) ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն
        ժե. (23) ոչ մետաղական արտադրատեսակների արտադրություն
        ժզ. (24) հիմնային մետաղների արտադրություն
        ժէ. (25) մետաղե պատրաստի արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորումներից
        ժը. (26+27) համակարգիչների, էլեկտրոնային, օպտիկական և էլեկտրական սարքավորումների արտադրություն
        ժթ. (31) կահույքի արտադրություն
        ի. (33) մեքենաների և սարքավորումների նորոգում և տեղակայում
    4) *D. Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում*
        ա. (35.1) էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում, այդ թվում էլեկտրաէներգիայի արտադրություն, փոխանցում և բաշխում
    5) *E. Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում*
    6) *F. Շինարարություն*
        ա. (41.2) բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն
        բ. (42.1) ճանապարհների և երկաթուղիների շինարարություն

7) *G. Առևտուր*
   ա. (45) ավտոմեքենաների, մոտոցիկլետների և դրանց պահեստամասերի առևտուր և նորոգում
   բ. (46) մեծածախ առևտուր
   գ. (47) մանրածախ առևտուր
8) *H. Փոխադրումներ և պահեստային տնտեսություն*
   ա. (49.32) տաքսու ծառայություններ
   բ. (49.4) ավտոճանապարհային բեռնափոխադրումներ և փոխադրման ծառայություններ
   գ. (51) օդային տրանսպորտի գործունեություն
   դ. (52.1) պահեստավորում և պահպանում
9) *I. Կեցության և հանրային սննդի կազմակերպում*
   ա. (55.1) հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ
   բ. (56) հանրային սննդի կազմակերպում
10) *J. Տեղեկատվություն և կապ*
   ա.(58) հրատարակչական գործ
   բ. (60) հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում
   գ. (61) հեռահաղորդակցություն
   դ. (62) համակարգչային ծրագրավորում և հարակից գործունեություն
11) *K. Ֆինանսական և ապահովագրական գործունեություն*
   ա.(65) ապահովագրական ընկերություններ
   բ. (66) ներդրումային ընկերություններ
   գ. (67) այլ ֆինանսական կազմակերպություններ
12) *L. Անշարժ գույքի հետ կապված գործունեություն*
   ա. (68.1) սեփականություն հանդիսացող անշարժ գույքի առք և վաճառք
13) *M. Մասնագիտական, գիտական և տեխնիկական գործունեություն*
   ա. (69) իրավաբանական և հաշվապահական գործունեություն
   բ. (71) ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն
   գ.(72) գիտական հետազոտություններ և մշակումներ
   դ.(73.1) գովազդային գործունեություն
14) *P. Կրթություն*
   ա. (85.4) բարձրագույն կրթություն
   բ. (85.5) այլ կրթական հաստատություններ
15) Q. *Առողջապահություն*
16) R. *Մշակույթ, զվարճություն, հանգիստ*
17) T. *Տնտեսության այլ ճյուղեր*
   ա.(32.1) ոսկերչական արտադրատեսակների և զարդերի արտադրություն
   բ. (79) զբոսաշրջություն
18) *Հիփոթեքային վարկեր*
   ա. (101) անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկեր
   բ. (102) անշարժ գույքի վերանորոգման հիփոթեքային վարկեր
   գ. (101.0) անշարժ գույքի շինարարության հիփոթեքային վարկեր
19) *Սպառողական վարկեր*
   ա.(103) քարտային վարկեր (վարկային քարտեր, օվերդրաֆտներ, վարկային գծեր)
   բ. (104) ավտովարկեր (ավտոմեքենաների ձեռքբերման վարկեր)
   գ. (105) կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկեր
   դ. (106) ոսկյա իրերի գրավադրմամբ վարկեր
   ե. (107) ավտոմեքենաների գրավադրմամբ վարկեր
   զ. (108) անշարժ գույքի գրավադրմամբ վարկեր
   է. (109) այլ սպառողական վարկեր:

81. ***Վարկի օգտագործման մարզը*** - վարկի օգտագործման վայր է այն մարզը, որտեղ օգտագործվում է վարկի գերակշիռ մասը: Լրացվում է մարզի անունը: Օտարերկրյա պետությունում օգտագործված լինելու դեպքում լրացվում է՝ *արտերկիր*: Վարկային քարտի դեպքում լրացվում է քարտի տրամադրման վայրը:
82. ***Վարկի պայմանների վերանայումների թիվը*** - համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ վերանայված լինելու դեպքում լրացվում է վերանայումների քանակն արտահայտող թիվը (քանի անգամ է վերանայվել), հակառակ դեպքում լրացվում է 0*:*
83. ***Մասհանման գումարը*** - լրացվում է վարկի գծով հատուկ պահուստին մասհանված գումարը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»:
84. ***Ժամկետանց օրերի քանակը*** - լրացվում է վարկի, դրա գծով տոկոսագումարների, մասնակի մարումների ժամկետանց օրերի քանակը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվակա-

նի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»: Այն դեպքերում, երբ «Վարկային ռիսկի դասը» դաշտում լրացված է «չհաշվառվող», «վիճահարույց» կամ «չդասակարգվող», ժամկետանց օրերի քանակը լրացվում է «0»: Եթե վարկը բավարարում է «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» 2.11 և /կամ 3.13 կետերի պայմանները, ժամկետանց օրերի քանակ դաշտը լրացվում է «0»:

85. ***Վերահայված օրերի քանակ -*** լրացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» 2.9 կետի համաձայն վերահայված օրերի քանակը: Այն դեպքում, երբ վերահայված վարկը բավարարում է վերոնշյալ կարգի 2.10.2 կետին, վերահայված օրերի քանակ դաշտը լրացվում է «0»:
86. ***Վարկի վերաբերյալ այլ նշումներ*** - լրացվում է վարկի մարման աղբյուրը կամ պարտավորության դադարման պատճառը (գրավի իրացման հաշվին, զիջման կամ ներման հետևանքով և այլն) և այլ էական օժանդակ տեղեկատվություն վարկի վերաբերյալ: «Վարկի վերաբերյալ այլ նշումներ» դաշտում լրացվում են նաև այդ իրավաբանական կամ ֆիզիկական անձի տվյալները (իրավաբանական անձ լինելու դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը և լրիվ անվանումը, իսկ ֆիզիկական անձ լինելու դեպքում՝ անձնագրի համարը, սոցիալական քարտի համարը (առկայության դեպքում), անունը, ազգանունը), եթե վարկատուի կողմից վարկառուի նկատմամբ պահանջի իրավունքը զիջվել է այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձին:
87. ***Վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների առկայությունը*** - լրացվում է վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների առկայությունը:
88. ***Վարկի վերջին դասակարգման ամսաթիվը*** - լրացվում է ըստ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի» դասի փոփոխության ամսաթիվը:
89. ***Վարկը ժամկետանց դառնալու ամսաթիվը -*** լրացվում է այն ամսաթիվը, որ օրվանից ժամկետանց են դարձել մայր գումարը կամ տոկոսները: Եթե մայր գումարը և տոկոսները ժամկետանց են դարձել տարբեր ամսաթվերին, ապա նշվում է դրանցից առաջինը: Ժամկետանց պարտավորություն չունենալու դեպքում դաշտը չի լրացվում:
90. ***Արժույթի կոդը -*** լրացվում է այն արժույթի կոդը, որով տրամադրվել է վարկը:
91. ***Պայմանագրով նախատեսված վարկի գումարը (սահմանաչափը) -*** լրացվում է պայմանագրով նախատեսված վարկի հիմնական գումարն այն արժույթով, որով տրամադրվում է վարկը:
92. ***Պայմանագրով նախատեսված վարկի փոփոխված գումարը (սահմանաչափ)*** - լրացվում է միայն վարկային քարտի, վարկային գծի և օվերդրաֆտի համար, եթե պայմանագրով նախատեսված է վարկի գումարի սահմանաչափի նվազում: Դաշտում լրացվում է վարկային քարտի, վարկային գծի և օվերդրաֆտի նոր (փոփոխված) սահմանաչափը:
93. ***Վարկի տարեկան տոկոսադրույքը -*** լրացվում է պայմանագրով նախատեսված տոկոսադրույքը (բարդ տոկոսի դեպքում հաշվարկվում է տարեկան գումարը տոկոսի գծով և հարաբերվում ընդհանուր գումարին՝ ստանալով միջին տոկոսադրույքը):
94. ***Փաստացի տրամադրված գումարը -*** լրացվում է փաստացի տրամադրված վարկի ամբողջ գումարը՝ համապատասխան արժույթով (կուտակային):
95. ***Փաստացի մարված գումարը*** - լրացվում է տվյալ ամսաթվի դրությամբ վարկի մարված ամբողջ գումարը (կուտակային):
96. ***Փաստացի մայր գումարի մնացորդը*** - լրացվում է վարկի մայր գումարի փաստացի մնացորդը:
97. ***Ժամկետանց մայր գումարի մնացորդը -*** լրացվում է վարկի պայմանագրով նախատեսված ժամկետին չմարված գումարը:
98. ***Ժամկետանց տոկոսը -*** լրացվում է վարկային պայմանագրով նախատեսված ժամկետին չմարված տոկոսը:
99. ***Տոկոսադրույքի տեսակը*** - լրացվում է վարկի տոկոսադրույքի տեսակը՝ լողացող կամ ֆիքսած:
100. ***Վարկի տոկոսի սուբսիդավորում*** - լրացվում է սուբսիդավորված է/սուբսիդավորված չէ:
101. ***Վարկի ապահովվածության տեսակը -*** լրացվում է՝
    1) ապահովված է՝ գրավով,
    2) ապահովված է՝ վարկառուի ֆինանսական հոսքերով (հաշվարկային հաշվի և դրամարկղային միջոցների շրջանառությամբ),
    3) ապահովված է՝ այլ,
    4) ապահովված է երաշխիք/երաշխավորությամբ,
    5) ապահովված չէ (բլանկային):
102. ***Գրավի գնահատված արժեքը (ըստ գրավի պայմանագրի)-*** լրացվում է ըստ գրավի պայմանագրի գրավի գնահատված ամբողջ արժեքը Հայաստանի Հանրապետության դրամով (արտարժույթով գնահատված լինելու դեպքում վերահաշվարկվում է պայմանագրի կնքման օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքով), եթե գրավը գնահատված չէ, լրացվում է՝ *0:*

103. ***Գրավի առարկան -*** լրացվում է գրավի առարկայի տեսակը.
    1) Բանկային ոսկի
    2) Ոսկու ստանդարտացված ծուլակտորներ
    3) Ոսկյա զարդեր և իրեր
    4) Այլ թանկարժեք մետաղներ
    5) Այլ թանկարժեք մետաղներից զարդեր և իրեր
    6) Թանկարժեք քարեր
    7) Հաշվարկային հաշիվ(ներ)
    8) Ժամկետային ավանդներ
    9) Այլ դրամական միջոցներ
    10) Դեբիտորական պարտքեր
    11) Բաժնետոմսեր
    12) Պետական արժեթղթեր
    13) Այլ արժեթղթեր
    14) Հումք, նյութեր, կիսաֆաբրիկատներ
    15) Պատրաստի արտադրանք պահեստում/վաճառակետերում
    16) Ապրանքներ պահեստում/վաճառակետերում
    17) Կենցաղային ապրանքներ (էլեկտրատեխնիկա, կազմ. տեխնիկա, կահույք և այլն)
    18) Այլ շրջանառու միջոցներ
    19) Ավտոմեքենա
    20) Մեքենաներ, սարքավորումներ, հոսքագծեր
    21) Գյուղտեխնիկա՝ կոմբայններ, տրակտորներ և այլն
    22) Շինարարական տեխնիկա՝ կռունկներ և այլն
    23) Այլ շարժական գույք
    24) Հող, հողատարածքներ
    25) Բնակարան
    26) Բնակելի առանձնատուն
    27) Ոչ բնակելի տարածք
    28) Այլ անշարժ գույք
    29) Այլ հիմնական միջոցներ
    30) Իրավունքի գրավ
    31) Աշխատավարձ
    32) Այլ գրավ
104. ***Գրավի վերաբերյալ այլ նշումներ -*** լրացվում են գրավի մանրամասն նկարագիրը, պետական մարմնում գրանցված լինելու դեպքում23 սեփականության վկայականի համարը (անշարժ գույքի դեպքում) և գրավի վկայականի համարը, ինչպես նաև այլ էական տեղեկություններ գրավի վերաբերյալ: Գրավի վկայականի տվյալները վարկային ռեգիստրին են տրամադրվում այն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:
105. ***Գրավի արժույթի կոդը -*** լրացվում է այն արժույթի կոդը, որով ներկայացված է գրավի արժեքը:
106. ***Վարկի ներքին իդենտիֆիկացման համարը -*** լրացվում է երաշխավորված վարկի եզակի իդենտիֆիկացման համարը:
107. ***Երաշխավորի ներքին իդենտիֆիկացման համարը -*** լրացվում է երաշխավորի եզակի իդենտիֆիկացման համարը:
108. ***Երաշխավորի իրավական կարգավիճակը -*** լրացվում է երաշխավորող անձի կարգավիճակը՝ իրավաբանական անձ, ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր: Եթե երաշխավորը Հայաստանի Հանրապետության պետական և/կամ գերատեսչական մարմին է, ապա երաշխավորության և երաշխավորողի վերաբերյալ ոչ մի տվյալ չի լրացվում:
109. ***Երաշխավորի անունը / անվանումը -*** լրացվում է՝
    1) իրավաբանական անձ լինելու դեպքում՝ երաշխավորի լրիվ անվանումը և կազմակերպական-իրավական տեսակը: Երաշխավորի կազմակերպական-իրավական տեսակը լրացվում է կրճատ, օրինակ՝ *ԲԲԸ:*
    2) ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում՝ երաշխավորի անունը:
110. ***Երաշխավորի ազգանունը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ազգանունը:
111. ***Երաշխավորի հայրանունը -*** լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հայրանունը:
112. ***Երաշխավորի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) ՀՎՀՀ*** - լրացվում է երաշխավորի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ):
113. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի համարը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի սերիան և համարը:
114. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի տրման ամսաթիվը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագրի տրման ամսաթիվը:
115. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագիրը ում կողմից է տրվել*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձնագիրը տվող մարմնի կոդը:
116. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ծննդյան ամսաթիվը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) ծննդյան ամսաթիվը:

117. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սեռը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սեռը՝ արական կամ իգական:
118. ***Մարզի կոդը -*** լրացվում է այն մարզի կոդը, որտեղ գտնվում կամ բնակվում է երաշխավորը:
119. ***Երաշխավորի գտնվելու կամ բնակության վայրը -*** լրացվում է երաշխավոր իրավաբանական անձի գտնվելու վայրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ բնակության վայրը (երկիրը, մարզը, բնակավայրը, փողոցը, շենքի և բնակարանի համարը):
120. ***Երաշխավորության գումարը*** - լրացվում է երաշխավորության գումարը Հայաստանի Հանրապետության դրամով: Եթե երաշխավորությունը տրամադրված է արտարժույթով, վերահաշվարկը կատարվում է երաշխավորության պայմանագրի կնքման օրվա՝ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:
121. ***Երաշխավոր կազմակերպության սեփականության ձևը -*** կախված երաշխավոր իրավաբանական անձի կանոնադրական կամ բաժնեհավաք կապիտալում 50 տոկոսից ավելի կամ մնացածի նկատմամբ գերակշռող մասնակցություն ունենալուց՝ լրացվում է տվյալ սեփականության ձևը, համապատասխանաբար՝ *պետական, մասնավոր* և *օտարերկրյա*: Ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր լինելու դեպքում լրացվում է՝ *այլ*:
122. ***Երաշխավորի ռեզիդենտությունը -*** երաշխավորի ռեզիդենտ լինելու դեպքում լրացվում է՝ *ռեզիդենտ*, ոչ ռեզիդենտ լինելու դեպքում՝ *ոչ ռեզիդենտ*:
123. ***Երաշխավորի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) գործունեության ոլորտը*** - լրացվում է երաշխավորի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) գործունեության ոլորտը:
124. ***Երաշխավորի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման համարը*** - լրացվում է երաշխավոր կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման համարը:
125. ***Երաշխավորի (կազմակերպություն կամ անհատ ձեռնարկատեր) պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման ամսաթիվը*** - լրացվում է երաշխավոր կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական ռեգիստրում գրանցման կամ հաշվառման ամսաթիվը:
126. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող հին փաստաթղթի համարը -*** լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող հին փաստաթղթի համարը:
127. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը) -*** լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը):
128. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սոցիալական քարտ չունենալու/հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը -*** լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) սոցիալական քարտ չունենալու/հանրային ծառայության համարանիշ չստանալու մասին տեղեկանքի համարը հանրային ծառայության համարանիշ (սոցիալական քարտ) չունենալու դեպքում:
129. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի համարը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի համարը:
130. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի տրման ամսաթիվը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտի տրման ամսաթիվը:
131. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտը ում կողմից է տրվել*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) նույնականացման քարտը տվող մարմնի կոդը:
132. ***Երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող այլ փաստաթղթի համարը*** - լրացվում է երաշխավորի (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր) անձը հաստատող այլ փաստաթղթի համարը:
133. ***Երաշխավոր կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը (անուն, ազգանուն) -*** լրացվում է երաշխավոր կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անունը, ազգանունը:
134. ***Երաշխավոր կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի համարը -*** լրացվում է երաշխավոր կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարի անձը հաստատող փաստաթղթի համարը:
135. ***Այլ նշումներ երաշխավորի վերաբերյալ -*** լրացվում է երաշխավորի վերաբերյալ այլ էական տեղեկատվություն:

Հավելված 2

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշմամբ

Հավելված 3

Վարկային ռեգիստրի կողմից վարկառուներին տրամադրվող տեղեկատվություն

	1	2
1	Վարկառուի անվանումը/անունը, ազգանունը	
2	ՀՎՀՀ կամ անձը հաստատող փաստաթղթի համարը	
3	Ֆիզիկական անձի հին անձնագրի տվյալները	
4	Ֆիզիկական անձի հանրային ծառայության համարանիշը (սոցիալական քարտի համարը)	
5	Վարկառուի ռեզիդենտությունը	
6	Վարկ տրամադրած վարկատուների քանակը	
7	Ամերիկայի Միացյալ Նահանգների դոլար/Հայաստանի Հանրապետության դրամ փոխարժեքը /ամսաթիվը	
8	Նախորդ 3 ամսվա ընթացքում հաճախորդի վերաբերյալ կատարված հարցումների քանակը	

ՀՀ դրամ

Գործող	Հերթական համար	Բանկի անվանում	Ստացված վարկի մնացորդը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի միջին տոկոսադրույքը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը	Ստացված վարկերի ընդհանուր գումարը
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
	1																						
	2																						
	...																						
			x	x	x	x						x		x	x	x	x	x	x	x	x	x	x
			1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
Սառված	1																						
	2																						
	...																						
			x	x	x	x						x		x	x	x	x	x	x	x	x	x	x

Տրամադրված երաշխավորություններ

Գործող	Հերթական համար	Երաշխավորության գումարը	Վարկի տրամադրման ամսաթիվը	Վարկի մարման ամսաթիվը (ըստ պայմանագրի)
		1	2	3
	1			
	2			
	...			
			x	x

Վարկառուի հետ փոխկապակցված անձանց պարտավորությունները բանկային համակարգի նկատմամբ

1	Վարկերի քանակը	
2	այդ թվում՝ ժամկետանց	
3	Ընդհանուր գումարը	
4	այդ թվում՝ ժամկետանց	

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԵԼՎԱԾ 3-Ի ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ելքային տվյալները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության արժույթով:
2. Այն կետերը, որոնք ներառված են մուտքային հաշվետվության ձևերում, լրացվում են ըստ մուտքային տվյալների լրացման կարգի:
3. Հավելված 3-ի 6-րդ տողում լրացվում է տվյալ վարկառուին վարկ տրամադրած և այդ վարկառուի կողմից որևէ վարկի դիմաց երաշխավորություն ստացած վարկատուների քանակը:
4. Հավելված 3-ի 7-րդ տողում լրացվում է հաշվետվության ձևավորման օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության դրամ/ԱՄՆ դոլար Կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքը:
5. Հավելված 3-ի 10-րդ սյունակում լրացվում է վարկի ապահովվածության տեսակը:
6. Հավելված 3-ի 16-րդ սյունակում լրացվում է վերանայումների քանակը:
7. Հավելված 3-ի 17-րդ սյունակում լրացվում է վարկը տրամադրած վարկատուի կարգավիճակը՝ «լուծարված է», «գտնվում է լուծարման փուլում» կամ «գործող»:
8. Հավելված 3-ի 18-րդ սյունակում լրացվում է տվյալ վարկի գծով տվյալների վերջին փոփոխության ամսաթիվը:
9. Հավելված 3-ի 19-րդ սյունակում լրացվում է վարկի գծով հաշվարկված տույժերի և տուգանքների առկայությունը:
10. Հավելված 3-ի 20-րդ սյունակում լրացվում է վարկի վերջին դասակարգման ամսաթիվը:
11. Հավելված 3-ի «Տրամադրված երաշխավորություններ» աղյուսակը լրացվում է այն դեպքում, երբ վարկառուն որևէ վարկատուի տրամադրած երաշխավորություն ունի: Յուրաքանչյուր երաշխավորություն լրացվում է առանձին՝ մեկ տողով:
12. Հավելված 3-ի 2-րդ սյունակում լրացվում է այն վարկի տրամադրման ամսաթիվը, որի դիմաց տրվել է երաշխավորությունը:
13. Հավելված 3-ի 3-րդ սյունակում լրացվում է այն վարկի մարման ամսաթիվն ըստ պայմանագրի, որի դիմաց տրվել է երաշխավորությունը:
14. Հավելված 3-ի «Վարկառուի հետ փոխկապակցված անձանց պարտավորությունները բանկային համակարգի նկատմամբ» աղյուսակը լրացվում է ըստ վարկային ռեգիստրի տվյալների բազայում առկա փոխկապակցված անձանց կողմից ստացված և չմարված վարկերի վերաբերյալ հավելված 1-ի տվյալների:
15. Հավելված 3-ի 1-ին տողում լրացվում է փոխկապակցված անձանց կողմից ստացված և չմարված վարկերի քանակը:
16. Հավելված 3-ի 2-րդ տողում լրացվում է 1-ին տողում լրացված վարկերից ժամկետանց վարկերի քանակը:
17. Հավելված 3-ի 3-րդ տողում լրացվում է 1-ին տողում լրացված վարկերի գումարը:
18. Հավելված 3-ի 4-րդ տողում լրացվում է 2-րդ տողում լրացված վարկերի ժամկետանց գումարը:

Հավելված 3

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշմամբ

Հավելված 4

Վարկային ռեգիստրի կողմից վարկատուներին տրամադրվող պարբերական տեղեկատվություն

Ամսաթիվ _____ /_____/

Վարկատուի կոդը _____/

	Հաճախորդ					Վարկեր, որտեղ հաճախորդը վարկառու է							Վարկեր, որտեղ հաճախորդը երաշխավորող է							
	Հ/Հ կամ ամբող հասցեատող կառուցվածքի համարը	Ֆիզիկական անձի ծննդյան ամսաթիվ	Ֆիզիկական անձի հաշվառման կամ գրանցման վայրի համայնքի կամ բնակավայրի անվանում (ամբողջական կոդավորված տեսքով)	Անուն (անվանում)	Ազգություն	Վարկերի քանակ	Ընդհանուր գումար	Մարված գումար	Փաստացի ընթացող	Ժամկետը լրացած	Ժամկետը լրացած	Անգործող ընդհանուր գումար	Երաշխավորությունների գումար	Վարկերի քանակ	Ընդհանուր գումար	Մարված գումար	Փաստացի ընթացող	Ժամկետը լրացած	Ժամկետը լրացած	Անգործող ընդհանուր գումար
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1																				
2																				
3																				
4..																				

ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԵԼՎԱԾ 4-Ի ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Լրացվում է տվյալ վարկատուի բոլոր վարկառուների վերաբերյալ, որոնք չմարված պարտավորություններ ունեն տվյալ վարկատուին, և որոնց մասին վարկային ռեգիստրում առկա է տեղեկատվություն: Հավելվածը լրացվում է ըստ մուտքային հավելվածների տվյալների:

Հավելված 4

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշմամբ

Հավելված 6

Վարկային ռեգիստրից հաճախորդի մասին տեղեկատվություն ստանալու դիմում
(հաճախորդի կողմից)

1	Ամսաթիվը	
2	Հայտի հերթական համարը	
3	Պահանջվող տեղեկատվության տեսակը	
4	ՀՎՀՀ կամ անձը հաստատող փաստաթղթի համարը	
5	*Ֆիզիկական անձի հին անձնագրի տվյալները (առկայության դեպքում)*	
6	*Ֆիզիկական անձի հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական համարը)*	
7	Հաճախորդի կարգավիճակը (ֆիզիկական անձ/ իրավաբանական անձ)	
8	Հաճախորդի անունը (իրավաբանական անձանց անվանումը)	
9	Հաճախորդի ազգանունը	
10	Հաճախորդի հայրանունը	
11	Բնակության վայրը (իրավաբանական անձանց համար՝ գտնվելու վայրը)	

Հաճախորդի (իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարի) ստորագրությունը

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության նվազագույն ցանկը սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով վարկային ռեգիստրի և վարկային բյուրոների համար սահմանել բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող տեղեկատվության միասնական հաշվետվական ձև,

հաշվի առնելով Համաշխարհային բանկի կողմից առաջարկված «Զարգացման քաղաքականության գործառնությունների ծրագրի» պահանջները,

հիմք ընդունելով «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Վարկային բյուրոներին տրամադրվող վարկային տեղեկատվության նվազագույն ցանկը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի մարտի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
10 հոկտեմբերի 2013 թ., N 231-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 231-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից վարկային բյուրոներին (այսուհետ՝ Բյուրո) տրամադրվող տեղեկատվությունը սահմանված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի մարտի 29-ի թիվ 142-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգի՝ վարկային ռեգիստրի ստեղծման և վարկային ռեգիստրին Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի մասնակցության կարգով» (այսուհետ՝ Կարգ):

2. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը Բյուրոյին տեղեկատվություն տրամադրում են Վարկային ռեգիստրին տրամադրվող տեղեկատվության նույն ձևաչափով՝ համաձայն Կարգի:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի կողմից Բյուրոյին տրամադրվող տվյալների անվանումների և ֆորմատների նկատմամբ պահանջները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հոկտեմբերի 1-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.12.2013 թ. (ՀՀԳՏ N34 (478)[1], 23.12.2013):

*2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 340Ա որոշմամբ հաստատված արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2014 թվականի հունվարի 13-ից շրջանառության մեջ դնել 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
31 հոկտեմբերի 2013 թ., N 241-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 241-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հոկտեմբերի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.12.2013 թ. (ՀՀԳՏ N34 (478)[1], 23.12.2013):

5) *Դրամի բնութագիրը*

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) *2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները*





2. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) *Դրամի դիմերեսին* պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) *Դրամի դարձերեսին* պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) *Դրամի բնութագիրը*

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) *2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները*





3. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) ***Դրամի բնութագիրը***

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

6) ***2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները***





4. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) *Դրամի բնութագիրը*

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) ***2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները***





5. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) *Դրամի բնութագիրը*

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) *2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները*





6. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) *Դրամի դիմերեսին* պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) *Դրամի դարձերեսին* պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) *Դրամի բնութագիրը*

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) *2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները*



7. 2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) *Դրամի դիմերեսին* պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2014»: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵ-ՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) *Դրամի դարձերեսին* պատկերված է Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) *Դրամի բնութագիրը*

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

6) *2014 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները*



«Սուրբ Գեղարդ» հուշադրամը շրջանառության մեջ դնելու և դրա նկարագրությունը հաստատելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2013 թվականի դեկտեմբերի 24-ից շրջանառության մեջ դնել «Սուրբ Գեղարդ» հուշադրամը:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամի նկարագրությունը, որը հուշադրամի էսքիզների հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
31 հոկտեմբերի 2013 թ., N 242-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի
խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 242-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ» ՀՈՒՇԱԴՐԱՄԻ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի թանգարանում պահվող Սուրբ Գեղարդին նվիրված հուշադրամ:

Հուշադրամի դիմերեսին պատկերված է ՀՀ զինանշանը: Զինանշանից ներքև հուշադրամի անվանական արժեքն է՝ «1000 դրամ dram» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, իսկ աջ եզրագծով ուղղահայաց մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»:


Հուշադրամի դարձերեսին պատկերված է Սուրբ Գեղարդը արծաթե պահարանում: Վերևի եզրագծով «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ HOLY ETCHMIADZIN» մակագրություններն են և «է» տառը: Ներքևի եզրագծով հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2013, ՌՆԿԲ» և նախշեր: Աջ և ձախ եզրագծերով ուղղահայաց մակագրված են «HOLY LANCE» և «ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴ»:

Հուշադրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ 925^0
Քաշը	25,0 գ
Չափը	27,0x47,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	մինչև 2500 հատ

Հուշադրամը հատվել է Գերմանիայի «Մայեր» դրամահատարանում:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հոկտեմբերի 29-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.12.2013 թ. (ՀՀԳՏ N34 (478)[1], 23.12.2013):





ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին**

Հաշվի առնելով ապահովագրական և վերապահովագրական ընկերությունների միջև համագործակցության ներկայիս փորձը,

Նպատակ ունենալով մեղմացնել ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների համագործակցության հետ կապված դժվարությունները,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. նոյեմբերի 12-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N34 (478)[1], 23.12.2013):

հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողներին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ի 27.1-րդ կետի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27.1. Սույն կանոնակարգի Հավելված 2-ի Աղյուսակ 1-ի 31-րդ կետի համաձայն 400% ռիսկի կշռին համապատասխանող վերաապահովագրողի պարտավորությունը Ն3 նորմատիվի հաշվարկից կարող է մինչև 2015 թվականի հունվարի 1-ը նվազեցվել 100%-ով, 2015 թվականի հունվարի 1-ից մինչև 2016 թվականի հունվարի 1-ը՝ 80%-ով, 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի հունվարի 1-ը՝ 60%-ով, եթե բավարարված է հետևյալ պայմաններից որևէ մեկը.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
15 նոյեմբերի 2013 թ., N 255-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին մասնակցին տրամադրվող տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ը հաստատելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազեցնել պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրի վարման ծախսերը, միևնույն ժամանակ չվտանգելով պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների իրավունքները,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը և 39-րդ հոդվածի 2-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի անունից կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ ընտրելու մասին մասնակցին տրամադրվող տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները» կանոնակարգ 8/05.1-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 289-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 20-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 289-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 8/05.1

ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՈՒՆԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակցի կողմից կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարելու դեպքում պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների ռեեստրը վարողի կողմից գրավոր տեղեկացման ենթակա տեղեկատվությանը ներկայացվող ընդհանուր պահանջները:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունները՝

գրավոր տեղեկացում՝նամակով փոստային առաքման միջոցով տեղեկացում,

հաշվի Օպերատոր՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2012 թվականի օգոստոսի 16-ի «Հաշվի օպերատորների գործառույթ իրականացնող կազմակերպությունների ցանկը սահմանելու մասին» թիվ 1021-Ն որոշմամբ սահմանված կազմակերպություն, որը մասնակիցների ռեեստրը վարողի հետ կնքած պայմանագրի համաձայն՝ միջնորդավորում է մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակիցներին մատուցվող ծառայությունները,

օրենք՝«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՄԱՍՆԱԿՑԻ ԱՆՈՒՆԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՆԵԼԸ

4. Մասնակիցների ռեեստրը վարողը օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գրավոր տեղեկացումը կենսաթոշակային ֆոնդի ընտրություն չկատարած մասնակցին է ուղարկում Հայաստանի պարտադիր կենսաթոշակային տեղեկատվական համակարգում առկա հասցեով:

ԳԼՈՒԽ 4. ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՑՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Գրավոր տեղեկացումը ներկայացվում է սույն կանոնակարգի Հավելված 1-ով սահմանված ձևով (այսուհետ՝ նամակ): Մասնակիցների ռեեստր վարողը կարող է փոփոխել նամակի ձևը և դիզայնը, ինչպես նաև այն համապատասխանեցնել իր ներքին իրավական ակտերով սահմանված պահանջներին, սակայն նամակը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը.

1) մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը, փոստային հասցեն(երը), հեռախոսահամար(ներ)ը, ինտերնետային կայքի հասցեն, էլեկտրոնային հասցեն(երը) և այլ կապի միջոցներ,
2) տեղեկացման նպատակը,
3) տեղեկացում այն մասին, թե որտեղից մասնակիցը կարող է ավելի մանրամասն ծանոթանալ ընտրված կենսաթոշակային ֆոնդի կառավարչի և կենսաթոշակային ֆոնդի մասին,
4) հաշվի օպերատորների ցանկը,
5) հղում «Իմ հաշիվը» ինտերնետային էջին,
6) տեղեկացում մասնակիցների ռեեստրը վարողի կողմից մասնակցին տրամադրվող կենսաթոշակային հաշվի վերաբերյալ նախորդ տարվա հաշվետվության՝ ստանալու եղանակի ընտրության վերաբերյալ:

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 289-Ն որոշման

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ ՎԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԿԱՏԱՐԱԾ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի հարգելի մասնակից,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ձեզ համար պատահականության սկզբունքով ընտրվել է կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ և կենսաթոշակային ֆոնդ, քանի որ Դուք համապատասխան ընտրություն չեք կատարել: Այս նամակով մենք չենք հայտնում Ձեզ համար ընտրված կենսաթոշակային կառավարչի և ֆոնդի անվանումները, քանի որ այն հանդիսանում է գաղտնի տեղեկատվություն:

Ինչպե՞ս կարող եմ տեղեկանալ ինձ համար ընտրված ֆոնդի և կառավարչի մասին:

Ձեզ համար ընտրված կառավարչին և ֆոնդին ծանոթանալու համար Դուք կարող եք՝

1. այցելել հաշվի օպերատորին կամ
2. մուտք գործել www.epension.am ինտերնետային կայքի «Իմ հաշիվը» ինտերնետային էջը կամ
3. օգտվել բանկոմատներից վճարային քարտերի միջոցով, եթե ունեք այդպիսին:

Ի՞նչ կլինի, եթե ես որևէ գործողություն չեմ կատարում:

Մինչև 2015 թ. ապրիլի 15-ը Դուք կստանաք 2014 թ. համար Ձեր կենսաթոշակային հաշվի վերաբերյալ հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) թղթային եղանակով՝ Ձեր գործատուի կողմից տրամադրված փոստային հասցեով: Հաշվետվությունը ներառելու է անձնական (գաղտնի) տեղեկություններ, ուստի կարևոր է, որ Դուք համոզված լինեք, որ գործատուի կողմից տրամադրված հասցեն Ձեզ համար նախընտրելի է:

Ինչպե՞ս ճշտեմ կամ հաստատեմ իմ գտնվելու (բնակության) վայրը:

Դուք կարող եք մինչև 2014 թ. դեկտեմբերի 31-ը ցանկացած ժամանակ հաշվի օպերատորի կամ «Իմ հաշիվը» ինտերնետային էջի միջոցով հաստատել Ձեր փոստային հասցեն և ընտրել տարեկան հաշվետվություն ստանալու Ձեզ համար նախընտրելի եղանակը՝ թղթային կամ էլեկտրոնային: Հաշվի օպերատորին այցելելիս լրացրեք սույն նամակի Հավելվածը և ներկայացրեք այն:

Նշենք նաև, որ հաշվետվության ստացման ամենահարմարավետ եղանակը համարվում է էլեկտրոնային եղանակը, քանի որ զերծ է թղթային տեղեկատվության պահպանման և կորստի ռիսկերից և ապահովում է Ձեր կենսաթոշակային հաշվի անվտանգությունը:

Հավելված

Անուն Ազգանուն *Հանրային ծառայությունների համարանիշ*

ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵ

☐ _____

(էլեկտրոնային փոստի հասցե)

ԿԱՄ

☐ _____

(փոստային հասցե)

Ի՞նչ պարբերականությամբ կարող եմ ստանալ հաշվետվությունը հետագայում:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունը Դուք ստանում եք տարեկան կտրվածքով, իսկ թղթային եղանակը նախընտրելու դեպքում ստանում եք յուրաքանչյուր տարի տարեկան հաշվետվությունը ստանալու դիմումը լրացնելուց հետո:

Ի՞նչ արժե տարեկան հաշվետվությունը:

Հաշվետվությունը տարին մեկ անգամ անվճար տրամադրվելու է Ձեզ:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ մանրամասն տեղեկություններ:

1. Այցելելով հետևյալ կայքերից որևէ մեկը՝ www.abcfinance.am, epension.am
2. Զանգահարելով 114 (մարզերից՝ 08000 114) թեժ գիծ հեռախոսահամարին:

Մասնակիցների ռեեստրը վարողի անվանումը, փոստային հասցեն(երը),
հեռախոսահամար(ներ)ը, ինտերնետային կայքի հասցեն,
էլեկտրոնային հասցեն(երը)
և այլ կապի միջոցներ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազեցնել բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների ծախսատարությունը և խթանել Հայաստանի Հանրապետության դրամով միջոցների հասանելիությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետը, 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի 24-րդ կետում «4» թիվը փոխարինել «2» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի փետրվարի 12-ից և տարածվում է 2014 թվականի փետրվարի 12-ից 2014 թվականի մարտի 11-ն ընկած և դրան հաջորդող հաշվետու ժամանակահատվածների համար (ըստ պահուստավորման օրացույցի) բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում իրականացման ենթակա պարտադիր պահուստավորման հետ կապված հարաբերությունների վրա: 2014 թվականի հունվարի 15-ից 2014 թվականի փետրվարի 11-ն ընկած հաշվետու ժամանակահատվածի համար բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց 2014 թվականի փետրվարի 12-ից 2014 թվականի մարտի 11-ն ընկած ժամանակահատվածում տեղաբաշխման ենթակա պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 4 տոկոսի չափով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 299-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

*«Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/13-ը հաստատելու մասին**

Հաշվի առնելով, որ ներդրումային ֆոնդի կառավարիչը կարող է իր անունից պատվիրակել կառավարչական գործառույթների մի մասը, իսկ պահառուն իր գործառույթների մի մասը կամ ֆոնդի ակտիվների մի մասի պահառության իր բոլոր գործառույթները երրորդ անձին՝ իր գործարար գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, որի համար պահանջվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը,

Նպատակ ունենալով ապահովել կառուցակարգ, որը կզսպի պատվիրակման հետ կապված ռիսկերը՝ հաշվի առնելով պատվիրակվող գործառույթների էությունը և դրանց կարևորությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ մասերը, 89-րդ հոդվածի 7-րդ մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակմանը նախնական համաձայնության տրամադրման համար ներկայացվող փաստաթղթերը, դրանց ներկայացման կարգը, նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանները» կանոնակարգ 10/13-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 300-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 300-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵՎ ՊԱՀԱՌՈՒԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ,ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/13

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է.
   1) ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակման նպատակով նախնական համաձայնություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դրանց բովանդակությունը, ներկայացման կարգն ու ձևը,
   2) ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակման նախնական համաձայնության տրամադրման կարգն ու պայմանները,
   3) ներդրումային ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների առավելագույն մասը, որի նկատմամբ ներդրման կառավարման գործառույթը կարող է պատվիրակվել:
2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների, օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարիչների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ստեղծված մասնաճյուղերի, ներդրումային ֆոնդի պահառուների, ինչպես նաև ցանկացած այլ անձանց վրա, որոնք հանդես են գալիս կամ մտադրություն ունեն իրականացնելու ներդրումային ֆոնդի կառավարչի (պահառուի) կողմից իրենց պատվիրակված գործառույթները վերջինիս հետ կնքված (կնքվելիք) պատվիրակման (ենթապահառության) պայմանագրի հիման վրա:
3. Այն գործառույթները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով պարտադիր հանձնման են ենթակա այլ անձի (իրականացվում են այլ անձի կողմից), չեն հանդիսանում սույն կանոնակարգի կարգավորման առարկա:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
   1) ***«պատվիրակող»***՝ կառավարիչ կամ պահառու, որը պատվիրակում է իր գործառույթների մի մասը (պահառուի դեպքում նաև ֆոնդի ակտիվների մի մասի պահառության իր բոլոր գործառույթները) երրորդ անձին (անձանց).
   2) ***«կոնտրագենտ»***՝ անձ (ենթապահառու), որը կառավարչի (պահառուի) հետ գործառույթների պատվիրակման (ենթապատվիրակման) պայմանագիր է կնքել կամ կնքելու մտադրություն ունի:
   3) ***«Օրենք»***՝«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:
5. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող իմաստները:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ (ՊԱՀԱՌՈՒԻ) ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

6. Կառավարիչը ֆոնդի կառավարման գործառույթների պատվիրակման նպատակով նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
   1) պատվիրակման թույլտվության միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
   2) պատվիրակման պայմանագրի նախագծի պատճեն, որը ներառում է սույն կանոնակարգի 4-րդ գլխով սահմանված պայմանները,
   3) գործառույթների պատվիրակման անհրաժեշտության հիմնավորումը, որը պետք է ներառի նվազագույնը հետևյալ դրույթները. գործառույթների և պրոցեսների օպտիմալացում, ծախսերի խնայողություն, կոնտրագենտի փորձառության առկայություն որոշակի շուկայում, կոնտրագենտի մուտքի հնարավորություն գլոբալ առևտրային շուկաներում և այլն,
   4) հիմնավորում, որ պատվիրակված գործառույթներն իրականացնելու համար կոնտրագենտն ունի բավարար կազմակերպական, տեխնիկական, ֆինանսական ռեսուրսներ, մասնագիտական որակ, փորձառություն, աշխատակիցների լավ համբավ (չլինեն դատված, դատական վարույթների և (կամ) քրեական/վարչական պատժամիջոցների բացակայություն և այլն),
   5) տվյալ գործառույթի իրականացման թույլտվությունը վկայող փաստաթուղթ (լիցենզիա), եթե տվյալ գործառույթի իրականացումը օրենսդրությամբ (օտարերկրյա կոնտրագենտի դեպքում՝ օտարերկրյա կոնտրագենտի գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ) պահանջում է իրավասու մարմնի թույլտվություն (լիցենզիա), հակառակ դեպքում՝ հայտարարություն, որ պատվիրակվող գործառույթները իրականացնելու համար օրենսդրությամբ լիցենզիա կամ հատուկ այլ թույլտվություն չի պահանջվում,

6) հիմնավորում, որ պատվիրակման արդյունքում անհնարին չի դառնա կառավարչի և պահառուի նկատմամբ պատշաճ (արդյունավետ) վերահսկողության իրականացումը,
7) հիմնավորում, որ կոնտրագենտի և պատվիրակողի, ֆոնդի կամ ֆոնդի մասնակիցների միջև շահերի բախում չի առաջանա,
8) պատվիրակողի աշխատակիցների ցուցակը, կապի միջոցները և կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք պատասխանատու են լինելու կոնտրագենտի հետ համագործակցության և կոնտրագենտի նկատմամբ վերահսկողության իրականացման համար, այս անձանց իրավունքների ու պարտականությունների մանրամասն նկարագիրը,
9) պատվիրակման արդյունքում պատվիրակողի գործունեության մեջ կատարվելիք նշանակալից փոփոխությունները:

7. Կենտրոնական բանկը կարող է պահանջել այլ տեղեկատվություն՝ սույն կանոնակարգի 6-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

8. Եթե նախկինում պատվիրակվող որևէ գործառույթի համար Կենտրոնական բանկ ներկայացվել են սույն կանոնակարգի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերից որևէ մեկը, ապա հետագայում որևէ այլ գործառույթի պատվիրակման համար Կենտրոնական բանկ կարող են չներկայացվել այդ փաստաթղթերը (եթե տվյալ փաստաթղթերում ներառվող տեղեկությունները չեն փոփոխվել):

9. Եթե սույն կանոնակարգի 6-րդ կետով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ մինչև Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար պատվիրակման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին որոշման կայացումը, ներկայացված փաստաթղթերում կատարվել են փոփոխություններ, ապա պատվիրակողը փոփոխված փաստաթղթերը Կենտրոնական բանկ է ներկայացնում համապատասխան փոփոխությունները տեղի ունենալու մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար պատվիրակման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին որոշման կայացումը: Իսկ պատվիրակմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին որոշման կայացումից հետո պատվիրակողը Կենտրոնական բանկ է ներկայացնում սույն կանոնակարգի 6-րդ կետի 8-րդ ենթակետում նշված տեղեկությունների փոփոխությունները յուրաքանչյուր փոփոխության դեպքում՝ փոփոխության մասին տեղեկանալու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրերի ընթացքում:

10. Սույն գլխով սահմանված պահանջները տարածվում են պահառուի կողմից իր գործառույթների պատվիրակման նպատակով ենթապահառության պայմանագրի կնքմանը նախնական համաձայնության ընթացակարգի վրա (ըստ կիրառելիության):

ԳԼՈՒԽ 4. ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ (ԵՆԹԱՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ) ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

11. Պատվիրակման (ենթապահառության) պայմանագիրը կնքվում է գրավոր ձևով, որը, ի լրումն Օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պայմանների, ներառում է նաև հետևյալ պայմանները.

1) գործառույթի պատվիրակման ժամկետը,
2) պատվիրակողի և կոնտրագենտի իրավունքներն ու պարտականությունները (կոնտրագենտի նկատմամբ ստուգումներ իրականացնելու, գրանցամատյաններին մուտք ունենալու, տարածք գործելու պատվիրակողի իրավունքը և այլ իրավունքներ),
3) պատվիրակողի վերաբերյալ տեղեկությունների գաղտնիության ապահովման կոնտրագենտի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարտավորությունը,
4) պատվիրակողի տեղեկատվական համակարգերի անվտանգության ապահովման կոնտրագենտի պարտավորությունը (եթե պատվիրակված գործառույթը դա պահանջում է),
5) դրույթ կոնտրագենտի պարտավորության վերաբերյալ, համաձայն որի կոնտրագենտը պետք է անհապաղ տեղեկացնի պատվիրակողին այն դեպքերի մասին, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ պատվիրակված գործառույթների՝ արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացման հնարավորության վրա,
6) պատվիրակման պայմանագրի լուծման համար հիմք հանդիսացող դեպքերը (կոնտրագենտի անվճարունակության, լուծարման կամ սնանկ ճանաչվելու, սեփականատերերի փոփոխության, պատվիրակված գործառույթների կատարման նկատմամբ պահանջները չկատարելու, պատվիրակված գործառույթների ոչ լավ կատարողականի դեպքում և այլ դեպքերում),
7) պատվիրակման պայմանագրի լուծման ուժի մեջ մտնելու և ֆոնդի մասնակիցների վերաբերյալ տվյալների վերադարձի իրականացման կարգն ու ժամկետը,
8) վեճերի լուծման մեխանիզմները, ներառյալ այն դեպքերը, թե որ երկրի օրենսդրությունն է տարածվում դատական գործի նկատմամբ, եթե կոնտրագենտն օտարերկրյա կազմակերպություն է,
9) ֆոնդի ակտիվների ներդրման կառավարման գործառույթի պատվիրակման դեպքում՝ դրույթ այն մասին, որ կոնտրագենտի կողմից ֆոնդի կառավարումը պետք է համապատասխանի ֆոնդի կանոններով (կանոնադրությամբ) և (կամ) ազդագրում, ինչպես նաև կառավարչի գործունեության կանոններով սահմանված ներդրումային քաղաքականությանը, ինչպես նաև դրույթ տվյալ քաղաքականության կիրառման ուղղությամբ կոնտրագենտին ցուցումներ տալու պատվիրակողի իրավունքի մասին,
10) դրույթ, համաձայն որի պատվիրակողը և կոնտրագենտը պարտավոր են պահպանել սույն կանոնակարգով և օրենքով սահմանված պահանջները պատվիրակման ամբողջ ընթացքում,
11) եթե պատվիրակման պայմանագիրը կնքվում է օտարերկրյա կոնտրագենտի հետ, ապա պատվիրակման պայմանագրում նշվում է նաև, թե իրավական պատասխանատվություն կրելու դեպքում որ երկրի օրենսդրությունն է կիրառվելու պատվիրակման պայմանագրի կողմերի նկատմամբ:

12. Ենթապահառության պայմանագրում, ի լրումն Օրենքով և սույն կանոնակարգի 11-րդ կետի 1-ից 6-րդ, 8-րդ, 10-րդ և 11-րդ ենթակետերում սահմանված տեղեկությունների, ներառվում են նաև հետևյալ դրույթները.

1) ֆոնդի ակտիվների առանձնացման պայմանները, որի դեպքում հնարավոր կլինի ցանկացած պահի դրանք տարբերակել կոնտրագենտի և ֆոնդի մասնակիցների սեփական ակտիվներից (եթե պատվիրակվող գործառույթի համար սույն դրույթը կիրառելի է).
2) պատվիրակման պայմանագրի լուծման վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելու և ֆոնդի ակտիվների վերադարձն իրականացնելու միջև ընկած ժամկետը և կարգը (եթե պատվիրակվող գործառույթի համար սույն դրույթը կիրառելի է):

ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՎԻՐԱԿՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

13. Կոնտրագենտի գործունեության նկատմամբ վերահսկողության գործառույթը չի կարող պատվիրակվել:

14. Պատվիրակողը պետք է ապահովի պատվիրակված գործառույթների իրականացման անընդհատությունը, այդ թվում՝ պատվիրակման պայմանագրի դադարեցման կամ երրորդ անձի տվյալ գործառույթների պատվիրակման դեպքերում:

15. Պատվիրակողը պետք է ողջամիտ ժամկետում Կենտրոնական բանկին ներկայացնի տեղեկություններ կոնտրագենտի կողմից օրենքի կամ այլ իրավական ակտերի կամ ֆոնդի կանոնների (կանոնադրության) ցանկացած խախտման մասին:

16. Եթե ներդրողների շահերի պաշտպանության համար պահանջվում է պատվիրակողի կողմից պատվիրակման պայմանագրի լուծում, ապա պայմանագրի լուծմամբ պատվիրակումը դադարում է, և պատվիրակված գործառույթները անմիջապես վերադարձվում են պատվիրակողին կամ պատվիրակողի կողմից նշված այլ անձին, եթե առկա է վերջինիս և պատվիրակողի հետ համապատասխան պատվիրակման պայմանագիր:

17. Պատվիրակողը կոնտրագենտի հետ պատվիրակման պայմանագրի լուծման դեպքում պայմանագիրը լուծելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է այդ մասին Կենտրոնական բանկին:

18. Ի լրումն սույն կանոնակարգի 13-ից 17-րդ կետերով սահմանված պայմանների՝ պահառության գործառույթների պատվիրակման դեպքում.

1) օրենսդրությամբ կոնտրագենտի նկատմամբ սահմանվում և կիրառվում է նվազագույն կապիտալի պահանջ,
2) եթե պատվիրակման պայմանագիրը կնքվում է օտարերկրյա կոնտրագենտի հետ, ապա կոնտրագենտի գրանցման վայրի երկիրը չպետք է համարվի փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր կամ տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ որևէ հայտարարություն չպետք է հրապարակված լինի:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Սույն կանոնակարգի 6-րդ կետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց հետո Կենտրոնական բանկը նախնական համաձայնություն է տալիս գործառույթների պատվիրակմանը կամ մերժում է համաձայնության տրամադրումը.

1) Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ կետի «գ», «դ» պարբերություններով նախատեսված ծառայությունների, ինչպես նաև պահառուի կողմից իր գործառույթների մի մասի կամ ֆոնդի ակտիվների մի մասի պահառության իր բոլոր գործառույթների դեպքում՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում,
2) Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա», «բ», «ե», «զ», «է» և «ը» պարբերություններով և 3-րդ կետով նախատեսված գործառույթների դեպքում՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

20. Կենտրոնական բանկը թույլատրում է ներդրումային ֆոնդի կառավարչի և պահառուի գործառույթների պատվիրակումը, եթե առկա չեն Օրենքի 70-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքերը և ներկայացված փաստաթղթերը կեղծ և (կամ) թերի չեն, կամ դրանցում չեն արտացոլվել անարժանահավատ և (կամ) կեղծ տվյալներ:

ԳԼՈՒԽ 7. ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ (ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

21. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը, տեղեկությունները (դրանց փոփոխությունները) Կենտրոնական բանկ են ներկայացվում հայերեն՝ պատվիրված նամակով, էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները ստորագրվում են կառավարչի կամ պահառուի իրավասու անձի կողմից և ներկայացվում են «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 8. ՖՈՆԴԻ (ԵՆԹԱՖՈՆԴԻ) ԱԿՏԻՎՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԴՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՏՎԻՐԱԿՎԵԼ

22. Կառավարիչը կարող է պատվիրակել կառավարման ենթակա ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների առավելագույնը այնքան մասի կառավարումը, որի արդյունքում պատվիրակման պայմանագրի կնքման օրվա դրությամբ ընդհանուր պատվիրակված ակտիվների մասը էապես չի գերազանցում պատվիրակումից հետո կառավարչի կողմից կառավարվող ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների մասը: Ընդ որում՝ պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո կառավարչի կառավարման ներքո գտնվող ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների մասը որոշելու համար հաշվի է առնվում ոչ միայն պատվիրակման ենթակա և պատվիրակումից հետո կառավարչի կառավարման ներքո գտնվող ֆոնդի

(ենթաֆոնդի) ակտիվների մեծությունը, այլ նաև տվյալ ֆոնդերի (ենթաֆոնդերի) ակտիվների հետևյալ որակական չափանիշները.

1) ֆոնդի (ենթաֆոնդի) ներդրումային քաղաքականությունը, դրա ռիսկայնության աստիճանը,
2) ֆոնդի ներդրումային նպատակներին հասնելու տեսանկյունից ֆոնդի (ենթաֆոնդի) ակտիվների կարևորությունը,
3) ֆոնդի ակտիվների ներդրումների աշխարհագրական և ոլորտային բաշխվածությունը,
4) կառավարչի և կոնտրագենտի գործունեության տարածաշրջանները,
5) կառավարչի և կոնտրագենտի կառուցվածքը, այդ թվում՝ արդյո՞ք կառավարիչը և կոնտրագենտը ընդգրկվում են միևնույն խմբում, թե ոչ:

Հավելված 1

«Ֆոնդի կառավարման և պահառության գործառույթների պատվիրակման համար նախնական համաձայնության տրամադրման կարգը» կանոնակարգ 10/13-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ
_____-ին

Հարգելի _____

_____

(միջնորդագիր ներկայացնող կազմակերպության լրիվ անվանումը)

որոշում է կայացրել պատվիրակել

_____

(նշել պատվիրակվող գործառույթի (գործառույթների) տեսակը (տեսակները)

գործառույթը (գործառույթները):

Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի՝ կից ներկայացնում ենք պատվիրակման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը (առդիր՝ _____ էջ):

Հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը:

Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունը արժանահավատ է ու ամբողջական և գիտակցում ենք, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության և միջնորդագրի մերժման:

Խնդրում ենք Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թույլատրել նշված գործառույթի (ների) պատվիրակումը:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____

(կառավարչի (պահառուի) իրավասու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____

(կապի միջոցները, գտնվելու վայրը)

_____ _____ 20__ թ.

*«Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով կարգավորել ներդրումային ֆոնդերի կառավարիչների կողմից նրանց և նրանց կողմից կառավարվող ֆոնդերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների ձևերը և ներկայացման պայմանները,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը, 104-րդ հոդվածի 2-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 301-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԵՎ ԻՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՁԵՎԵՐԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՆՁԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/03

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ներդրումային ֆոնդի կառավարչի (այսուհետ՝ կառավարիչ) կողմից իր և իր կողմից կառավարվող հրապարակային ներդրումային ֆոնդերի (այսուհետ՝ ֆոնդ)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, բովանդակությունը և պարբերականությունը, ինչպես նաև կառավարչի կողմից կայացվող այն որոշումները, որոնց մասին պետք է տեղեկացվի Կենտրոնական բանկը և տեղեկացնելու կարգը:

2. Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում գումարները արտահայտվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հազար դրամի ճշտությամբ:

3. Աղյուսակներում արտարժութային հոդվածները ներկայացվում են դրամական արտահայտությամբ՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ համապատասխան արտարժույթի համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում ձևավորված միջին փոխարժեքներով: Կառավարիչների և ֆոնդերի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները կազմվում են Կենտրոնական բանկ հրահանգների՝ ներդրումային ֆոնդի կառավարիչների ակտիվների և պարտավորությունների հաշվառման հիմնական սկզբունքների համաձայն:

4. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների առք ու վաճառքի գրանցման համար կառավարիչները օգտագործում են վերջնահաշվարկի ամսաթվի մեթոդը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***Ամսաթիվ***՝ ամսաթիվը նշվում է հետևյալ ֆորմատով՝ օր. ամիս. տարի (օրինակ՝ 01/01/2012թ.):
2) ***Հաշվետու տարի***՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ընկած ժամանակաշրջանը: Կառավարչի համար տվյալ ծառայության մասով առաջին հաշվետու տարի է համարվում ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիան (տվյալ ծառայության մասով ստացված թույլտվությունը) ստանալու օրվանից մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ընկած ժամանակաշրջանը:
3) ***Հաշվետու եռամսյակ***՝ օրացուցային տարվա սկզբից երեք ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կառավարչի համար տվյալ ծառայության մասով առաջին հաշվետու եռամսյակ է համարվում ֆոնդի կառավարման գործունեության լիցենզիան (տվյալ ծառայության մասով ստացված թույլտվությունը) ստանալու օրվանից մինչև տվյալ եռամսյակի վերջն ընկած ժամանակաշրջանը:
4) ***Հաշվետու ամիս***՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Կառավարչի համար տվյալ ծառայության մասով առաջին հաշվետու ամիս է համարվում տվյալ ծառայության մատուցման թույլտվությունը ստանալու օրվանից մինչև տվյալ ամսվա վերջն ընկած ժամանակաշրջանը:
5) ***Հաշվետու օր***՝ յուրաքանչյուր աշխատանքային օր:
6) ***Հաշվետու ժամանակաշրջան***՝ հաշվետու ամիս, հաշվետու եռամսյակ կամ հաշվետու տարի:
7) ***Զուտ ակտիվների արժեք***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04»-ի համաձայն հաշվարկված արժեք:
8) ***Արդյունավետ կառավարման հավելավճար***՝ ֆոնդի եկամտաբերությունից կախված պարգևավճարի մաս:

6. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ՝ ԻՐ ԵՎ ԻՐ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՎՈՂ ՖՈՆԴԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Կառավարիչը Կենտրոնական բանկ ներկայացնում է հետևյալ հաշվետվությունները՝ նշված պարբերականությամբ.

Հաշվետվության թիվը	Հաշվետվության անվանումը	Ներկայացման պարբերականությունը
	Կառավարչի գործունեության մասին	
1.	Հաշվեկշիռ	ամսական,տարեկան
2.	Եկամուտների և ծախսերի վերաբերյալ	ամսական,տարեկան
3.	Ընդհանուր կապիտալի, դրա նվազագույն չափի և ֆոնդերում մասնակցության չափի վերաբերյալ	ամսական
4.	Կանոնադրական կապիտալի ձևավորման կամ փոփոխության վերաբերյալ	կանոնադրական կապիտալի ձևավորման և յուրաքանչյուր փոփոխության դեպքում
5.	Կառավարչի գործունեության վերաբերյալ	տարեկան
	Կառավարվող ֆոնդերի մասին	
6.	Ֆոնդի և ֆոնդի զուտ ակտիվների վերաբերյալ	օրական
7.	Ֆոնդի ներդրումների կառուցվածքի վերաբերյալ	օրական
8.	Ֆոնդի եկամուտների և ծախսերի (զուտ ակտիվների արժեքի փոփոխության) վերաբերյալ	ամսական
9.	Գործատուների սխեմաների վերաբերյալ	ամսական
	Կամավոր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարման մասին	
10.	Կամավոր կենսաթոշակային ֆոնդերում մասնակցության և դրանցում ձեռքբերված փայերի (բաժնետոմսերի) վերաբերյալ	ամսական
11.	Կամավոր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների փայերի (բաժնետոմսերի) համախառն արժեքի բաշխման վերաբերյալ	տարեկան
12.	Կամավոր կենսաթոշակային ֆոնդերից կատարված վճարումների վերաբերյալ	տարեկան

8. Եթե կառավարիչը մատուցում է նաև «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ծառայությունը, ապա ներկայացնում է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03-ով նախատեսված 7-րդ և 8-րդ հաշվետվական ձևերը:


9. Եթե կառավարիչը մատուցում է նաև «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով սահմանված ծառայությունը, ապա ներկայացնում է նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի ապրիլի 22-ի թիվ 140-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 4/03- ով նախատեսված 18-րդ հաշվետվական ձևը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

10. Սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող պաշտպանված օրինակելի նմուշին (ֆայլին) համապատասխան, որոնց ձևերը սահմանված են սույն կանոնակարգի Հավելվածներ 1 - 12-ով:

11. Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային այլ կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

12. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն հետևյալ կարգով.



13. Հաշվետվության անվանման մեջ «հաշվետվության համարը» սյունակում լրացվող հաշվետվության համարի առաջին երկու նիշերը բնութագրում են կառավարչի գործունեությունը, լրացվում է «FK», երրորդ և չորրորդ նիշերը՝ հաշվետվության հերթական համարը:

14. Ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններում «Ամսաթիվը _____ թ-ից մինչև _____ թ.» հատվածում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի առաջին և վերջին օրվա ամսաթվերը: Ընդ որում՝ հաշվետվությունները կազմելիս մեկ տարին ընդունվում է 365 կամ 366 օր՝ կախված օրացուցային օրերի քանակից:

15. Կառավարչի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները պետք է պարունակեն թվային հավաստագրեր, եթե դրանք չեն ուղարկվում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով:

16. Ամսական և եռամսյակային հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

17. Տարեկան հաշվետվությունների ներկայացման ժամկետը սահմանվում է մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող տարվա հունվարի 30-ը (ներառյալ):

18. Թիվ 4 հաշվետվությունը ներկայացվում է մինչև համապատասխան փոփոխությանը հաջորդող 10-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

19. Եթե սույն կանոնակարգի 7-րդ կետով պահանջվում է տվյալ հաշվետվությունը ներկայացնել և՛ ամսական, և՛ տարեկան պարբերականությամբ, ապա դեկտեմբեր ամսվա ամսական հաշվետվությունը չի ներկայացվում, ներկայացվում է միայն տարեկան հաշվետվությունը:

20. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

21. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող, սույն կանոնակարգով սահմանված ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ սույն կանոնակարգի 10-րդ կետի համաձայն: Ընդ որում, միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մի քանի ճշգրտված հաշվետվությունների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված հաշվետվությունը:

22. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, պետք է լրացվի «Արիալ Արմենիան» տառատեսակով, երկու լրացված ամբողջական տողերի միջև դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի տարածվում կառավարչի վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

23. Հաշվետվությունները լրացնելիս բանկերի Սվիֆտ կոդերը, Տելեքս համարները, արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերը, արժույթի ԻՍՕ և այլ կոդերը ներկայացվում են անգլերեն:

24. Հաշվետվություններում ընդգրկված այն հոդվածները, որոնք նախատեսված չեն ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության շրջանակներում՝ չեն լրացվում: Այն դեպքերում, երբ անհնար է որոշել հոդվածի ռեզիդենտությունը՝ տվյալները լրացվում են ռեզիդենտների համար նախատեսված հատվածում:

25. Կառավարչի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:

ԳԼՈՒԽ 5. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌԱՎԱՐՉԻՑ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ, ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

26. Կենտրոնական բանկն իրավունք ունի հեռակա վերահսկողության շրջանակներում կառավարչից, նրա ղեկավարներից և կառավարչի կազմում կամ անունից գործող որակավորման ենթակա անձանցից ծանուցմամբ պահանջել նրանց կողմից իրականացվող ֆոնդի կառավարման գործունեության վերաբերյալ լրացուցիչ հաշվետվություններ, տեղեկանքներ, բացատրագրեր և (կամ) նմանատիպ այլ փաստաթղթեր:

27. Սույն կանոնակարգի 26-րդ կետով նախատեսված ծանուցումը տրվում է թղթային եղանակով՝ փոստով կամ առձեռն, կամ հեռախոսագրի, Կենտրոնական բանկի պաշտոնական էլեկտրոնային փոստի, Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով կամ կապի՝ սահմանված այլ պահուստային միջոցներով, ընդ որում՝ թղթային եղանակով ծանուցման փաստաթուղթը ստորագրվում է Կենտրոնական բանկի՝ Կառավարիչների և ֆոնդերի վերահսկողության համար պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կամ ղեկավարի տեղակալի կողմից:

28. Կառավարիչը կամ նրա պաշտոնատար անձը պարտավոր են պահանջվող լրացուցիչ տեղեկանքները, բացատրությունները և (կամ) այլ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնել սույն կանոնակարգի 27-րդ կետում նշված ծանուցումը ստանալու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծանուցման մեջ ներկայացման ավելի երկար ժամկետ սահմանված չէ:

29. Կառավարիչը պահանջվող լրացուցիչ տեղեկանքները, բացատրությունները և (կամ) փաստաթղթերը ներկայացնում է թղթային եղանակով՝ փոստով կամ առձեռն, կամ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Սի-Բի-էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում դրանք կարող են ներկայացվել ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում թղթային եղանակով չներկայացնելու դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը պետք է պարունակեն թվային հավաստագրեր, եթե դրանք չեն ուղարկվում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով:

ԳԼՈՒԽ 6. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

30. «Ֆինանսական վիճակի մասին» թիվ 1 հաշվետվությունը լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ՝ ներկայացնելով ֆոնդի կառավարչի ակտիվների, պարտավորությունների, սեփական կապիտալի և արտահաշվեկշռային հոդվածների ցուցանիշները, համաձայն Հավելված 1-ի:

31. «I խմբի արտարժույթ» և «II խմբի արտարժույթ» սյունակներում արտարժույթի խմբավորումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 2): Յուրաքանչյուր արժութային սյունակում ներկայացվող թվերը դասակարգվում են ըստ ռեզիդենտության: Հետհաշվեկշռային հաշիվները լրացվում են հազար դրամներով: Հաշվետվությունը պետք է պարունակի հաշվետու ժամանակաշրջանի վերջին աշխատանքային օրվա (եթե վերջին օրը եղել է ոչ աշխատանքային, սակայն կառավարիչն աշխատել է նաև այդ օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ տվյալները:

32. Կառավարչի կողմից ինքնուրույն բացված հաշվապահական հաշվառման հաշիվները Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում չեն արտացոլվում որպես առանձին հաշիվ:

33. Հաշվետվության հոդվածներին կից ներկայացված «NV» հապավմամբ տողում ներկայացվում են տվյալ տողի հիմնական հոդվածում ընդգրկված տվյալ ակտիվի կամ պարտավորության մայր գումարը, իսկ «NI» հապավմամբ տողում՝ անվանական տոկոսադրույքով հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարը, ինչպես նաև տվյալ հոդվածի գծով հաշվարկված տույժերը և տուգանքները: Օրինակ՝ «10420 NV» տողում ներկայացվում է «10420» տողի հանրագումարում ընդգրկված տվյալ ակտիվի մայր գումարը, իսկ «10421 NI» տողում՝ «10421» տողի հանրագումարում ընդգրկվող հաշվեգրված և դեռ չվճարված տոկոսագումարին վերաբերող մասը:

34. Հաշվետվության 85 բաժնի հաշիվները կարող են չլրացվել:

35. «Եկամուտների և ծախսերի վերաբերյալ» թիվ 2 հաշվետվությունը լրացվում է աճողական տվյալներով՝ տարեսկզբից հաշվեգրված տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների, տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի չափով, համաձայն Հավելված 2-ի:

36. Առանձին տողերի տարանջատումն ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների՝ կատարվում է եկամուտների ստացման աղբյուրի տեսանկյունից: Օրինակ՝ ոչ ռեզիդենտին ռեզիդենտի կողմից թողարկված արժեթղթի վաճառքից ստացված եկամուտը պետք է արտացոլվի «Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտ» տողի «ոչ ռեզիդենտ» ենթատողում:

37. ***«Ֆոնդերի կառավարման արդյունքում հաշվեգրված եկամուտներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարչի կողմից ֆոնդերի կառավարման համար կառավարչին հասանելիք պարգևավճարի մեծությունը՝ հաստատագրված մասը:

38. ***«Ֆոնդի կառավարման արդյունքում հաշվեգրված եկամուտներ՝ ածանցված ֆոնդի եկամտաբերությունից»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարչի կողմից ստացված պարգևավճարների այն մասը, որը պայմանավորված կառավարման արդյունքում ֆոնդի եկամտաբերության աճով:

39. ***«Արժեթղթերի փաթեթի կառավարումից եկամուտներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված արժեթղթերի փաթեթի կառավարման համար կառավարչի հաշվեգրված պարգևավճարների մեծությունը:

40. ***«Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրման գծով եկամուտներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված խորհրդատվության ծառայության մատուցման համար հաշվեգրված վճարների մեծությունը:

41. ***«Այլ ոչ տոկոսային եկամուտներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն կետի 3.1-ից 3.15 ենթակետերում չընդգրկված՝ կառավարչի կողմից ստացված այլ վճարներն ու պարգևավճարները:

42. ***«Թողարկման վճար»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի փայերի (բաժնային այլ արժեթղթերի) թողարկման համար գանձվող վճարների մեծությունը:

43. ***«Մարման վճար»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կառավարչի կողմից կառավարվող ֆոնդերի փայերի (բաժնային այլ արժեթղթերի) մարման համար գանձվող մեծությունը:

44. ***«Այլ ոչ տոկոսային ծախսեր»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում սույն տեղի 4.1-ից 4.23 ենթակետերում չընդգրկված՝ կառավարչի կողմից կատարված այլ ծախսերը:

45. «Ընդհանուր կապիտալի, դրա նվազագույն չափի և ֆոնդերում մասնակցության չափի վերաբերյալ» թիվ 3 հաշվետվության Աղյուսակ 1-ում ներկայացվում են կառավարչի ընդհանուր կապիտալի մեծությունը և դրա տարրերի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները, ինչպես նաև նորմատիվային մեծությունների հաշվարկի համար Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշմամբ նախատեսված անհրաժեշտ նվազեցումներն՝ ըստ ամսվա բոլոր օրերի, համաձայն Հավելված 3-ի:

46. Այն օրերին, երբ կառավարչի հաշվեկշիռը փոփոխություն չի կրել (ներառյալ՝ ոչ աշխատանքային օրերը), լրացվում են նախորդ օրվա տվյալները:

47. Թիվ 3 հաշվետվության Աղյուսակ 2-ում ներկայացվում են կառավարչի՝ իր կողմից կառավարվող ֆոնդերում մասնակցության չափերը: Մեկից ավելի ֆոնդերի կառավարման դեպքում, յուրաքանչյուր օրվա դրությամբ յուրաքանչյուր ֆոնդի վերաբերյալ տվյալները լրացվում են առանձին տողով՝ ավելացնելով տվյալ օրվա նշագրումով տողեր:

48. «Կանոնադրական կապիտալի ձևավորման կամ փոփոխության վերաբերյալ» թիվ 4 հաշվետվությունը ներկայացվում է կանոնադրական կապիտալի ձևավորման (նոր ստեղծվող ընկերությունների համար) և յուրաքանչյուր փոփոխության (համալրման, նվազեցման, ինչպես նաև նախկինում ներկայացված տեղեկություններում այլ փոփոխությունների) դեպքում: 1 տոկոս և ավելի բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող յուրաքանչյուր բաժնետիրոջ (մասնակցի) գծով տեղեկությունները լրացվում են հաշվետվության աղյուսակի «Ա» մասում: Ընդ որում, եթե միևնույն բաժնետիրոջը (մասնակցին) միաժամանակ պատկանում է և՛ արտոնյալ, և՛ սովորական բաժնետոմս, ապա հաշվետվությունը «Ա» մասում տվյալ բաժնետիրոջ (մասնակցի) համար լրացվում է երկու տողով: 1 տոկոսից պակաս բաժնետոմս (բաժնեմաս) ունեցող բաժնետերերի (մասնակիցների) գծով տեղեկությունները լրացվում են խմբավորված՝ ըստ ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների՝ աղյուսակի «Բ» մասում՝ համաձայն Հավելված 4-ի:

49. Թիվ 4 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Կանոնադրական կապիտալի ձևավորման (փոփոխության) գրանցման ամսաթիվը»*** մասում լրացվում է կանոնադրական կապիտալի փոփոխության, այսինքն՝ համալրման կամ նվազեցման (նոր ստեղծվող ընկերությունների համար՝ նոր ձևավորված կանոնադրական կապիտալի)՝ Կենտրոնական բանկում գրանցման ամսաթիվը:
2) ***«Կառավարչի կազմակերպական-իրավական ձևը»*** մասում նշվում է հաշվետու անձի կազմակերպական-իրավական ձևը՝ «բաց բաժնետիրական ընկերություն», «փակ բաժնետիրական ընկերություն» կամ «սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն»:

3) ***«Մասնակցի (բաժնետիրոջ) ղեկավարների (խորհրդի (դիտորդ խորհրդի) նախագահ և գործադիր մարմնի ղեկավար) անունը ազգանունը, հայրանունը»*** սյունակը լրացվում է միայն այն դեպքում, եթե մասնակիցը (բաժնետերը) իրավաբանական անձ է:
4) ***«Սեփականության ձևը»*** սյունակում լրացվում է «ֆիզիկական անձ», եթե կառավարչի մասնակիցը (բաժնետերը) ֆիզիկական անձ է: Եթե մասնակիցը (բաժնետերը) իրավաբանական անձ է և իր մասնակցության 50 տոկոսից ավելին պատկանում է պետությանը, ապա սույն սյունակում լրացվում է «պետական», մնացած դեպքերում՝ «ոչ պետական»:
5) ***«Բաժնետոմսի տեսակը»*** սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար «Սովորական» կամ «Արտոնյալ» բառերով՝ կախված բաժնետոմսի տեսակից:
6) *«Անվանական արժեթղթերի սեփականատերերի (բաժնետերերի) ռեեստրում գրանցման օրը»* սույն սյունակում լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայում բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման օրը: Սույն սյունակը լրացվում է միայն բաժնետիրական ընկերությունների համար:
7) ***«Ռեզիդենտությունը»*** սյունակը լրացվում է «Ռեզիդենտ» կամ «Ոչ ռեզիդենտ» բառերով՝ կախված մասնակցի ռեզիդենտությունից:
8) ***«Կանոնադրական կապիտալի փոփոխված մասնաբաժնի մեծությունը»*** սյունակում լրացվում է բաժնետիրոջ (մասնակցի) մասնաբաժնի փոփոխված (ավելացված, նվազեցված) մեծությունը՝ հազար դրամներով: Նոր ստեղծվող կառավարչի կանոնադրական կապիտալի ձևավորման դեպքում սույն հաշվետվությունը ներկայացնելիս սույն սյունակը չի լրացվում:
9) ***«Մասնաբաժնի մեծությունը»*** սյունակում լրացվում է կանոնադրական կապիտալում մասնակցի (բաժնետիրոջ) մասնակցության մեծությունը (հազար դրամներով): Ընդ որում, կանոնադրական կապիտալում փոփոխության դեպքում սույն հաշվետվությունը ներկայացնելիս այդ մեծությունը ներառում է մասնակցի (բաժնետիրոջ) մասնաբաժնի փոփոխված մեծությունը:
10) ***«Տեսակարար կշիռը կանոնադրական կապիտալում (%)»*** սյունակում լրացվում է կանոնադրական կապիտալում մասնակցի (բաժնետիրոջ) մասնակցության մեծությունը՝ տոկոսային հարաբերությամբ: Ընդ որում, կանոնադրական կապիտալում փոփոխության դեպքում սույն հաշվետվությունը ներկայացնելիս այդ մեծությունը ներառում է մասնակցի (բաժնետիրոջ) մասնաբաժնի փոփոխված տոկոսային մեծությունը:

50. «Կառավարչի գործունեության վերաբերյալ» թիվ 5 հաշվետվությունը արտացոլում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդերի կառավարման գործունեության հետ մեկտեղ կառավարչի կողմից մատուցված այլ ծառայությունների մասին տեղեկությունները և ներկայացվում է եռամսյակային կտրվածքով՝ համաձայն Հավելված 5-ի:

51. Հաշվետվության վանդակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.
1) ***«Արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրեր»*** տողի «թիվը» սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կառավարչի կողմից կնքված և գործող արժեթղթերի փաթեթի կառավարման պայմանագրերի թիվը, իսկ «գումարը» սյունակում լրացվում է արժեթղթերի փաթեթի կառավարման գծով կառավարման ներքո գտնվող ակտիվների համախառն արժեքը՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ:
2) ***«Կառավարումից ստացված վճարներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ արժեթղթերի փաթեթի կառավարման գծով հաշվեգրված կոմիսիոն վճարների համախառն մեծությունը (կառավարման վճարներ, արդյունավետ կառավարման հավելավճար և այլն):
3) ***«Խորհրդատվության պայմանագրերի թիվը»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կառավարչի կողմից կնքված այն գործող պայմանագրերի թիվը, համաձայն որոնց կառավարիչը պարտավորվել է որոշակի կամ անորոշ ժամանակի ընթացքում մատուցել հաճախորդին ներդրումային խորհրդատվություն: Սույն տողի «գումարը» սյունակում լրացվում է խորհրդատվության պայմանագրերի ծավալը դրամական արտահայտությամբ, որի համար ներդրումային խորհրդատվություն է տրվել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:
4) ***«Խորհրդատվությունից ստացված վճարներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ներդրումային խորհրդատվություն տրամադրելու դիմաց հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հաշվեգրված վճարները:
5) ***«Ֆոնդի փայեր (բաժնետոմսեր)»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ի պահ ընդունված արժեթղթերի թիվը և դրանց հաշվարկային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:
6) ***«Ի պահ ընդունելուց ստացված վճարներ»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆոնդի արժեթղթերն ի պահ ընդունելու արդյունքում հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ստացված կոմիսիոն վճարները:

52. «Ֆոնդի և ֆոնդի զուտ ակտիվների վերաբերյալ» թիվ 6 հաշվետվությունը ներկայացնում է կորպորատիվ և պայմանագրային ֆոնդերի (ներառյալ՝ կենսաթոշակային ֆոնդերի) վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը, համաձայն Հավելված 6-ի: Յուրաքանչյուր ֆոնդի համար ներկայացվում է առանձին հաշվետվություն:

53. Սույն հաշվետվության աղյուսակ 1-ը ներկայացնում է տվյալ ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 335-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման կարգը» կանոնակարգ 10/04-ի:

54. Աղյուսակ 2-ում ներկայացվում են տվյալ ֆոնդի մասին ամփոփ տեղեկություններ: Աղյուսակ 2-ի տողերը լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Մասնակիցների միջև տեղաբաշխված փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր թիվը»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի մասնակիցների միջև տեղաբաշխված փայերի (բաժնետոմսերի) թիվը,
2) ***«Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ֆոնդի զուտ ակտիվների արժեքը,
3) ***«Թողարկված փայերի (բաժնետոմսերի) թիվը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում»*** տողում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ֆոնդի բոլոր թողարկված փայերի (բաժնետոմսերի) թիվը և տեղաբաշխման գինը,
4) ***«Մարված փայերի (բաժնետոմսերի) թիվը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում»*** տողում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տվյալ ֆոնդի մարված փայերի (բաժնետոմսերի) թիվը և մարման գինը,
5) ***«Փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը»*** տողում լրացվում է տվյալ ֆոնդի մեկ փայի (բաժնետոմսի) հաշվարկային արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ,
6) ***«Ֆոնդի մասնակիցների ընդհանուր թիվը, այդ թվում՝»*** տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ տվյալ ֆոնդի մասնակիցների ընդհանուր թիվը՝ բաշխելով դրանք համապատասխանաբար՝ ըստ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց:

55. Աղյուսակ 3-ում ներկայացվում է տվյալ ֆոնդի ակտիվների հաշվին ստանձնած վարկերի մասին տեղեկությունը: Աղյուսակ 3-ը լրացվում է հետևյալ սկզբունքների համապատասխան՝

1. Հաստատել «Ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության տրամադրման կարգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 316-Ն

Հավելված
Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 316-Ն որոշմամբ

ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների (այսուհետ՝ կառավարիչ) ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացնելու կարգը, Կենտրոնական բանկի կողմից նախնական համաձայնության տրամադրման կարգը:

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

3. Ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար նախնական համաձայնություն ստանալու համար կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար նախնական համաձայնություն ստանալու դիմում՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

2) ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման նպատակով Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու մասին կառավարչի իրավասու մարմնի որոշումը,
3) ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման հիմնավորումը,
4) կառավարչի ցանկությամբ՝ այլ էական փաստաթղթեր,
5) Կենտրոնական բանկի կողմից պահանջվող այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

4. Սույն գլխով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն, կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն կառավարչի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 3. ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է կայացնում ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու մասին սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված դիմումը և պահանջվող այլ փաստաթղթերը ներկայացվելու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Կենտրոնական բանկը մերժում է ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար նախնական համաձայնության տրամադրումը, եթե՝

1) ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում Օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված պահանջներին, կամ ներկայացվել են կեղծ փաստաթղթեր, կամ ներկայացված փաստաթղթերում արտացոլվել են ոչ արժանահավատ տեղեկություններ, կամ ներկայացված փաստաթղթերում առկա են թերություններ և այդ թերությունները Օրենքով սահմանված ժամկետում չեն վերացվել դիմում ներկայացրած անձի կողմից,
2) Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով՝ ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման պայմանները բավարար հստակ չեն և (կամ) չեն երաշխավորում ֆոնդի մասնակիցների օրինական շահերը:

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 316-Ն որոշման

ԴԻՄՈՒՄ

ՖՈՆԴԻ ՊԱՀԱՌՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ

Հարգելի _____

_____

(կառավարչի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը)

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 316-Ն որոշմամբ հաստատված «Ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար Կենտրոնական բանկի խորհրդի նախնական համաձայնության տրամադրման կարգի»՝ Ձեզ ենք ներկայացնում ֆոնդի պահառության պայմանագրի գործողության դադարեցման համար նախնական համաձայնություն ստանալու դիմումը, կից փաստաթղթերը և տեղեկությունները:

Առդիր _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Դիմումը ներկայացնող անձ՝

_____

(կառավարչի իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__» _____ ____ թ.

*Ապահովագրական ընկերությունից պարտադիր անուիտետի ժառանգման կարգը և անուիտետի ժառանգման դիմումի ձևը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել ապահովագրական ընկերությունների կողմից կուտակային կենսաթոշակային անուիտետի սխեմաների գործողության գործընթացի արդյունավետությունը և այդ ոլորտում ապահովադիրների և նրանց ժառանգների շահերի պաշտպանությունը,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 61-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ապահովագրական ընկերությունից պարտադիր անուիտետի ժառանգման կարգը և անուիտետի ժառանգման դիմումի ձևը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 317-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 317-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՆՈՒԻՏԵՏԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգի իմաստով հետևյալ հասկացությունները կիրառվում են հետևյալ նշանակությամբ.
1) ***անուիտետ***՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
2) ***ապահովադիր (մասնակից)***՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների («Ժառանգ՝ ֆիզիկական անձ /անձինք/կամ Հայաստանի Հանրապետությունը,
3) ***լիազորված ներկայացուցիչ***՝ անուիտենտի կամ նրա ժառանգների կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորություն ստացած անձ,
4) ***անուիտետի մնացորդային գումար***՝ անուիտետի չվճարված գումարը՝ նվազեցրած ապահովագրության պայմանագրի կնքման, կատարման ծախսերը,
5) ***երաշխավորված ժամանակահատվածը***՝ համաձայն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
6) ***Օրենք***՝«Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՈՒԻՏԵՏԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

2. Ապահովադրի (մասնակցի) ժառանգը, ժառանգության վկայականը ստանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում անուիտետի մնացորդային գումարը ստանալու համար ապահովագրական ընկերություն է ներկայացնում դիմում՝ համաձայն սույն կարգի Հավելված 1-ի, կից ներկայացնելով.
1) անձը հաստատող փաստաթուղթ,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

2) ժառանգության վկայականի պատճենը:

3. Եթե ապահովադրի (մասնակցի) ժառանգների անունից հանդես է գալիս լիազորված անձը, ապա նա պարտավոր է սույն կարգի 2-րդ կետի պահանջներից բացի ներկայացնել լիազորագիր:

4. Ապահովագրական ընկերությունը սույն կարգի 2-րդ մասով նախատեսված դիմումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ կարգով սույն կարգի Հավելված 1-ով սահմանված դիմումում նշված ձևով վճարում է անուիտետի մնացորդային գումարը:

5. Ապահովադրի (մասնակցի) կողմից անուիտետի 3 անընդմեջ պարբերական վճարումների չստացման դեպքում, ապահովագրական ընկերությունը լավագույն ջանքերի գործադրմամբ սկսում է նրա որոնման գործընթաց:

6. Ապահովադրի (մասնակցի) երաշխավորված ժամկետի ավարտից հետո մահանալու դեպքում ապահովագրական ընկերությունը նրա ժառանգների նկատմամբ որևէ պարտավորություն չի կրում:

7. Սույն կարգի 2-րդ մասով սահմանված դիմումը չստանալու դեպքում անուիտետը շարունակում է մնալ ապահովագրական ընկերության կառավարման ներքո մինչև երաշխավորված ժամկետի ավարտը: Երաշխավորված ժամկետն ավարտվելուց հետո (ընդ որում՝ երաշխավորված ժամկետի հաշվարկում չի ներառվում ապահովադրի, շահառուի մահանալու օրվանից մինչև ժառանգման գործընթացի ավարտն ընկած ժամանակահատվածը) ապահովագրական ընկերությունը 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնում է անուիտետի պայմանագրում որպես ժառանգ նշված անձին (անձանց), ինչպես նաև ֆինանսական ոլորտի պետական լիազոր մարմնին: Ֆինանսական ոլորտի պետական լիազոր մարմնի դիմումի հիման վրա անուիտետը դատական կարգով կարող է ճանաչվել անժառանգ:

ԳԼՈՒԽ 3. ԱՆՈՒԻՏԵՏԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8. Ապահովագրական ընկերությունն իրավունք ունի մերժելու սույն կարգի 2-րդ մասով սահմանված դիմումը, եթե դիմումը ներկայացվել է սույն կարգով սահմանված ժամկետի խախտմամբ կամ չի համապատասխանում սույն կարգով սահմանված պահանջներին:

9. Դիմումը մերժելու և մերժման հիմքերի մասին ապահովագրական ընկերությունը գրավոր ձևով տեղեկացնում է դիմում ներկայացրած անձին:

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 317-Ն որոշման

ԱՆՈՒԻՏԵՏԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՁԵՎ

ԺԱՌԱՆԳԻ ՏՎՅԱԼՆԵՐ	
Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրի սերիան, համարը	
Ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	_____/_____/_____
Հանրային ծառայության համարանիշը (կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը)	
Գրանցման վայրը	
Բնակության վայրը	
Փոստային ինդեքսը	
Բանկային հաշվեհամարը	*Բանկի անվանումը* *Հաշվի համարը*
էլ. փոստը, հեռախոսահամարը	
ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՏՎՅԱԼՆԵՐ	
Անուն, ազգանուն, հայրանուն	
Անձնագրի սերիան, համարը	
Հանրային ծառայության համարանիշը (կամ հանրային ծառայության համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը)	
Գրանցման վայրը	
Բնակության վայրը	
Փոստային համարը	
Բանկային հաշվեհամարը	*Բանկի անվանումը* *Հաշվի համարը*
էլ. փոստը, հեռախոսահամարը	

ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ			
Ժառանգության վկայականի գրանցման համարը			
Ժառանգության վկայականի տրման ամսաթիվը	_____/_____/_____		
ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՏՎՅԱԼՆԵՐ			
Ֆիզիկական անձ			
Անուն, ազգանուն, հայրանուն			
Անհատ ձեռնարկատեր			
Անվանումը			
ԱՆՈՒԻՏԵՑԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՍՏԱՑՄԱՆ ՁԵՎԸ			
կանխիկ		անկանխիկ	
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՄԱՆ ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՏԱՐԲԵՐԱԿԸ			
թղթային		էլեկտրոնային	
Դիմում լրացնող			*Ստորագրություն*
Անուն, ազգանուն (անվանում)			
տարի/ամիս/ ամսաթիվ			
Ապահովագրական ընկերություն			*Ստորագրություն*
Անուն, ազգանուն (անվանում)			
տարի/ամիս/ամսաթիվ			

Կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագրում ներառվող էական պայմանների մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ապահովագրական ընկերությունների կողմից պարտադիր և կամավոր կուտակային կենսաթոշակային անուիտետի սխեմաների գործողության արդյունավետ գործընթացը և այդ ոլորտում պաշտպանել ապահովադիրների շահերը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 6-րդ կետը, 66-րդ հոդվածի 5-րդ կետը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագրում ներառվող էական պայմանները»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 318-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 318-Ն որոշմամբ

ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԱՆՈՒԻՏԵՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆԵՐԱՌՎՈՂ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Ապահովագրական ընկերության կողմից առաջարկվող պարտադիր կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագիրն առնվազն պետք է ներառի հետևյալ պայմանները.

1) *«կուտակային կենսաթոշակային անուիտետ» անվանումը, ընդ որում, անուիտետի ցանկացած պայմանագիր, որը ներառում է «կենսաթոշակային անուիտետ» բառակապակցությունը, դրա հոլովված ձևերը, օտար լեզվով այդ բառերի հայերեն տառադարձությունները, թարգմանությունները կամ դրանց զուգորդությունները պետք է բավարարեն սույն որոշմամբ սահմանված կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագրին ներկայացվող պահանջները,*
2) ապահովադիր հասկացությունը՝ համաձայն «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
3) ապահովագրված անձ՝ ֆիզիկական անձ (անձինք), ում ապահովագրական ընկերությունը վճարում է անուիտետ,
4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 998 հոդվածով նախատեսված պայմանները՝ ըստ կիրառելիության,
5) ամուսինների անուիտետի դեպքում՝ ամուսնության վկայականի սերիան և համարը,
6) ապահովադրի ժառանգների անձնական տվյալները,
7) անուիտետի վճարների չափը, ժամկետը, հաշվարկման մեթոդը,
8) պայման այն մասին, որ անուիտետի վճարումները կատարվում են ամսական պարբերականությամբ,
9) պայման այն մասին, որ անուիտետի վճարումները սկսվում են պայմանագրի կնքման օրվան հաջորդող ամսվա 1-ից,
10) պայման այն մասին, որ ամսական պարբերականությամբ վճարվող անուիտետի մեծությունը չպետք է պակաս լինի վճարման օրվան նախորդող 12-ամսյա կտրվածքով նվազագույն պարենային զամբյուղի միջին մեծությունից,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

11) պայման այն մասին, որ պայմանագրի պայմանների փոփոխությունները կարող են կատարվել միայն ապագա ժամանակահատվածի համար, կողմերի համաձայնությամբ՝ պահպանելով սույն կարգի 11-րդ և 13-րդ կետերով նախատեսված պայմանները,
12) անուիտետի հաշվին հաշվեգրվող տոկոսադրույքի մեծությունը,
13) անուիտետի պայմանագրի երաշխավորված ժամկետը,
14) անուիտետի պայմանագրով նախատեսված տույժերի և տուգանքների չափերը և կիրառման դեպքերը, կարգն ու պայմանները,
15) պայման այն մասին, որ անուիտետի պայմանագրից բխող պարտավորությունները չեն կարող գրավադրվել որպես մեկ այլ պարտավորության կատարման ապահովման միջոց,
16) անուիտետի ժառանգման կարգը և պայմանները,
17) ապահովագրական (կենսաթոշակային) գաղտնիքը տրամադրելու կարգը և պայմանները,
18) պատասխանատվությունն անուիտետի պայմանագրի պայմանները խախտելու դեպքում,
19) պայմանագրի կողմերի միջև վեճերի լուծման կարգը:

2. Ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող կամավոր կուտակային կենսաթոշակային անուիտետի պայմանագիրը պետք է ներառի սույն կարգի 1-ին կետով սահմանված պայմանները, բացառությամբ 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերի, ինչպես նաև

1) ապահովագրական ընկերությանը փոխանցված միանվագ գումարի կամ պարբերական վճարների մեծությունը,
2) մինչև առաջին վճարումն անուիտենտի՝ անուիտետի հաշվի վաղաժամկետ մասնակի նվազեցման հնարավորությունը և պայմանները,
3) ապահովագրավճարի վճարման պայմանները պարբերական վճարման դեպքում,
4) անուիտետի վճարման ձևը (միանվագ վճարի կամ տարաժամկետ վճարների տեսքով) կամ վճարման ձևը և կարգը,
5) պայման այն մասին, որ մասնակիցը կարող է ստանալ անուիտետը, ինչպես նաև դրա վրա հաշվեգրված տոկոսները միայն «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո կամ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված այլ դեպքերում,
6) Օրենքով սահմանված հիմքերով մինչև կենսաթոշակային տարիքը լրանալը անուիտետի գումարը ստանալու պայմանները, ժամկետները և կարգը,
7) ապահովադրի անուիտետի պայմանագրով ապահովագրողի պարտավորություններն իր կողմից ընտրված ապահովագրական ընկերությանը փոխանցելու իրավունքը և պայմանները,
8) մահվան վճարի մեծությունը, հաշվարկման կարգը:

Անուիտետի մնացորդային գումարի հաշվարկման և այլ ապահովագրական ընկերության փոխանցման կարգի մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել ապահովագրական ընկերությունների կողմից կուտակային կենսաթոշակային անուիտետի սխեմաների գործողության արդյունավետ գործընթացը և այդ ոլորտում պաշտպանել ապահովադիրների շահերը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Անուիտետի մնացորդային գումարի հաշվարկման և այլ ապահովագրական ընկերության փոխանցման կարգը»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 319-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 319-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԱՆՈՒԻՏԵՏԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.
1) ***անուիտետ***՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
2) **ապահովագրական ընկերություն**՝ ըստ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
3) ***ապահովադիր (մասնակից)***՝ *ըստ* «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների,
4) ***կենտրոնական բանկ***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
5) ***Օրենք***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

ԳԼՈՒԽ 2. ԱՆՈՒԻՏԵՏԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

1.[**](2) Անուիտետի պայմանագրով ապահովադիրը կամ նրա ամուսինը կամ նրանց լիազորված անձը իրավունք ունեն անուիտետի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը կամ դրա մի մասը մեկ ապահովագրական ընկերությունից (այսուհետ՝ ապահովագրական ընկերություն) փոխանցել այդ փոխանցումը ընդունող մեկ այլ ապահովագրական ընկերությանը (այսուհետ՝ նոր ապահովագրական ընկերություն), եթե ապահովագրական ընկերությունը տասներկուամսյա ժամանակահատվածում երկու և ավելի անգամ անուիտետ չի վճարել, ինչպես նաև երկու և ավելի անգամ անուիտետի պայմանագրի որևէ այլ խախտում է թույլ տվել: Այս դեպքում, ապահովադիրը կամ նրա ամուսինը կամ նրանց լիազորված անձն իրավունք ունեն իրենց նախաձեռնությամբ միակողմանի լուծել պայմանագիրը՝ ապահովագրական ընկերությունից պահանջելով վճարել մնացորդային գումարը և պատճառված վնասները:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀՊՏ N35 (479)[1], 28.12.2013):
[**] *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

2*(3). Փոխանցում իրականացնելու դեպքում ապահովադիրը պետք է նոր ապահովագրական ընկերության հետ լրացնի անուիտետի ձեռքբերման դիմում և սույն կարգով սահմանված անուիտետի փոխանցման դիմումը՝ համաձայն Հավելված 1-ի, ինչպես նաև ներկայացնի.

1) ապահովագրական ընկերության հետ կնքած անուիտետի պայմանագրի պատճենը

2) անուիտետի հաշվի վերջին քաղվածքը,

3) լիազորված անձի դեպքում՝ լիազորագիր

3*(4). Նոր ապահովագրական ընկերությունը փոխանցման դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացնի այն ապահովագրական ընկերությանը:

4*(5). Փոխանցման դիմումը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովագրական ընկերությունը պարտավորվում է նշված գումարը փոխանցել նոր ապահովագրական ընկերությանը:

ԳԼՈՒԽ 2*(3). ԱՆՈՒԻՏԵՏԻ ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

5*(6). Սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դեպքում ապահովագրական ընկերության կողմից նոր ապահովագրական ընկերությանը փոխանցվող գումարը հաշվարկվում է իբրև տվյալ ապահովագրական ընկերության հետ կնքված անուիտետի պայմանագրով վճարված ապահովագրավճարների մեծություն (կամ տվյալ ապահովագրական ընկերությանը փոխանցված միանվագ գումար) ներառյալ՝ տասներկուամսյա ժամանակահատվածում երկու և ավելի անգամ չվճարված անուիտետների մեծությունը և պայմանագրով նախատեսված տոկոսները՝ նվազեցրած մինչև փոխանցման պահը արդեն վճարված անուիտետները, ապահովագրության պայմանագրի հետ կապված փաստացի կատարված ծախսերը: Ընդ որում, սույն մասով նախատեսված ապահովագրավճարների փոխանցումը չի համարվում անուիտենտի կողմից դրանց միանվագ ստացում:

6*(7). Փոխանցման դեպքում փոխանցման հետ կապված, այդ թվում՝ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման տուժանք չի կարող կիրառվել:

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 319-Ն որոշման

Անուիտետի մնացորդային գումարի փոխանցման դիմում

Փոխանցվող անուիտետի պայմանագրի համարը _____
Տվյալ ապահովագրական ընկերության անվանումը _____
Տվյալ ապահովագրական ընկերության գործունեության հասցեն _____
Ապահովադրի/անուիտենտի անունը _____
Ապահովադիր/անուիտենտի անձնագրային տվյալներ _____
Ամուսինների անուիտետի դեպքում ամուսնու անունը _____
Ամուսինների անուիտետի դեպքում ամուսնու անձնագրային տվյալները _____
Լիազորված անձի անուն, ազգանունը _____
Լիազորված անձի անձնագրային տվյալները _____
Ժառանգ(ներ)ի անուն(ներ)ը _____
Ժառանգի անձնագրային տվյալներ _____

Հասցեատեր_____:
(տվյալ ապահովագրական ընկերության անվանումը)

Թույլատրում եմ իմ անուիտետի հաշվից փոխանցել _____ՀՀ դրամ
_____:
(նոր ապահովագրական ընկերության անունը)

Խնդրում եմ նվազեցումը կատարել.
____ անմիջապես
____ սկսած (ամսաթիվ) _____-ից

Նվազեցրած բոլոր միջոցները փոխանցել _____- ում բացված իմ անուիտետի հաշվին.
(նոր ապահովագրական ընկերության անվանումը)

_____ _____
Անուիտենտի ստորագրությունը *ամսաթիվ*

* *Պաշտոնական հրատարակության համարակալման մեջ սպրդել է տեխնիկական վրիպակ:*

Կուտակային կենսաթոշակային ավանդի գումարն այլ բանկում բացված կուտակային կենսաթոշակային ավանդային հաշվին փոխանցելու համար բանկի կողմից գանձվող վճարի առավելագույն չափը սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովել կամավոր կենսաթոշակային խնայողությունների օգտագործման արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1.1-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Կուտակային կենսաթոշակային ավանդի գումարը կամ դրա մի մասը այլ բանկում բացված կուտակային կենսաթոշակային ավանդային հաշվին փոխանցելու համար բանկի կողմից մասնակցից գանձվող վճարը չի կարող գերազանցել՝
   1) փոխանցվող գումարի երկու տոկոսը, եթե կուտակային կենսաթոշակային ավանդի ներդրման օրվանից անցել է ոչ ավելի, քան երկու տարի.
   2) փոխանցվող գումարի մեկ տոկոսը, եթե կուտակային կենսաթոշակային ավանդի ներդրման օրվանից անցել է առնվազն երկու տարի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 320-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

*«Ներդրումային ֆոնդի և դրա կառավարչի արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության կարգը» կանոնակարգ 10/18-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդերի և դրանց կառավարիչների գործունեության թափանցիկությունը և դրանց կողմից հրապարակվող տեղեկությունների արժանահավատությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի և դրա կառավարչի արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության կարգը» կանոնակարգ 10/18-ը՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 3 ամսվա ընթացքում ներդրումային ֆոնդերի կառավարիչներն ընդունում են սույն որոշման ուժի մեջ մտնելով պայմանավորված իրավական ակտերը և ընդունելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում դրանք ներկայացնում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:

3. Սույն որոշումը կիրառվում է աուդիտորական կազմակերպության կողմից ներդրումային ֆոնդի և դրա կառավարչի 2013 թվականի և դրանից հետո իրականացվող ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի նկատմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 321-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 321-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/18
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԵՎ ԴՐԱ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ներդրումային ֆոնդի (այդ թվում՝ կենսաթոշակային ֆոնդի) և դրա կառավարչի արտաքին աուդիտն իրականացնող անձի (աուդիտորական կազմակերպության) ընտրության կարգը:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Ներդրումային ֆոնդի կառավարիչը իր ներքին իրավական ակտերով սահմանում է ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ընտրության նկատմամբ սույն կանոնակարգի 3-րդ գլխում սահմանված չափանիշները մանրամասնող և դրանց գործնական կիրառումն ապահովող ընթացակարգերը, չափանիշների կիրառման մեթոդաբանությունը, աուդիտի ընդգրկման բնագավառները և սույն կանոնակարգի պահանջների կատարումն ապահովող այլ դրույթներ: Կառավարիչը կարող է սահմանել սույն կանոնակարգի 3-րդ գլխում սահմանված չափանիշներին չհակասող այլ չափանիշներ:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը՝

1) ***ֆինանսական կազմակերպություն***՝ բանկ, վարկային կազմակերպություն, ապահովագրական ընկերություն, ներդրումային ընկերություն, ներդրումային ֆոնդի կառավարիչ,

2) ***աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր***՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,

3) ***աուդիտորական խումբ***՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որն անմիջականորեն ընդգրկված է ներդրումային ֆոնդի, դրա կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի իրականացման մեջ:

4. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԱՐՏԱՔԻՆ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5. Կառավարիչն ընտրում է այն աուդիտորական կազմակերպությունը, որը բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշները.

1) ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման առնվազն 3 տարվա փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (http://www.accountancyage.com/static/top50-this-year, http://accountants.entrepreneur.com/, http://www.vault.com/wps/portal/usa/rankings/landing?rankingId=177&regionId=0 կայքերից որևէ մեկում տեղադրված ցանկում ներառված լավագույն 10 աուդիտորական ցանցերի լիիրավ անդամ հանդիսացող կազմակերպություններ),

2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա ֆինանսական կազմակերպության աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և առնվազն 3 ֆինանսական կազմակերպության աուդիտի իրականացման փորձ և միջազգային հաշվապահական և (կամ) աուդիտորական որակավորման (օրինակ՝ էյ-Սի-Սի-էյ, ՍԻ-Փի-էյ, Սի-Այ-էս-էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

3) աուդիտորական խմբում ներգրավված աշխատակիցների առնվազն կեսը պետք է ունենա աուդիտորական կազմակերպությունում առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

4) աուդիտորական կազմակերպությունը կառավարչի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու կառավարչի, աուդիտորական կազմակերպության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

6. Միևնույն պատասխանատու աուդիտորը չի կարող իրականացնել նույն կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը, եթե տվյալ ֆինանսական տարվան նախորդող 3 ֆինանսական տարիներին անընդմեջ իրականացրել է տվյալ կառավարչի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտը:

Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից մասնակիցներին ներկայացվող և հրապարակվող հաշվետվությունների կազմման և ներկայացման կարգը սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների կողմից հաշվետվությունների հրապարակման կանոնները,

հաշվի առնելով, որ «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվապահական հաշվառումն իրականացվում է ըստ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչները հրապարակվող հաշվետվությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների պահանջներին համապատասխան:

2. Սույն որոշման 1-ին կետի համաձայն կազմված հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ են ներկայացվում հրապարակումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

3. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված հաշվետվությունների ձևերը կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից ներկայացվում են կամավոր կենսաթոշակային ֆոնդի մասնակցին՝ նրա կողմից նման պահանջի դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունները թղթային եղանակով տրամադրելու համար կամավոր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչը մասնակից կարող է գանձել գումար, բայց ոչ ավելի, քան նշված հաշվետվությունների պատրաստման համար կատարված ծախսերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 322-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

Ներդրումային ֆոնդի և յուրաքանչյուր ենթաֆոնդի զուտ ակտիվների նվազագույն արժեքը սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով ապահովելու ներդրումային ֆոնդերի ֆինանսական կայունությունը,

հաշվի առնելով, որ պարտադիր կուտակային կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցը պետք է մշտապես հնարավորություն ունենա ընտրելու կառավարչի կողմից առաջարկվող յուրաքանչյուր պարտադիր կենսաթոշակային ֆոնդ,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Սահմանել, որ՝

1) ներդրումային ֆոնդերի (բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի) զուտ ակտիվների նվազագույն արժեքը կազմում է 100 հազար Հայաստանի Հանրապետության դրամ.

2) պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների նվազագույն արժեքը կազմում է զրո Հայաստանի Հանրապետության դրամ:

2. Սույն որոշմամբ սահմանված զուտ ակտիվների նվազագույն արժեքը կիրառվում է տվյալ ֆոնդի գրանցման պահից 6 ամիս հետո:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 323-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

*«Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» կանոնակարգ 10/06-ը հաստատելու մասին**

Հաշվի առնելով ներդրումային ֆոնդերի դերը ֆինանսական շուկայում և դրանց կարևորությունը կենսաթոշակային եկամուտների ապահովման հարցում,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասը, 70-րդ հոդվածի 4-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարչի ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգի նկատմամբ նվազագույն պահանջները» կանոնակարգ 10/06-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 324-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 324-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/06

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը տարածվում է այն ներդրումային ֆոնդի կառավարիչների վրա, որոնք իրականացնում են հրապարակային ֆոնդերի կառավարում (այդ թվում՝ պարտադիր և կամավոր կենսաթոշակային ֆոնդեր):

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում կիրառվող իմաստը:

ԳԼՈՒԽ 2. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

3. Կառավարիչը պարտավոր է ունենալ արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգ: Արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգը ներառում է ռազմավարություն, գործընթացներ և հաշվետվողականություն, որոնք անհրաժեշտ են նույնականացնելու, չափելու, մշտադիտարկելու, գնահատելու, վերահսկելու և ներկայացնելու բոլոր էական ռիսկերն առանձին և խմբավորված, ինչպես նաև այդ ռիսկերի փոխադարձ կախվածությունը:

4. Ռիսկերի կառավարման համակարգը պետք է բավարար չափով ինտեգրված լինի կառավարչի կազմակերպական կառուցվածքին և որոշումների ընդունման գործընթացներին:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

5. Ռիսկերի կառավարման համակարգը պետք է համաչափ լինի կառավարչի գործունեությանը և կառավարվող ֆոնդերի բնույթին, ծավալներին և բարդությանը՝ արտացոլելով կառավարչի գործունեության շրջանակները:

ԳԼՈՒԽ 3. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

6. Կառավարչի իրավասու մարմինը պետք է միջոցառումներ ձեռնարկի կառավարչի ռիսկերի կառավարման համակարգի սահմանման, գործարկման և կատարելագործման համար, ինչպես նաև կառավարչի բարձր մասնագիտական էթիկայի ստանդարտներ ներդնելու համար:

7. Կառավարչի իրավասու մարմինը պետք է սահմանի և մշտապես վերանայի կառավարչի ռիսկերի կառավարման ամբողջ համակարգը: Նշված գործընթացը ներառում է ռիսկերի ընդունելի մակարդակների, ինչպես նաև այդ ռիսկերի չափման և վերահսկման միջոցների սահմանումը:

8. Ռիսկերի գնահատման արդյունավետությունը պահպանելու նպատակով կառավարչի իրավասու մարմինը պետք է հաճախակի գնահատի և գրանցի այն ռիսկերը, որոնք ազդում են կառավարչի նպատակների իրագործման վրա, և արձագանքի փոփոխվող միջավայրին և պայմաններին:

9. Կառավարչի իրավասու մարմինը պետք է ստուգի, որ կառավարչի մոտ սահմանված ռիսկերի կառավարման համակարգը մշտապես գործում է արդյունավետ և անհրաժեշտ դեպքերում առկա են համապատասխան գործընթացներ կառավարչի ռազմավարությունը փոփոխելու (ճշգրտելու) համար:

10. Կառավարչի մոտ պետք է ներդրված լինի լիազորությունների հստակ բաժանում: Լիազորությունների բաժանումը պետք է արտացոլի այն ռիսկերի բնույթը և չափերը, որոնց հակված են կառավարիչը և դրա կառավարման ներքո գտնվող ֆոնդերը:

11. Կառավարիչը պետք է ունենա պատշաճ ներքին հսկողության համակարգ, որի հիմնական բնորոշիչը հանդիսանում է կառավարման տարբեր մակարդակների միջև համարժեք տեղեկատվության փոխանակման համար պատշաճ մեխանիզմների ստեղծումը:

12. Կառավարչի մոտ պետք է ներդրվի շահերի բախման քաղաքականություն՝ ներառելով դրա բացահայտման և վերանայման գործընթացները, ինչպես նաև վարվելակերպի կանոնները ամբողջ անձնակազմի համար:

ԳԼՈՒԽ 4. ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

13. Կառավարիչը պետք է ապահովի, որ ներքին հսկողության մեխանիզմները գործարկվեն կառավարչի բոլոր մակարդակներում և կազմեն կառավարչի առօրյա գործունեության անբաժանելի մասն ինչպես կառավարման վերին մակարդակում, այնպես էլ յուրաքանչյուր ստորաբաժանման մակարդակում:

14. Կառավարիչը պետք է ունենա համարժեք ռիսկերի մշտադիտարկման համակարգ: Ռիսկերի կառավարման համակարգը պետք է ապահովի, որ գործարքները կատարվեն նման իրավասություններ ունեցող անձանց կողմից, այն եղանակներով, որոնք թույլատրվել են կառավարչի իրավասու մարմնի կողմից:

ԳԼՈՒԽ 5. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

15. Կառավարչի մոտ պետք է ներդրվեն համարժեք և բազմակողմանի մեխանիզմներ ներքին տեղեկատվության, արտաքին տեղեկատվության և ֆինանսական շուկայի տեղեկատվության շրջանառության համար: Տեղեկատվությունը պետք է լինի հուսալի, արդիական և մատչելի: Կառավարիչը պետք է ունենա համապատասխան քաղաքականություն, որն ապահովում է գաղտնի տեղեկատվության պատշաճ օգտագործումը:

16. Կառավարիչը պետք է ներդնի արդյունավետ հաշվետվողականության մեխանիզմ: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի իրավասու անձանց ընկալելի ձևաչափով, պատշաճ հաճախականությամբ:

17. Կառավարչի մոտ պետք է ներդրվեն հաղորդակցության արդյունավետ մեխանիզմներ այնպես, որ յուրաքանչյուր անձի իրավասությունները լինեն հեշտ ընկալելի, և ապահովեն անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը համապատասխան անձնակազմին:

18. Կառավարչի իրավասու անձինք պետք է տեղեկացվեն կառավարչի մոտ ներքին հսկողության թերացումների կամ անարդյունավետ հսկվող ռիսկերի մասին դրանց բացահայտումից անմիջապես հետո:

*«Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5.1-րդ մասը, 52-րդ հոդվածի 6-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 325-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 325-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/20

«ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԱՆՁԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԿԱՐԳԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգի իմաստով հետևյալ հասկացությունները կիրառվում են հետևյալ նշանակությամբ.
1) ***երաշխիքային ֆոնդը կառավարող անձ***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված երաշխիքային ֆոնդի կառավարիչ:
2) ***Օրենք***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Օրենքի իմաստով կիրառվող նշանակությունը:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

ԳԼՈՒԽ 3. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Սույն կանոնակարգով սահմանված տեղեկությունները փոխանակվում են էլեկտրոնային եղանակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով:

5. Եթե տեղեկությունների ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա տեղեկությունների ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

6. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո փոխանակվող, սույն կանոնակարգով սահմանված ճշգրտված տեղեկությունները ներկայացվում են սույն կանոնակարգի 4-րդ կետի համաձայն: Ընդ որում, միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մի քանի ճշգրտված տեղեկությունների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված տեղեկությունը:

7. Եթե ներկայացվող տեղեկությունները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, ապա անհրաժեշտ է ներկայացնել գրություն այդ մասին:

8. Տեղեկությունները համարվում են ներկայացված և ընդունված, եթե դրանց էլեկտրոնային տարբերակները չունեն ծրագրային կամ այլ տեխնիկական թերություն:

ԳԼՈՒԽ 4. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Երաշխիքային ֆոնդը կառավարող անձը յուրաքանչյուր եռամսյակի վերջին օրվան հաջորդող քսանհինգ աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկին տրամադրում է տեղեկություններ երաշխիքային ֆոնդի միջոցների վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի հավելված 1-ի:

10. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների կողմից Օրենքով սահմանված ժամկետներում միանվագ կամ պարբերական երաշխիքային վճարները չկատարելու դեպքում երաշխիքային ֆոնդը կառավարող անձը Օրենքով սահմանված ժամկետը լրանալու հաջորդ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր տեղեկացնում է Կենտրոնական բանկին:

11. Անհրաժեշտության դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել Երաշխիքային ֆոնդը կառավարող անձից սույն կարգով սահմանված ժամկետներում և ձևերով Կենտրոնական բանկ ներկայացնել լրացուցիչ այլ տեղեկություններ:

ԳԼՈՒԽ 5. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Կենտրոնական բանկը երաշխիքային ֆոնդը կառավարող անձին տրամադրում է նոր լիցենզավորված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լրիվ ֆիրմային անվանումը, լիցենզիայի տրամադրման ամսաթիվը, լիցենզիայի համարը, այլ տեղեկություններ՝ Կենտրոնական բանկի հայեցողությամբ:

13. Սույն կանոնակարգի 12-րդ կետով սահմանված տեղեկությունները Կենտրոնական բանկը տրամադրում է երաշխիքային ֆոնդը կառավարող անձին՝ Օրենքով սահմանված նոր ստեղծված պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի լիցենզիա տրամադրելու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հավելված 1

«Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման ձևը և կարգը» կանոնակարգ 10/20-ի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(եռամսյակային)

Հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ՝ «__» _____ ____ թ.

Հաշվետու ժամանակաշրջանի վերջ՝ «__» _____ ____ թ.

Աղյուսակ 1. Երաշխիքային ֆոնդի միջոցների շարժը

(հզ. դրամ)

1	Երաշխիքային ֆոնդի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի սկզբին, որից մասհանումներ	
1.1	գործառնական, վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների նպատակներով	
1.2	այլ ներդրումների նպատակներով	
2	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում վճարված երաշխիքային վճարներ (2.1+2.2), այդ թվում՝	
2.1	պարբերաբար երաշխիքային վճարներ	
2.2	միանվագ երաշխիքային վճարներ	

3	Այլ մուտքեր (3.1+3.2+3.3), այդ թվում՝	
3.1	երաշխիքային վճարների կառավարումից ստացված եկամուտներ	
3.2	նախկինում հատուցած գումարների ստացում կառավարիչներից	
3.3	այլ եկամուտներ և միջոցներ	
4	Հատուցման հետ կապված ծախսեր (4.1+4.2), այդ թվում՝	
4.1	հատուցված գումարներ	
4.2	հատուցման հետ կապված այլ ծախսեր	
5	Գործառնական, վարչական ծախսերի և կապիտալ ներդրումների գծով կատարված վճարներ	
6	Երաշխիքային ֆոնդի միջոցները հաշվետու ժամանակաշրջանի վերջում (1+2+3-4-5)	
7	Կառավարիչների կողմից ուշացված վճարումներ	
8	Կառավարիչների կողմից չկատարված վճարումներ	

Աղյուսակ 2. Երաշխիքային ֆոնդի միջոցների տեղաբաշխման կառուցվածքը (ներդրումային պայուսակը)

Աղյուսակ 2.1. Պայուսակի ընդհանուր նկարագիրը

N		ծավալը * (հազ. դրամ)	եկամտ.** (%)	ժամկետ.*** (օր)	կշիռը**** (%)
1	2	3	4	5	6
1	Փաստացի ներդրումային պայուսակ (1.1+1.2), այդ թվում՝				
1.1	*դրամային ներդրումներ*				
1.2	*արտարժութային ներդրումներ*				
2	Ուղենիշային ներդրումային պայուսակ (2.1+2.2), այդ թվում՝				
2.1	*դրամային ներդրումներ*				
2.2	*արտարժութային ներդրումներ*				
3	Շեղումը ***** (3.1+3.2), այդ թվում՝				
3.1	*դրամային ներդրումներ (1.1-2.1)*				
3.2	*արտարժութային ներդրումներ (1.2-2.2)*				

** Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ*

*** Միջին կշռված եկամտաբերություն*

**** Միջին կշռված ժամկետայնություն*

***** Տեսակարար կշիռը ընդհանուր պայուսակում*

****** 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակների շեղումները հաշվարկվում են միջին կշռված մեթոդով*

Աղյուսակ 2.2. Արտարժույթով ներդրումների փոխարժեքները

N		Ներկա*	Ծրագր.**	Նախորդ***
1	*ԱՄՆ դոլար*			
2	*Եվրո*			
3	*Այլ*			

** Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ԿԲ փոխարժեքները*

*** Ծրագրային փոխարժեքներ*

**** Նախորդ հաշվետվության ժամանակ օգտագործված փոխարժեքները*

Աղյուսակ 2.3. ՀՀ դրամով ներդրումների նկարագիրը

N	Ակտիվի տեսակը, որում կատարվել է ներդրումը	ծավալը * (հզ. դրամ)	եկամտ.** (%)	ժամկետ.*** (օր)	կշիռը**** (%)
1	2	3	4	5	6
1	Փաստացի ներդրված գումարներ, այդ թվում՝				
1.1					
1.2					
…					
2	Ուղենիշային ներդրումային պայուսակ, այդ թվում՝				
2.1					
2.2					
…					
3	Շեղում*****, այդ թվում՝				
3.1					
3.2					
…	…				

** Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ*

*** Միջին կշռված եկամտաբերություն*

**** Միջին կշռված ժամկետայնություն*

***** Տեսակարար կշիռը ընդհանուր պայուսակում*

****** 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակների շեղումները հաշվարկվում են միջին կշռված մեթոդով*

Աղյուսակ 2.4. Արտարժույթով ներդրումների նկարագիրը

N	Ակտիվի տեսակը, որում կատարվել է ներդրումը	ծավալը * (հզ. դրամ)	եկամտ.** (%)	ժամկետ.*** (օր)	կշիռը**** (%)
1	2	3	4	5	6
1	**Փաստացի ներդրված միջոցներ, այդ թվում՝**				
1.1					
1.1.1	*ԱՄՆ դոլար*				
1.1.2	*Եվրո*				
1.1.3	*Այլ*				
1.2					
1.2.1	*ԱՄՆ դոլար*				
1.2.2	*Եվրո*				
1.2.3	*Այլ*				
…	…				
2	**Ուղենիշային ներդրումային պայուսակ, այդ թվում՝**				
2.1					
2.1.1	*ԱՄՆ դոլար*				
2.1.2	*Եվրո*				
2.1.3	*Այլ*				
2.2					
2.2.1	*ԱՄՆ դոլար*				
2.2.2	*Եվրո*				
2.2.3	*Այլ*				
…	…				
3	**Շեղումները***** , այդ թվում՝**				
3.1					
3.1.1	*ԱՄՆ դոլար (1.1.1-2.1.1)*				
3.1.2	*Եվրո (1.1.2-2.1.2)*				
3.1.3	*Այլ (1.1.3-2.1.3)*				
3.2					
3.2.1	*ԱՄՆ դոլար (1.2.1-2.2.1)*				
3.2.2	*Եվրո (1.2.2-2.2.2)*				
3.2.3	*Այլ (1.2.3-2.2.3)*				
…	…				

** Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ*

*** Միջին կշռված եկամտաբերություն*

**** Միջին կշռված ժամկետայնություն*

***** Տեսակարար կշիռը ընդհանուր պայուսակում*

****** 4-րդ, 5-րդ և 6-րդ այունակների շեղումները հաշվարկվում են միջին կշռված մեթոդով*

Աղյուսակ 2.5. Ներդրումների նկարագիրը ըստ հաստատությունների

		Վարկանիշ*	ժամկետ.**	կազմակեր-պություն***	ծավալը **** (հզ. դրամ)	կշիռը***** (%)
1	2	3	4	5	6	7
1						
2						
3						
4						
5						
…						
Ընդամենը						

** Հաստատության վարկանիշը*

*** Վարկանիշի տրման ամսաթիվը*

**** Վարկանիշ տված կազմակերպությունը*

***** Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ*

****** Տեսակարար կշիռը ընդհանուր պայուսակում*

Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի իրավասու անձ՝

Երաշխիքային ֆոնդը կառավարող անձի գլխավոր հաշվապահ՝

*«Երաշխիքային ֆոնդը կառավարող անձին կենսաթոշակային գաղտնիքի տրամադրման կարգը» կանոնակարգ 10/21-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների կուտակային վճարների վերադարձելիությունը երաշխավորող ֆոնդի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 21.1-րդ հոդվածի 1-ին մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Երաշխիքային ֆոնդը կառավարող անձին կենսաթոշակային գաղտնիքի տրամադրման կարգը» կանոնակարգ 10/21-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 326-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 326-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/21

«ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԱՆՁԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ»

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է երաշխիքային ֆոնդը կառավարող անձին Կենտրոնական բանկից կամ կենսաթոշակային գաղտնիքին տիրապետող այլ անձանցից կենսաթոշակային գաղտնիք կազմող (պարունակող) տեղեկատվության տրամադրման կարգը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգի իմաստով հետևյալ հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***երաշխիքային ֆոնդը կառավարող անձ***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված երաշխիքային ֆոնդի կառավարիչ:

2) ***Օրենք***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն Օրենքի իմաստով կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՖՈՆԴԸ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԱՆՁԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ԿԱԶՄՈՂ ԿԱՄ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Երաշխիքային ֆոնդը կառավարող անձը մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների հատուցման դեպք առաջանալու դեպքում Կենտրոնական բանկից կամ կենսաթոշակային գաղտնիքին տիրապետող այլ անձանցից կենսաթոշակային գաղտնիք կազմող (պարունակող) տեղեկություններ ստանալու անհրաժեշտության դեպքում այդ անձանց գրավոր կամ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով կատարում է հարցում:

5. Սույն կանոնակարգի 4-րդ կետով սահմանված հարցումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Կենտրոնական բանկը կամ կենսաթոշակային գաղտնիքին տիրապետող այլ անձը գրավոր կամ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով երաշխիքային ֆոնդը կառավարող անձին է տրամադրում համապատասխան հարցման մեջ նշված կենսաթոշակային գաղտնիք կազմող (պարունակող) տեղեկությունները:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

*«Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը» կանոնակարգ 10/22-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման գործընթացի ամբողջականությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից այդ գործընթացի արդյունավետ վերահսկողությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը, 74-րդ հոդվածի 1-ին մասը, 75-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը» կանոնակարգ 10/22-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 327-Ն

Հավելված

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 327-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/22

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների (այսուհետ՝ կառավարիչ) կողմից միացման պայմանագրի կնքման համար նախնական համաձայնություն ստանալու համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող տեղեկությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները, միացման պայմանագրի հաստատման համար ներկայացվող փաստաթղթերը և տեղեկությունները, հաստատված փոխանցման ակտի և պահպանվող կառավարչի կանոնադրությունը կամ կանոնադրության փոփոխությունները և լրացումները գրանցելու համար այդ փաստաթղթերը Կենտրոնական բանկ ներկայացնելու կարգը, ինչպես նաև միացման մասին հայտարարության հրապարակման կարգը:

2. Սույն կանոնակարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն, կամ ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, բացառությամբ սույն կանոնակարգի 2-րդ գլխով սահմանված ղեկավարների մասին տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով: Ընդ որում, ղեկավարների մասին տեղեկությունները ներկայացվում են էքսել (excel) ֆորմատով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն կառավարչի (կառավարիչների) իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

3. Միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնությունը ստանալու նպատակով միացման մասին որոշման ընդունումից հետո տասը աշխատանքային օրվա ընթացքում միացող և պահպանվող կառավարիչները Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 2-րդ մասով ներկայացված փաստաթղթերը, ընդ որում՝
   ա. միացմանը նախնական համաձայնություն ստանալու մասին դիմումը ներկայացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,
   բ. գործարքի էական պայմանները ներկայացվում են սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված միացման պայմանագրի նախագծում ներառման միջոցով,
   գ. միացման արդյունքում պահպանվող կառավարչի առաջիկա երեք տարիների գործարար ծրագիրը ներկայացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 10/01) հավելված 16-ի,
   դ. պահպանվող կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու նախնական համաձայնություն ստանալու մասին նշանակալից մասնակցություն ձեռք բերող անձի դիմումը և այլ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացվում են համաձայն Կանոնակարգ 10/01-ի:
2) միացող և պահպանվող կառավարիչների միջև կնքվող միացման պայմանագրի նախագիծը, որում ներառվում են.
   ա. միացող և պահպանվող կառավարիչների անվանումները և գրանցման տվյալները,
   բ. միացման կարգը, պայմանները և ժամկետները, միացող կառավարչի բաժնետոմսերի (բաժնեմասերի) և այլ արժեթղթերի փոխարկման կարգը՝ բանաձևային կամ այլ ստանդարտ ձևով,
   գ. միացող և պահպանվող կառավարիչների բաժնետոմսերի (բաժնեմասերի) դիմաց շահութաբաժիններ (շահույթ) ստանալու կարգը և պայմանները,
   դ. համատեղ ժողովում քվեարկության և որոշումների ընդունման կարգը,
   ե. միացմանը մասնակցող կառավարիչների համատեղ ժողովի գումարման ժամկետը, հրավիրման և անցկացման կարգը,
   զ. այլ տեղեկություններ՝ միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ,
   է. կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
   ը. դրույթ կողմերի պարտավորության մասին, համաձայն որի՝ կողմերը կապահովեն, որպեսզի պայմանագիրը Կենտրոնական բանկի հաստատմանը ներկայացնելու պահին առկա չլինեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հիմքերը:
3) միացման հիմնավորումը, որտեղ նշվում են միացման անհրաժեշտությունը և նպատակը,
4) միացման մասին որոշման ընդունման օրվա դրությամբ միացող կառավարիչների հաշվեկշիռը և ընդհանուր կապիտալի նվազագույն չափը և ֆոնդերում մասնակցության չափը և հաշվարկը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ի համապատասխանաբար թիվ 1 և թիվ 3 հաշվետվական ձևերի,
5) աուդիտ իրականացնող անձի եզրակացությունը՝ միացման պայմանագրի նախագծի մասին և «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված տնտեսական նորմատիվների պահանջներին միացման արդյունքում պահպանվող կառավարչի համապատասխանության մասին,
6) փոխանցման ակտի նախագիծը,
7) պահպանվող կառավարչի կանոնադրության փոփոխության դեպքում՝ պահպանվող կառավարչի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրության նախագիծը կամ կանոնադրության փոփոխությունների ու լրացումների նախագիծը, պահպանվող կառավարչի ներքին կազմակերպական կառուցվածքը՝ սխեմատիկ տեսքով,

8) միացման արդյունքում պահպանվող կառավարչի ղեկավարների փոփոխության դեպքում՝ նոր ղեկավարների մասին «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և պահառուների ղեկավարների ու ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն իրականացնող և ներդրումային ֆոնդի պահառություն իրականացնող ֆիզիկական անձանց որակավորումը, նրանց մասնագիտական համապատասխանության չափանիշներն ու մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը» կանոնակարգ 10/05-ի (այսուհետ՝ Կանոնակարգ 10/05) Հավելված 2-ով պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե տվյալ ղեկավարի գրանցման կամ սույն կանոնակարգի համաձայն միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնության համար նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 10/05-ի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը, ապա Հավելված 2-ով սահմանված տեղեկությունները Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող են լրացվել միայն հավելված 2-ի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է,

9) միացմանը մասնակցող կողմերի հայեցողությամբ այլ էական տեղեկություններ, որոնք կարտացոլեն միացման առանձնահատկությունները:

4. Կենտրոնական բանկը կարող է պահանջել միացման վերաբերյալ այլ տեղեկատվություն՝ սույն կանոնակարգի 3-րդ կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

5. Միացման պայմանագրի կնքման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու պահից մեկամսյա ժամկետում, միացող և պահպանվող կառավարիչները Կենտրոնական բանկի խորհրդի կողմից միացման պայմանագրի հաստատման համար Կենտրոնական բանկ են ներկայացնում հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները.

1) միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,

2) միացման պայմանագիրը՝ ստորագրված միացող և պահպանվող կառավարիչների գործադիր մարմնի ղեկավարի կողմից, որին կցվում է կառավարչի մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումները կամ համապատասխան արձանագրություններից քաղվածքներ միացման պայմանագիրը հաստատելու վերաբերյալ:

6. Միացման պայմանագրի կնքման նախնական համաձայնություն ստանալու համար Կենտրոնական բանկ ներկայացված սույն կանոնակարգի 3-րդ կետով (բացառությամբ 5-րդ ենթակետի) նախատեսված փաստաթղթերն ու տեղեկությունները, եթե դրանցում տեղի են ունեցել փոփոխություններ: Միացման պայմանագիրը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց և միացման պայմանագրով սահմանված ժամկետներում միացման պայմանագրով նախատեսված միջոցառումներն իրականացնելուց հետո տասնօրյա ժամկետում միացման մասին որոշում ընդունած կառավարիչները Կենտրոնական բանկի գրանցմանն են ներկայացնում.

1) միացման մասին որոշում ընդունած կառավարիչների հաստատած փոխանցման ակտը՝ միացող և պահպանվող կառավարիչների իրավասու անձանց ստորագրություններով և այդ կառավարիչների կնիքներով (առկայության դեպքում),

2) պահպանվող կառավարչի նոր խմբագրությամբ հաստատված կանոնադրությունը կամ կանոնադրության լրացումները և փոփոխությունները՝ Կանոնակարգ 10/01-ով սահմանված կարգով,

3) պահպանվող կառավարչի ֆիրմային անվանման փոփոխության դեպքում ֆիրմային անվանման փոփոխության գրանցման հայտը,

4) պահպանվող կառավարչի ղեկավարների կազմում փոփոխության դեպքում Կանոնակարգ 10/05-ով ղեկավարների գրանցման համար պահանջվող տեղեկությունները: Ընդ որում, եթե ղեկավարի գրանցման համար կամ սույն կանոնակարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետով և (կամ) 4-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում նախկինում Կենտրոնական բանկ է ներկայացվել Կանոնակարգ 10/05-ի Հավելված 2-ով պահանջվող ողջ տեղեկատվությունը և հետագայում կառավարիչը դիմում է Կենտրոնական բանկ տվյալ անձին գրանցելու միջնորդությամբ, ապա Հավելված 2-ով սահմանված միջնորդագիրը Կանոնակարգ 10/05-ի համաձայն Կենտրոնական բանկ ներկայացնելիս կարող է լրացվել միայն միջնորդագրի 2.1 (Անուն, ազգանուն, հայրանուն), 2.3 (Ծննդյան ամսաթիվ) դաշտերը և բոլոր այն դաշտերը, որոնցում նախկինում ներկայացված տեղեկատվությունը փոփոխվել է:

7. Միացման արդյունքում լիցենզիայի վերաձևակերպման անհրաժեշտության դեպքում սույն կանոնակարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերի հետ միասին պահպանվող կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում լիցենզիայի վերաձևակերպման դիմումը՝ համաձայն Կանոնակարգ 10/01-ի:

8. Եթե սույն կանոնակարգի 3-րդ, 4-րդ, 5-րդ կամ 6-րդ կետերով պահանջվող տեղեկությունները (փաստաթղթերը) ներկայացնելուց հետո ներկայացված տեղեկություններում (փաստաթղթերում) կատարվել են փոփոխություններ, ապա միացող կառավարիչները փոփոխված տեղեկությունները (փաստաթղթերը) Կենտրոնական բանկ են ներկայացնում համապատասխան փոփոխությունները տեղի ունենալու մասին տեղեկանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև Կենտրոնական բանկի կողմից համապատասխանաբար միացման պայմանագրի կնքմանը նախնական համաձայնություն տրամադրելու կամ տրամադրումը մերժելու, միացման պայմանագիրը հաստատելու կամ հաստատումը մերժելու կամ 6-րդ կետով սահմանված տեղեկությունների (փաստաթղթերի) գրանցման կամ գրանցումը մերժելու մասին որոշման կայացումը:

ԳԼՈՒԽ 3. ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ՄԻԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Միացման մասին հայտարարությունը հրապարակվում է կառավարչի կայքի՝ հասցեն մուտքագրելուց հետո հայտնվող առաջին էջում (կառավարչի կայքի գլխավոր (առաջին) էջ) անմիջականորեն (ոչ թափվող մենյուի միջոցով):

10. Սույն կանոնակարգի 9-րդ կետի համաձայն կառավարչի կայքում, ինչպես նաև «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն մամուլում հրապարակման ենթակա միացման մասին հայտարարության մեջ առնվազն նշվում են միացող և պահպանվող կառավարիչների գործունեության վայրերը, հեռախոսահամարները, ինտերնետային կայքի հասցեները, էլեկտրոնային հասցեները, ինչպես նաև պայմանագիրը լուծելու՝ ֆոնդի մասնակցի իրավունքի և այդ իրավունքի իրականացման պայմանների, ժամկետների և կարգի մասին տեղեկություններ:

Հավելված 1

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը»
կանոնակարգ 10/22-ը Հավելվածի

Դ Ի Մ Ու Մ

(միացման նախնական համաձայնություն ստանալու)

Հարգելի _____

_____

(դիմողի (դիմողների) անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գործունեության վայրը)

Համաձայն միացող ֆոնդի կառավարչի ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ _____ որոշման և պահպանվող ֆոնդի կառավարչի ընդհանուր ժողովի __/__/20__ թվականի թիվ _____ որոշման՝ դիմում ենք միացման նախնական համաձայնություն ստանալու համար:

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 327-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը» կանոնակարգ 10/22-ի՝ կից ներկայացնում ենք միացման նախնական համաձայնություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և դրանց ցանկը:

Առդիր՝_____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է դիմումի մերժմանը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Դիմումը ներկայացնող անձինք՝ _____
(պահպանվող կառավարչի իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

_____
(միացող կառավարչի (կառավարիչների) իրավասու անձի (անձանց) անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.

Հավելված 2

«Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը»
կանոնակարգ 10/22-ը Հավելվածի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

(միացման պայմանագիրը հաստատելու)

Հարգելի _____

_____

(դիմողի անվանումը, գործունեության իրականացման վայրը)

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 327-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների միացման կարգը» կանոնակարգ 10/22-ի՝ կից Ձեր հաստատմանն ենք ներկայացնում _____ որոշմամբ հաստատված միացման պայմանագիրը և կից փաստաթղթերը:

Առդիր _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն դիմումին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Խնդրում ենք Ձեր համաձայնությունը:

Դիմումը ներկայացնող անձինք _____

(պահպանվող կառավարչի իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

_____

(միացող կառավարչի (կառավարիչների) իրավասու անձի (անձանց) անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ 20__ թ.

*«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ը հաստատելու մասին**[*]

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդի կառավարիչների ինքնալուծարման (լուծարման) գործընթացի արդյունքում ներդրումային ֆոնդի կառավարիչների պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, ներդրումային ֆոնդի կառավարիչների ինքնալուծարման (լուծարման) գործընթացի ամբողջականությունը, ինքնալուծարման (լուծարման) գործընթացի իրականացման արդյունքում առաջացող ռիսկերի նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից արդյունավետ վերահսկողությունը, ինչպես նաև ինքնալուծարման (լուծարման) գործընթացի թափանցիկությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը, 80-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետը, 82-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը, 83-րդ հոդվածի 5-րդ մասը, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը, «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի «դ» ենթակետը, 33-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 328-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27 -ի թիվ 328-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԿԱՌԱՎԱՐՉԻ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ԿԱՌԱՎԱՐՉԻ) ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/23

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի կամ լուծարային կառավարչի (այսուհետ՝ լուծարային հանձնաժողով) կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի կողմից հրապարակվող տեղեկությունների ցանկը, հրապարակման կարգը և ձևը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) ***«Ամսաթիվ»***՝ ամսաթիվը/ամիսը/տարեթիվը, օրինակ՝ 01/01/2014 թ.:

2) ***«Լուծարային գործընթացի սկիզբ»***՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարչի (այսուհետ՝ կառավարիչ) լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օր (կառավարչի սնանկության դեպքում՝ Կենտրոնական բանկի՝ կառավարչին սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարանի կողմից բավարարելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օր):

3) ***«Հաշվետու ամիս»***/«Հաշվետու ժամանակաշրջան»՝ օրացուցային տարվա սկզբից մեկ ամիս պարբերականությամբ հաշվարկվող ժամանակաշրջան: Լուծարային հանձնաժողովի համար առաջին հաշվետու ամիս է համարվում կառավարչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելու ամիսը (կառավարչի սնանկության դեպքում՝ Կենտրոնական բանկի՝ կառավարչին սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարանի կողմից բավարարելու մասին որոշման ուժի մեջ մտնելու ամիսը), եթե սույն կանոնակարգով այլ բան նախատեսված չէ:

4) ***«Կանոնակարգ 10/03»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03:

3. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող նշանակությունը:

ԲԱԺԻՆ 2. ԿԱՌԱՎԱՐՉԻ ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնություն ստանալու համար կառավարիչը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

1) կառավարչի լուծարման նախնական համաձայնություն ստանալու դիմում՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի,

2) կառավարչի լուծարման նպատակով Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու մասին ընդհանուր ժողովի որոշումը,
3) կառավարչի ինքնալուծարման հիմնավորումը,
4) կառավարչի ակտիվների վաճառքի ու պարտավորությունների մարման (փոխհատուցման) հնարավոր տարբերակների նկարագրությունը, նվազագույն ծախսերի տեսանկյունից նախընտրելի տարբերակը,
5) կառավարչի ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռային հոդվածների գույքագրման արդյունքները,
6) ընթացիկ և սպասվող դատական գործերի վերաբերյալ տեղեկանք, կառավարչի վրա դրանց ազդեցության գնահատումը (հնարավոր ծախսեր, կառավարչի ակտիվների արգելանք և այլն),
7) տեղեկություններ այն մասին, թե արդյոք կառավարչի հետ միասին կառավարչի դուստր կազմակերպությունները լուծարվելու են (առկայության դեպքում): Դուստր կազմակերպությունների լուծարման դեպքում դրանց անվանումները և կառավարչի մասնակցության չափը (տոկոսային և բացարձակ մեծությամբ) տվյալ դուստր կազմակերպության կանոնադրական կապիտալում,
8) կառավարչի մասնակիցների (բաժնետերերի) կողմից տրվող երաշխավորություն (եթե այդպիսիք կան)՝ կառավարչի պարտավորությունները մարելու համար միջոցների անբավարարության դեպքում իրենց սեփական միջոցների հաշվին այդ պարտավորությունները մարելու համար,
9) անկախ աուդիտորական կազմակերպության կողմից հաստատված կառավարչի վերջին միջանկյալ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները սահմանող իրավական ակտի,
10) այլ էական տեղեկատվություն, որը կարտացոլի լուծարման առանձնահատկությունները,
11) Կենտրոնական բանկի կողմից պահանջվող ինքնալուծարման վերաբերյալ այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն կետում նշված տեղեկատվության հավաստիությունը գնահատելու համար:

5. Սույն գլխով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն, կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն կառավարչի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 4. ԻՆՔՆԱԼՈՒԾԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Լուծարման մասին որոշման ընդունումից հետո եռօրյա ժամկետում կառավարիչը ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.
1) լուծարման թույլտվություն ստանալու միջնորդագիր՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 2-ի,
2) կառավարչի լուծարման ընդհանուր ժողովի որոշումը և ժողովի արձանագրությունը,
3) կառավարչի կառավարման բարձրագույն մարմնի կողմից հաստատված կառավարչի լուծարման նախագիծը, որը պետք է ներառի.
   ա. լուծարման նվազագույն և առավելագույն ժամկետները,
   բ. իրականացվելիք միջոցառումները և գործողությունները, դրանց իրականացման ժամանակացույցը,
   գ. պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հետո մնացած միջոցները կառավարչի մասնակիցների (բաժնետերերի) միջև բաշխելու կարգը,
   դ. լուծարային հանձնաժողովի կազմը,
   ե. լուծարային հանձնաժողովի լիազորություններն ու պարտականությունները,
   զ. լուծարային հանձնաժողովի անդամների ամսական վարձատրության չափը և ծախսերի ամսական սահմանաչափերը,
   է. լուծարային հանձնաժողովի աշխատակարգը և նիստերի անցկացման, որոշումների ընդունման կարգը,
   ը. լուծարման ընթացքում կառավարչի կառավարման կարգը, կառավարչի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, կառավարչի կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիոնալ պարտականությունները,
   թ. լուծարային հանձնաժողովի գործունեության դադարեցման կարգը,
4) տեղեկություններ կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնությունից մինչև թույլտվությունն ընկած ժամանակահատվածում պարտատերերի պահանջների բավարարման գործընթացի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի: Ընդ որում՝ նշված ժամանակահատվածի համար Հավելված 5-ը լրացնելիս հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ է համարվում ինքնալուծարման նախնական համաձայնության տրամադրման մասին Կենտրոնական բանկի որոշման ուժի մեջ մտնելու օրը, իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջին օր է համարվում կառավարչի ընդհանուր ժողովի կողմից լուծարման մասին որոշման ուժի մեջ մտնելու օրը: Պարտատերերի պահանջների բավարարման հերթերը լրացնելիս հիմք է ընդունվում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հերթականությունը:
5) սույն կանոնակարգի 0-րդ կետի 4-ից 10-րդ ենթակետերով սահմանված տեղեկություններում տեղի ունեցած փոփոխությունները, ընդ որում՝ 0-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված որևէ հաշվետվությունում փոփո-

խության դեպքում ներկայացվում է տվյալ հաշվետվությունը՝ առանց անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացության,

6) Կենտրոնական բանկի կողմից պահանջվող ինքնալուծարման վերաբերյալ այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են սույն կետում նշված տեղեկատվության հավաստիությունը ստուգելու համար:

7. Սույն գլխով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն, կամ ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն կառավարչի իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԲԱԺԻՆ 3. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

8. Լուծարային հանձնաժողովը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝ նշված հաճախականությամբ.

N	Հաշվետվության անվանումը	Հաշվետվության թիվը	Ներկայացման պարբերականությունը
1	*2*	*3*	*4*
1.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված (չներկայացված) պահանջների վերաբերյալ	1	միանվագ
2.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի պարտապանների նկատմամբ կառավարչի պահանջների վերաբերյալ	2	միանվագ
3.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի հաշվեկշռի վերաբերյալ	3	ամսական
4.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի եկամուտների և ծախսերի վերաբերյալ	4	ամսական
5.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված պահանջների բավարարման գործընթացի վերաբերյալ	5	ամսական
6.	Հաշվետվություն պարտապանների կողմից լուծարվող կառավարչի պահանջների բավարարման գործընթացի վերաբերյալ	6	ամսական
7.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի արգելանքի տակ գտնվող գույքի վերաբերյալ	7	ամսական
8.	Հաշվետվություն լուծարվող կառավարչի գույքի իրացման և դուրսգրման վերաբերյալ	8	ամսական
9.	Հաշվետվություն լուծարային գործընթացի իրականացման համար կատարված ծախսերի վերաբերյալ	9	ամսական

ԳԼՈՒԽ 6. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

9. Սույն կանոնակարգի 8-րդ կետով սահմանված հաշվետվությունները լուծարային հանձնաժողովի կողմից Կենտրոնական բանկ են ներկայացվում Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Սի-Բի-էյ-նեթ համակարգին միացված չլինելու դեպքում հաշվետվության էլեկտրոնային տարբերակը Կենտրոնական բանկ է ներկայացվում ինտերնետով՝ հաշվետվությունների ընդունման համակարգով: Այդ համակարգերի խափանման դեպքում հաշվետվությունները ներկայացվում են մագնիսական կամ էլեկտրոնային կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:

10. Հաշվետվությունների անվանումները պետք է կոդավորվեն:

11. Հաշվետվության անվանման կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

Կոդը	հաշվետվության համարը	կետ	հապավումը
XXXXX	XXXX	.	Xls

12. Սույն կանոնակարգի 11-րդ կետով սահմանված «Կոդը» սյունակում լրացվում է լուծարվող կառավարչին Կենտրոնական բանկի կողմից նախկինում շնորհված կոդը՝ վերջում ավելացնելով «L» տառը, իսկ «Հաշվետվության համարը» սյունակում հաշվետվության համարի առաջին երկու նիշերի փոխարեն՝ «LH», իսկ 3-4-րդ նիշերի փոխարեն՝ հաշվետվության հերթական համարը: Կոդավորման նշված կարգի պահպանումը պարտադիր է:

13. Միանվագ հաշվետվությունները ներկայացվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո 7 օրվա ընթացքում:

14. Ամսական հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը (ներառյալ):

15. Եթե ներկայացվող տվյալները հաշվետու ժամանակաշրջանում փոփոխություն չեն կրել, կամ եթե հաշվետվությանն առնչվող գործարքներ չեն իրականացվել, ապա լուծարային հանձնաժողովը դրանց փոխարեն ներկայացնում է գրություն, որտեղ նշվում են չներկայացվող հաշվետվությունների անվանումները:

16. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:

17. Սույն կանոնակարգով սահմանված ժամկետներից հետո ներկայացվող ճշգրտված հաշվետվությունները ներկայացվում են էլեկտրոնային տարբերակով սույն կանոնակարգի 0-րդ կետի համաձայն: Ընդ որում, միևնույն հաշվետու ժամանակաշրջանի համար մի քանի ճշգրտված հաշվետվությունների ներկայացման դեպքում հավաստի է համարվում ներկայացված վերջին ճշգրտված հաշվետվությունը:

ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

18. Ամսական հաշվետվություններում «Ամսաթիվը _____թ-ից մինչև _____ թ.» լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի առաջին և վերջին օրվա ամսաթվերը: Հաշվետվությունները պետք է պարունակեն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա (եթե ընկերությունն աշխատել է հանգստյան կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ոչ աշխատանքային օրը, ապա՝ այդ օրվա) դրությամբ տվյալները:

19. Սույն կանոնակարգով սահմանված հաշվետվություններում արտարժույթով արտահայտված պահանջները և պարտավորությունները լրացվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված հաշվետու օրվա համար Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

20. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, չպետք է լրացվի «յունիկոդով», երկու լրացված տողերի միջև ամբողջությամբ դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից: Սույն կետի պահանջը չի տարածվում լուծարային հանձնաժողովի վրա, եթե հաշվետվության էլեկտրոնային տարբերակի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունն առկա է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված ֆայլերում:

21. Հաշվետվությունները լրացնելիս տեղեկատվությունը պետք է ներկայացնել առանց չակերտների, միայն հայերեն տառերով (տառատեսակ՝ Թայմզ Արմենիան):

ԳԼՈՒԽ 8. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ (ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ) ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 1 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

22. Թիվ 1 հաշվետվությունն արտացոլում է լուծարվող կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված (չներկայացված) պահանջների վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ յուրաքանչյուր պարտատիրոջ և պահանջների բավարարման հերթականության: Ընդ որում՝ բավարարման ենթակա պահանջների հերթերը լրացնելիս հիմք է ընդունվում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հերթականությունը՝ կախված կառավարչի լուծարման հիմքից: Սույն հաշվետվությունը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 3-ի:

23. Թիվ 1 հաշվետվությունում հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվ տողում լրացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի վերջին օրվա ամսաթիվը:

24. Թիվ 1 հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում են կառավարչի պարտատերերի անունները, ազգանունները/անվանումները՝ ըստ պահանջների բավարարման հերթականության:

25. Թիվ 1 հաշվետվության «ՀՀ դրամ» սյունակներում լրացվում են յուրաքանչյուր պարտատիրոջ կողմից լուծարվող կառավարչին ներկայացրած (չներկայացրած) պահանջները՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացառությամբ արտարժութային պահանջների:

26. Թիվ 1 հաշվետվության «արտարժույթ» սյունակներում լրացվում են յուրաքանչյուր պարտատիրոջ կողմից կառավարչին ներկայացրած (չներկայացրած) արտարժութային պահանջները՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

27. Թիվ 1 հաշվետվության 3-րդ և 4-րդ սյունակներում լրացվում է յուրաքանչյուր պարտատիրոջ կողմից հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ լուծարվող կառավարչին ներկայացրած պահանջների ընդհանուր գումարը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

28. Թիվ 1 հաշվետվության 5-րդ և 6-րդ սյունակներում լրացվում են կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված այն պահանջները, որոնք ենթակա են բավարարման լուծարային հանձնաժողովի կողմից:

29. Թիվ 1 հաշվետվության 7-րդ և 8-րդ սյունակներում լրացվում են կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված այն պահանջները, որոնց բավարարումը մերժվել է լուծարային հանձնաժողովի կողմից:

30. Թիվ 1 հաշվետվության 9-րդ և 10-րդ սյունակներում լրացվում են կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված այն պահանջները, որոնց բավարարման գործընթացը հաշվետվության լրացման հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գտնվում է քննարկման փուլում լուծարային հանձնաժողովի կողմից:

31. Թիվ 1 հաշվետվության 11-րդ և 12-րդ սյունակներում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ առկա այն պահանջները, որոնք պարտատերերի կողմից չեն ներկայացվել պահանջների ներկայացման համար սահմանված ժամկետում:

ԳԼՈՒԽ 9. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 2 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Թիվ 2 հաշվետվությունը արտացոլում է լուծարվող կառավարչի պարտապանների նկատմամբ լուծարվող կառավարչի պահանջների վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ յուրաքանչյուր պարտապանի: Սույն հաշվետվությունը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 4-ի:

33. Թիվ 2 հաշվետվությունում հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվ տողում լրացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի վերջին օրվա ամսաթիվը:

34. Թիվ 2 հաշվետվության «ՀՀ դրամ» սյունակներում լրացվում են լուծարվող կառավարչի յուրաքանչյուր պարտապանի նկատմամբ լուծարվող կառավարչի պահանջները՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով՝ բացառությամբ արտարժութային պահանջների:

35. Թիվ 2 հաշվետվության «արտարժույթ» սյունակներում լրացվում են լուծարվող կառավարչի յուրաքանչյուր պարտապանի նկատմամբ լուծարվող կառավարչի արտարժութային պահանջները՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով:

36. Թիվ 2 հաշվետվության 4-րդ և 5-րդ սյունակներում լրացվում են լուծարվող կառավարչի պարտապանների նկատմամբ լուծարվող կառավարչի պահանջները լուծարային գործընթացի սկզբի դրությամբ:

37. Թիվ 2 հաշվետվության 6-րդ և 7-րդ սյունակներում լրացվում է լուծարվող կառավարչի յուրաքանչյուր պարտապանի նկատմամբ լուծարվող կառավարչի պահանջների մնացորդը՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի վերջին օրվա դրությամբ:

ԳԼՈՒԽ 10. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ ԹԻՎ 3 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

38. Թիվ 3 հաշվետվությունը լրացվում է Կանոնակարգ 10/03-ի Թիվ 1 հաշվետվական ձևի համաձայն՝ վերնագիրը փոխարինելով «Լուծարվող կառավարչի հաշվեկշիռ» վերնագրով:

ԳԼՈՒԽ 11. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 4 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Թիվ 4 հաշվետվությունը լրացվում է Կանոնակարգ 10/03-ի Թիվ 2 հաշվետվական ձևի համաձայն՝ վերնագիրը փոխարինելով «Լուծարվող կառավարչի եկամուտների և ծախսերի վերաբերյալ հաշվետվություն» վերնագրով:

ԳԼՈՒԽ 12. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 5 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

40. Թիվ 5 հաշվետվությունն արտացոլում է լուծարվող կառավարչի պարտատերերի կողմից լուծարվող կառավարչին ներկայացված պահանջների՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ յուրաքանչյուր պարտատիրոջ և պահանջների բավարարման հերթականության: Ընդ որում՝ բավարարման ենթակա պահանջների հերթերը լրացնելիս հիմք է ընդունվում «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հերթականությունը՝ կախված կառավարչի լուծարման հիմքից: Սույն հաշվետվությունը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 5-ի:

41. Թիվ 5 հաշվետվության համաձայն առաջին հաշվետու ամիս է համարվում կառավարչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից (կառավարչի դեպքում՝ Կենտրոնական բանկի՝ կառավարչին սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարանի կողմից բավարարելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից) մինչև տվյալ ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածը:

42. Թիվ 5 հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում են այն պարտատերերի անունները, ազգանունները (անվանումները), որոնց պահանջները կառավարիչը բավարարել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

43. Թիվ 5 հաշվետվության 3-րդ սյունակում լրացվում է տվյալ պարտատիրոջ նկատմամբ լուծարվող կառավարչի ունեցած պարտավորությունների համապատասխան հաշվեկշռային (արտահաշվեկշռային) հաշվի համարը:

44. Թիվ 5 հաշվետվության 4-րդ սյունակում լրացվում է լուծարվող կառավարչին ներկայացված յուրաքանչյուր պարտատիրոջ պահանջի մեծությունը (ըստ պահանջի բավարարման հերթականության)՝ հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ:

45. Թիվ 5 հաշվետվության 8-րդ սյունակում լրացվում են բոլոր այն պահանջները, որոնք ներկայացվել են լուծարային հանձնաժողովի կողմից սահմանված համապատասխան ժամանակահատվածում, սակայն մինչև տվյալ հերթի պահանջների բավարարման համար հայտարարված ժամկետի վերջին օրը պարտատերը չի ներկայացել պահանջը ստանալու համար:

46. Թիվ 5 հաշվետվության 10-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում բավարարված բոլոր այն պահանջները, որոնց բավարարումն իրականացվել է թիվ 5 հաշվետվության 6-ից 9-րդ սյունակներում չնշված ձևերով (օրինակ, բնեղեն տեսքով, արժեթղթերով և այլն):

47. Սույն հաշվետվության «Արտահերթ բավարարվող պահանջներ» տողում լրացվում են «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 1-ին մասով («Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով) սահմանված պահանջները, որոնք բավարարվել են տվյալ հաշվետու ժամանակաշրջանում՝ նույն հոդվածով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 13. ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 6 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

48. Թիվ 6 հաշվետվությունում լրացվում են լուծարվող կառավարչի պարտապանների կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում լուծարվող կառավարչի պահանջների բավարարման գործընթացի վերաբերյալ տեղեկությունները՝ ըստ յուրաքանչյուր պարտապանի՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 6-ի:

49. Թիվ 6 հաշվետվության համաձայն առաջին հաշվետու ամիս է համարվում կառավարչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից (կառավարչի սնանկության դեպքում՝ Կենտրոնական բանկի՝ կառավարչին սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարանի կողմից բավարարելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից) մինչև տվյալ ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածը:

50. Թիվ 6 հաշվետվության 2-րդ սյունակում լրացվում են լուծարվող կառավարչի այն պարտապանների անունները, ազգանունները (անվանումները), որոնք մարել են իրենց պարտավորությունները լուծարվող կառավարչի նկատմամբ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում:

51. Թիվ 6 հաշվետվության 3-րդ սյունակում լրացվում է պարտապանի նկատմամբ լուծարվող կառավարչի պահանջի համապատասխան հաշվեկշռային (արտահաշվեկշռային) հաշվի համարը:

52. Թիվ 6 հաշվետվության 8-րդ (12-րդ) սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում պարտապանների կողմից բավարարված կառավարչի այն պահանջները, որոնց բավարարումն իրականացվել է թիվ 6 հաշվետվության 5-ից 7-րդ (9-ից 11-րդ) սյունակներում չնշված ձևերով (օրինակ, բնեղեն տեսքով, արժեթղթերով և այլն)՝ արտադատական կարգով (դատարանի միջամտությամբ (այսինքն՝ որոնց բավարարման կամ որոնց մի մասի բավարարման համար լուծարային հանձնաժողովը դիմել է դատարան, և դատարանը որոշում է կայացրել հօգուտ լուծարային հանձնաժողովի)):

53. Թիվ 6 հաշվետվության 13-րդ սյունակում լրացվում է լուծարվող կառավարչի պարտապանների նկատմամբ լուծարվող կառավարչի ունեցած պահանջը, որի մասով դատարանը որոշում է կայացրել լուծարային հանձնաժողովի հայցը չբավարարելու մասին:

ԳԼՈՒԽ 14. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ՝ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 7 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

54. Թիվ 7 հաշվետվությունում ներկայացվում են լուծարվող կառավարչին սեփականության իրավունքով պատկանող և արգելանքի տակ գտնվող գույքի վերաբերյալ տեղեկությունները հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 7-ի:

55. Թիվ 7 հաշվետվության 2-րդ սյունակը լրացվում է կառավարչի հաշվապահական հաշվառման հաշիվների (հաշվային) պլանը սահմանող իրավական ակտի համաձայն՝ խմբավորված ըստ տվյալ իրավական ակտով սահմանված ակտիվային հաշիվները ներառող բաժինների (ըստ կիրառելիության):

ԳԼՈՒԽ 15. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 8 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

56. Թիվ 8 հաշվետվությունում ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում լուծարվող կառավարչին սեփականության իրավունքով պատկանող գույքի իրացման և դուրսգրման վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 8-ի:

57. Թիվ 8 հաշվետվության 2-րդ սյունակը լրացվում է կառավարչի հաշվապահական հաշվառման հաշիվների (հաշվային) պլանը սահմանող իրավական ակտի համաձայն՝ խմբավորված ըստ տվյալ իրավական ակտով սահմանված ակտիվային հաշիվները ներառող բաժինների (ըստ կիրառելիության):

58. Թիվ 8 հաշվետվության «Քանակը/միավորները» 3-րդ և 7-րդ սյունակները լրացվում են միայն գույքի այն տեսակների համար, որոնք ունեն քանակ (միավոր):

59. Թիվ 8 հաշվետվության 4-րդ (8-րդ) սյունակները լրացվում են իրացման (դուրսգրման) օրվա դրությամբ:

ԳԼՈՒԽ 16. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 9 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

60. Թիվ 9-ը հաշվետվությունում ներառվում են լուծարային հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում լուծարային գործընթացի իրականացման համար փաստացի կատարված և տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար նախատեսված ծախսերի վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում՝ սույն հաշվետվությունը լրացվում է համաձայն սույն կանոնակարգի Հավելված 9-ի:

ԲԱԺԻՆ 4. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

ԳԼՈՒԽ 17. ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

61. Լուծարային հանձնաժողովը ստեղծման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտարարություն է հրապարակում առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում այն մասին, որ լուծարային հանձնաժողովը մինչև սույն հայտարարության հրապարակման պահը պատվիրված նամակով կամ պարտատիրոջ կողմից ծանուցումը ստանալու հավաստիացումն ապահովելու դեպքում այլ ձևերով ծանուցել է կառավարչի բոլոր պարտատերերին պահանջների ներկայացման կարգի և ժամկետների մասին:

62. Լուծարային հանձնաժողովը «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո՝ 7-օրյա ժամկետում կազմում, հաստատում և առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է հաշվետվություն միջանկյալ լուծարային հաշվեկշռի վերաբերյալ՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 10-ի, ընդ որում՝ սույն կանոնակարգի Հավելված 10-ի 1-ին աղյուսակի 2-րդ սյունակը լրացվում է համաձայն կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները սահմանող իրավական ակտի՝ ըստ ակտիվային հոդվածների խմբավորման (ըստ կիրառելիության): Ընդ որում՝ սույն կանոնակարգի Հավելված 10-ում հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվ տողում լրացվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի վերջին օրվա ամսաթիվը: Սույն կանոնակարգի Հավելված 10-ի աղյուսակ 1-ին կից ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանում հրապարակային սակարկություններով օտարված գույքի ցուցակը՝ իրացման գներով և օրենքով սահմանված կարգով կազմակերպված սակարկությունների արդյունքների մասին այլ տեղեկություններ:

63. Լուծարային հանձնաժողովը սույն կանոնակարգով սահմանված կարգով առնվազն ամիսը մեկ՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը, առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է իր գործունեության վերաբերյալ հետևյալ տեղեկությունները՝

1) լուծարվող կառավարչի գտնվելու վայրը,
2) սակարկություններ կազմակերպելու մասին հայտարարությունը, ինչպես նաև կազմակերպված սակարկությունների արդյունքների մասին տեղեկություններ (ազատ ոճով),
3) տեղեկություններ լուծարվող կառավարչի պարտատերերի պահանջների բավարարման՝ «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածով («Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների, ներդրումային ֆոնդի կառավարիչների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով 31-րդ հոդվածի 1-ին մասով) սահմանված յուրաքանչյուր հերթի բավարարման վայրի, կարգի և ժամկետների մասին (ազատ ոճով),

4) լուծարվող կառավարչի պարտատերերի պահանջների բավարարման վերաբերյալ հաշվետվություն՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 11-ի, ընդ որում՝ սույն հաշվետվության համաձայն առաջին հաշվետու ամիս է համարվում կառավարչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից (կառավարչի սնանկության դեպքում՝ Կենտրոնական բանկի՝ կառավարչին սնանկ ճանաչելու մասին դիմումը դատարանի կողմից բավարարելու մասին որոշման ուժի մեջ մտնելու օրվանից) մինչև տվյալ ամսվա վերջին օրն ընկած ժամանակահատվածը: Ընդ որում՝ հաշվետվության 9-րդ սյունակում լրացվում են հաշվետու ժամանակաշրջանում բավարարված բոլոր այն պահանջները, որոնց բավարարումն իրականացվել է հաշվետվության 5-ից 8-րդ սյունակներում չնշված ձևերով (օրինակ բնեղեն տեսքով, արժեթղթերով և այլն):
5) կառավարչի հաշվեկշիռը, որը լրացվում է համաձայն կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի և կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները սահմանող իրավական ակտի՝ վերնագիրը փոխարինելով «Լուծարային հաշվեկշիռ» վերնագրով:

64. Կենտրոնական բանկի կողմից լուծարային հաշվեկշիռը (որն ամփոփում է լուծարային գործընթացը) հաստատելու մասին որոշումը կայացնելու պահից եռօրյա ժամկետում լուծարային հանձնաժողովը առնվազն 3000 տպաքանակ ունեցող մամուլում հրապարակում է.

1) կառավարչի լուծարման գործընթացի ավարտի մասին հայտարարություն (ազատ ոճով),
2) սույն կետում նշված լուծարային հաշվեկշիռը, որը լրացվում է համաձայն կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի և կառավարիչների հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումները սահմանող իրավական ակտի՝ վերնագիրը փոխարինելով «Ամփոփ լուծարային հաշվեկշիռ» վերնագրով:

65. Սույն գլխով սահմանված տեղեկությունների ծավալուն լինելու դեպքում լուծարային հանձնաժողովը կարող է դրանք մամուլում հրապարակել առանձին մասերով՝ պահպանելով հրապարակումների հաջորդականությունները՝ օրական հաճախականությամբ:

66. Լուծարային հանձնաժողովը պարտավոր է կառավարչի տարածքում՝ տեսանելի տեղում, փակցնել սույն գլխով սահմանված հրապարակվող տեղեկությունները:

67. Տեղեկությունների հրապարակման համար անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ հիմնվելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համապատասխան ստորաբաժանման եզրակացության վրա, սույն կարգով սահմանված տեղեկությունները՝ լուծարային հանձնաժողովի ներկայացմամբ, հրապարակում է Կենտրոնական բանկը:

68. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի պահանջով լուծարային հանձնաժողովը Հայաստանի Հանրապետությունում հրատարակվող և առնվազն 3000 տպաքանակ ունեցող հանրապետական մամուլում վերահրապարակում են ճշգրտված տեղեկությունները, եթե դրանք նախկինում կազմվել և հրապարակվել են սխալներով:

Հավելված 1

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
(ինքնալուծարման նախնական համաձայնություն ստանալու)

Հարգելի _____

_____

(դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը)

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 328-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի՝ Ձեզ ենք ներկայացնում ինքնալուծարման նախնական համաձայնություն ստանալու միջնորդագիրը, կից փաստաթղթերը և տեղեկությունները:

Առդիր _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Միջնորդագիրը ներկայացնող անձ՝

_____

(ինքնալուծարվող կառավարչի իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ __20__ թ.

Հավելված 2

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ
(ինքնալուծարման թույլտվություն ստանալու)

Հարգելի _____

_____

(դիմողի անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, գտնվելու վայրը)

Համաձայն Ընդհանուր ժողովի --/--/20—թվականի թիվ ___ որոշման՝ դիմում ենք ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար:

Համաձայն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 201_ թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 328-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի՝ կից ներկայացնում ենք ինքնալուծարման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:

Առդիր _____ էջ:

Մենք՝ ներքոստորագրյալներս, հավաստիացնում ենք, որ մանրակրկիտ դիտարկել ենք սույն միջնորդագրին կից ներկայացված յուրաքանչյուր փաստաթղթում արտացոլված տեղեկատվությունը: Հավաստիացնում ենք, որ տեղեկատվությունն արժանահավատ է ու ամբողջական, և գիտակցում ենք, որ որևէ փաստի սխալ ներկայացումը կամ բացթողումը հանգեցնում է միջնորդագրի մերժմանը:

Միջնորդագիրը ներկայացնող անձ

_____
(ինքնալուծարվող կառավարչի իրավասու անձի անուն, ազգանունը, ստորագրությունը)

«__»_____ __20__ թ.

Հավելված 3

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ (ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ) ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(միանվագ)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(հազար դրամ)

N	Պարտատիրոջ անունը, ազգանունը/անվանումը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներկայացված պահանջներ							Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չներկայացված պահանջներ	
		Ընդամենը		Լուծարային հանձնաժողովի կողմից ընդունված պահանջներ		Լուծարային հանձնաժողովի կողմից մերժված պահանջներ		Քննարկման ենթակա պահանջներ		
		ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ
1	2	3	4	5	6	7	8	10	11	12
1-ին հերթ										
2-րդ հերթ										
3-րդ հերթ										
4-րդ հերթ										
5-րդ հերթ										
6-րդ հերթ										
7-րդ հերթ										
արտահերթ										
ԸՆԴԱՄԵՆԸ										

Հավելված 4

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(միանվագ)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(հազար դրամ)

N	Պարտապանի անունը, ազգանունը/անվանումը	Հաշվեկշռային/ արտահաշվեկշռային հաշվի համարը	Պահանջի չափը լուծարային գործընթացի սկզբի դրությամբ		Պահանջի մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ	
			ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ
1	2	3	4	5	6	7
1						
2						
3						
4						
...						
ԸՆԴԱՄԵՆԸ						

Հավելված 5

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

(հազար դրամ)

Պահանջների դասակարգման հերթականությունը	Պարտատերերի անունները, անվանումները/մականունները, ըստ որում՝ պահանջների դասակարգման դասակարգիչը	Հաշվետվության շրջանում ընդունված պահանջների ընդհանուր գումարը	Պահանջի չափով հաշվետվության շրջանի սկզբի դրությամբ	Պահանջի բավարարման ամսաթիվը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարված պահանջի չափը, այդ թվում՝					Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում պահանջի չեղարկման չափը	Պահանջի չափով հաշվետվության շրջանի վերջին մնացորդը
					դրամական միջոցներով	դրամական միջոցներով չհաշվանցում	նստատեղի տրամադրման կամ դրա օգտագործման տրամադրում	գույքի միջոցով	այլ		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1-ին հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 1-ին հերթով											
2-րդ հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 2-րդ հերթով											
3-րդ հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 3-րդ հերթով											
4-րդ հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 4-րդ հերթով											
5-րդ հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 5-րդ հերթով											
6-րդ հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 6-րդ հերթով											
7-րդ հերթով բավարարված պահանջներ											
Ընդամենը 7-րդ հերթով											
Արտահերթ բավարարված պահանջներ											
Ընդամենը արտահերթ բավարարված պահանջներ											
ԸՆԴԱՄԵՆԸ (1+2+3+4+5+6+7+արտահերթ)											

Հավելված 6

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

(հազար դրամ)

N	Պարտապանի (պարտապանների) անվանումը, ազգանունը, անունը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտապանի ընդհանուր պարտավորության չափը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտապանի վարկային պարտավորության չափը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում արտադատական կարգով բավարարված պահանջի չափը				Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում դատարանի որոշմամբ բավարարված պահանջի չափը				Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտապանի ընդհանուր պարտավորության մեջ չստուգված պարտավորությունների չափը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտապանի ստուգված պարտավորությունների չափը
				դրամական միջոցներով	իրացվելի գույքով	այլ գույքով	Մեկ	դրամական միջոցներով	իրացվելի գույքով	այլ գույքով	Մեկ		
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
1													
2													
3													
4													
…													

Հավելված 7

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7
ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ՝ ԱՐԳԵԼԱՆՔԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ամսական)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(հազար դրամ)

N	Դատարանի վճռով արգելանքի տակ գտնվող գույքի տեսակը	Դատարանի վճռով արգելանքի տակ գտնվող գույքի հաշվեկշռային արժեքը	Հայցային պահանջի չափը	Արգելանքի կիրառման ամսաթիվը
1	*2*	*3*	*4*	*5*
1				
2				
3				
4				
…				
Ընդհանուր հաշվեկշռային արժեքը			X	X

Հավելված 8

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8
ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

(հազար դրամ)

N	Գույքի տեսակը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում իրացված գույք				Հաշվետու ժամանակաշրջանում դուրս գրված գույք	
		քանակը/ միավորները	հաշվեկշռային արժեքը	իրացման գինը	իրացման ծախսեր	քանակը/ միավորները	հաշվեկշռային արժեք
1	2	3	4	5	6	7	8
1							
2							
3							
4							
…							
Ընդամենը							

Հավելված 9

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9
ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ-ից*

մինչև _____ *թ.*

	Ծախսերի տեսակը	Ծախսերի ծավալը համաձայն լուծարային ծախսերի նախահաշվի	Փաստացի կատարված ծախսերի ծավալը	Շեղման չափը (4-3)
1	2	3	4	5
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ			
2	Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարումներ			
3	Անձնակազմի գծով այլ ծախսեր			
4	Հիմնական միջոցների վարձակալության ծախսեր			
5	Խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր			
6	ՋԼՄ-ների միջոցով տեղեկատվության հրապարակման գծով ծախսեր			
7	Հրապարակային սակարկությունների կազմակերպման ծախսեր			
8	Գույքի իրացման ծախսեր			
9	Այլ ծախսեր			
Ընդամենը				

Հավելված 10

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՄԻՋԱՆԿՅԱԼ ԼՈՒԾԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(միանվագ)

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

N	Գույքի տեսակը	Քանակը/միավորները լուծարային գործընթացի սկզբի դրությամբ	Արժեքը լուծարային գործընթացի սկզբի դրությամբ	Արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ
1	2	3	4	5
1				
2				
3				
4				
…				
Ընդամենը				

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ (ՉՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ) ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լուծարվող կառավարչի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

(հազար դրամ)

N	Կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված պահանջները	Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ներկայացված պահանջներ								Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ չներկայացված պահանջներ	
		Ընդամենը		Լուծարային հանձնաժողովի կողմից ընդունված պահանջներ		Լուծարային հանձնաժողովի կողմից մերժված պահանջներ		Քննարկման ենթակա պահանջներ			
		ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ	ՀՀ դրամ	արտարժույթ
		3	4	5	6	7	8	9	10	11	12
1	Ֆիզիկական անձանց կողմից ներկայացված պահանջները										
2	Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից ներկայացված պահանջները										
3	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ներկայացված պահանջները										

4	Հայաստանի Հանրապետության կողմից, այդ թվում՝ հարկային մարմնի կողմից ներկայացված պահանջները										
5	Իրավաբանական անձանց կողմից ներկայացված պահանջները										
6	Համայնքների կողմից ներկայացված պահանջները										
7	Օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, համայնքային բյուջեների կողմից ներկայացված պահանջները										
8	Այլ անձանց կողմից ներկայացված պահանջներ										
Ընդամենը											

Հավելված 11

«Ներդրումային ֆոնդի կառավարչի ինքնալուծարման նախնական համաձայնության, ինքնալուծարման թույլտվության տրամադրման համար պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը, հաճախականությունը և ժամկետները, լուծարային հանձնաժողովի (կառավարչի) կողմից հրապարակվող տեղեկությունները, հրապարակման կարգը և ձևը» կանոնակարգ 10/23-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒԾԱՐՎՈՂ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(ամսական)

Լուծարվող կառավարչի անվանումը _____
Ամսաթիվը _____ *թ-ից*
մինչև _____ *թ.*

(հազար դրամ)

N	Կառավարչի պարտատերերի կողմից ներկայացված պահանջները	Պահանջի հիման վրա ընդունված կրեդիտորական պարտքի գումարը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում բավարարված պահանջի չափը, այդ թվում՝					Պահանջի հիման վրա ընդունված կրեդիտորական պարտքի գումարի նկատմամբ բավարարված պահանջի չափը	Պահանջի հիման վրա ընդունված կրեդիտորական պարտքի մնացորդը
			Դրամական միջոցների տեսքով	Դեբիտորական պարտքերի մարման միջոցով	Նոտարի ոչ դատական կարգով կատարված գործողությունների միջոցով	Գույքի հետգնման միջոցով	Այլ		
1	2	4	5	6	7	8	9	10	11
1	Ֆիզիկական անձանց կողմից ներկայացված պահանջները								
2	ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից ներկայացված պահանջները								
3	ՀՀ կենտրոնական բանկի կողմից ներկայացված պահանջները								
4	Հայաստանի Հանրապետության անունից, այդ թվում՝ հարկային մարմնի կողմից ներկայացված պահանջները								
5	Իրավաբանական անձանց կողմից ներկայացված պահանջները								
6	Համայնքների կողմից ներկայացված պահանջները								
7	Օտարերկրյա կառավարությունների,կենտրոնական բանկերի, ֆինանսական կազմակերպությունների, համայնքային բյուջեների կողմից ներկայացված պահանջները								
8	Այլ անձանց կողմից ներկայացված պահանջներ								
Ընդհանուր գումար									

*«Ներդրումային ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցմանը նախնական համաձայնության տրամադրման կարգը, նախնական համաձայնություն ստանալու համար փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման ձևն ու կարգը» կանոնակարգ 10/24-ը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով ապահովել ներդրումային ֆոնդի կառավարիչների կողմից իրենց ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցմանը նախնական համաձայնության տրամադրման ընթացակարգի ամբողջականությունն ու արդյունավետությունը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ներդրումային ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցմանը նախնական համաձայնության տրամադրման կարգը, նախնական համաձայնություն ստանալու համար փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման ձևն ու կարգը» կանոնակարգ 10/24-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 329-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 27 -ի թիվ 329-Ն որոշմամբ

«ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՅԼ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈԽԱՆՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎՆ ՈՒ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/24

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ներդրումային ֆոնդի կառավարիչների (այսուհետ՝ կառավարիչ) կողմից ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցմանը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից նախնական համաձայնության տրամադրման կարգը, ինչպես նաև ֆոնդի կառավարման փոխանցման համար Կենտրոնական բանկի նախնական համաձայնությունը ստանալու համար «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված փաստաթղթերի և տեղեկությունների ներկայացման ձևն ու կարգը:

2. Սույն կանոնակարգում օգտագործվող հասկացություններն ունեն Օրենքի իմաստով կիրառվող նշանակությունը:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

ԳԼՈՒԽ 2. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԱՅԼ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎՆ ՈՒ ԿԱՐԳԸ

3. Կառավարչի կողմից ֆոնդի կառավարումն այլ կառավարչի փոխանցմանը նախնական համաձայնության տրամադրման համար Օրենքով պահանջվող բոլոր փաստաթղթերը Կենտրոնական բանկ են ներկայացվում տպագիր և հայերեն՝ պատվիրված նամակով կամ առձեռն կամ ներկայացվում են էլեկտրոնային եղանակով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով: Տպագիր եղանակով ներկայացվող փաստաթղթերի պատճենները պետք է ստորագրված լինեն ներդրումային ֆոնդի կառավարչի (կառավարիչների) իրավասու անձի կողմից և ներկայացվեն «իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ:

ԳԼՈՒԽ 3. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԱՅԼ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՓՈԽԱՆՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Կենտրոնական բանկը ֆոնդի կառավարման փոխանցմանը նախնական համաձայնություն տալու կամ միջնորդագիրը մերժելու որոշումը առաքում է ներդրումային ֆոնդի կառավարումը փոխանցող և ստանձնող կառավարիչներին Օրենքով սահմանված ժամկետում:

5. Օրենքով սահմանված ժամկետում ֆոնդի կառավարման փոխանցմանը նախնական համաձայնություն տալու կամ միջնորդագիրը մերժելու որոշումը փոխանցող և ստանձնող կառավարիչներին չտրամադրելու դեպքում նախնական համաձայնությունը համարվում է տրամադրված:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի 119-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը, 70-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ը հաստատելու մասին» թիվ 119-Ն որոշման նախաբանում «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի» բառերից հետո լրացնել «15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը,» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 330-Ն

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը, 70-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաեւ ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշման նախաբանի 3-րդ պարբերությունում «42-րդ հոդվածի 3-րդ մասը» բառերից առաջ լրացնել «15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 331-Ն

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հիմք ընդունելով « Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ պարբերությունը, 70-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 24-ի «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները, պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը» կանոնակարգ 10/09-ը հաստատելու մասին» թիվ 156-Ն որոշման նախաբանում «11-րդ հոդվածի 6-րդ մասը,» բառերից հետո լրացնել «12-րդ հոդվածի 5-րդ մասը» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 332-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀՊՏ N35 (479)[1], 28.12.2013):

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության ընդհանուր կանոնները սահմանելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազագույնի հասցնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության ժամանակ առաջացող ռիսկերը,

հաշվի առնելով, որ՝

- «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի պահառուի գործառույթները սկզբնական շրջանում իրականացվում են պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրը վարողի (այսուհետ՝ մասնակիցների ռեեստրը վարող) կողմից.
- Հայաստանի Հանրապետության կառավարության և «Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Կենտրոնական դեպոզիտարիա) միջև կնքված պայմանագրի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողը Կենտրոնական դեպոզիտարիան է.
- «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 180-րդ հոդվածի համաձայն Կենտրոնական դեպոզիտարիայի կանոնները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից,

հիմք ընդունելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Սահմանել, որ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների պահառության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գրանցված՝ Կենտրոնական դեպոզիտարիայի «Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգի գործունեության կանոններով»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
27 դեկտեմբերի 2013 թ., N 333-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 27-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.12.2013 թ. (ՀՀԳՏ N35 (479)[1], 28.12.2013):

«Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որոշ դրույթների մասին [*]

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) հասցեագրված «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) կիրառման բնագավառում ծագող մի շարք հարցերի պարզաբանման վերաբերյալ հարցումները,

նպատակ ունենալով ներքոնշյալ խնդիրների լուծման համար առաջարկել այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն և բանկի, և վերջինիս հաճախորդների, և դատարանների ու քրեական հետապնդում իրականացնող մարմինների օրինական շահերի պաշտպանությունը՝ միաժամանակ երաշխավորելով բանկային գաղտնիքի հետ կապված հարաբերությունների անխաթարությունը,

լսելով ներքոնշյալ խնդիրների և դրանցից բխող հարցադրումների վերաբերյալ Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ ձևավորված աշխատանքային խմբի (կազմված «Մելլաթ բանկ» ՓԲԸ-ի, «Պրոկրեդիտ բանկ» ՓԲԸ-ի, «Արարատբանկ» ՓԲԸ-ի, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի, «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի, «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի և Կենտրոնական բանկի իրավաբանական վարչության ներկայացուցիչներ) դիրքորոշումը,

կարևորելով Օրենքի կարգավորման շրջանակում ընդգրկվող սուբյեկտների կողմից բարձրացված հարցերի և դրանցում առկա խնդիրների պարզաբանման անհրաժեշտությունը՝ Կենտրոնական բանկը սույն պաշտոնական պարզաբանման շրջանակներում անդրադառնում է ստորև ներկայացված խնդիրներին և դրանց հետևանքով առաջացող հարցադրումներին: Մասնավորապես՝

Խնդիր 1. Առկա են դեպքեր, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնին կամ դատարանին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելու մասին դատարանի որոշումներում անձի կարգավիճակի (մեղադրյալ կամ կասկածյալ, քրեական կամ քաղաքացիական գործի կողմ) վերաբերյալ տեղեկությունները չեն համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին կամ ընդհանրապես բացակայում են անձի կարգավիճակի (մեղադրյալ կամ կասկածյալ, քրեական կամ քաղաքացիական գործի կողմ) վերաբերյալ տեղեկությունները: Օրինակ՝ բանկը ստանում է դատարանի՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների առգրավման թույլտվության մասին որոշում, որով պահանջվում է տրամադրել **Պողոս Պողոսյանի** վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություններ, սակայն Պողոս Պողոսյանը տվյալ քրեական գործով հանդես է գալիս որպես վկա.

Խնդիր 1-ից բխող հարցադրում՝ ինչպե՞ս պետք է վարվի բանկը այն դեպքում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինը կատարման է ներկայացնում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության առգրավման կամ խուզարկության մասին դատարանի որոշում, որի բովանդակությունից հնարավոր չէ պարզել այն փաստը, թե արդյո՞ք որոշմամբ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է քրեական գործով որպես մեղադրյալ կամ կասկածյալ ներգրավված անձանց, կամ երբ դատարանը կատարման է ներկայացնում դատարանի որոշում, որի բովանդակությունից հնարավոր չէ պարզել, թե որոշմամբ պահանջվող տեղեկատվությունը արդյո՞ք քրեական կամ քաղաքացիական գործի կողմ հանդիսացող անձանց վերաբերյալ է:

Խնդիր 2. Առկա են դեպքեր, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները բանկից պահանջում են իրավաբանական անձ հաճախորդի կամ մահացած ֆիզիկական անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ, մինչդեռ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ նշված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման կարգ.

Խնդիր 2-ից բխող հարցադրում՝ Կարո՞ղ են արդյոք բանկերը դատարանի որոշման հիման վրա քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրել իրավաբանական անձանց կամ մահացած ֆիզիկական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

Խնդիր 3. Հաճախ քրեական հետապնդում իրականացնող մարմինները, չանդրադառնալով Օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված կարգավորմանը, բանկից պահանջում են տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ՝ ներկայացնելով Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաճախորդի կողմից տրված գրավոր թույլտվությունը.

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (480), 8.01.2014):

Խնդիր 3-ից բխող հարցադրում՝ ինչպե՞ս պետք է վարվի բանկն այն դեպքում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինները պահանջում են տրամադրել անձի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն՝ ներկայացնելով Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իր վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հրապարակելու մասին տվյալ անձի գրավոր թույլտվությունը:

Խնդիր 4. Առկա են դեպքեր, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինը կամ դատարանը առանց դատարանի համապատասխան որոշման հարցում է ուղարկում բանկին՝ պահանջելով ներկայացնել կոնկրետ հարցմամբ պահանջվող ընդհանրական տեղեկատվություն: Մասնավորապես, լինում են դեպքեր, երբ կոնկրետ հարցման մասով բանկում տեղեկատվությունը բացակայում է, սակայն տվյալ անձը հանդիսանում է բանկի հաճախորդ: Օրինակ՝ հարցմամբ պահանջվում է ներկայացնել տեղեկատվություն, թե արդյոք Պողոս Պողոսյանը բանկում ունի ներդրված ավանդ, թե՝ ոչ: Պողոս Պողոսյանը բանկում ներդրված ավանդ չունի, սակայն հանդիսանում է բանկի հաճախորդ, քանի որ նա ունի բանկից վերցված վարկ: Լինում են նաև դեպքեր, երբ անձն ընդհանրապես չի հանդիսանում բանկի հաճախորդ.

Խնդիր 4-ից բխող հարցադրում՝ ինչպե՞ս պետք է վարվի բանկն այն դեպքում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կամ դատարանների կողմից ստանում է նմանատիպ հարցումներ:

Վերը նշված խնդիրների լուծման և այդ խնդիրներից բխող հարցադրումների պարզաբանման համար ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ օրենսդրական կարգավորումներին.

- ✓ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը միայն սույն օրենքով նախատեսված դեպքերում, հիմքերով և պետական մարմիններին, պաշտոնատար անձանց ու քաղաքացիներին այդ տեղեկությունները բանավոր կամ գրավոր ձևով հաղորդելն է»,
- ✓ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ սույն օրենքին և Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան»,
- ✓ Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկերը քաղաքացիական կամ քրեական գործերի կողմ հանդիսացող իր հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքին համապատասխան տրամադրում են միայն դատարանի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության կամ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով ընդունված որոշման հիման վրա»,
- ✓ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ կետի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինները քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող … տեղեկությունները կարող են ստանալ խուզարկության կամ առգրավման որոշման հիման վրա»,
- ✓ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ «կողմ՝ մարմիններ և անձինք, որոնք քրեական դատավարությունում մրցակցային հիմունքներով իրականացնում են քրեական հետապնդում կամ պաշտպանություն»,
- ✓ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական դատավարության կողմերն են հայցվորը և պատասխանողը»,
- ✓ Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Որոշակի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները կարող են հրապարակվել տվյալ հաճախորդի գրավոր կամ դատարանում տրված բանավոր թույլտվությամբ: Հաճախորդի թույլտվությամբ կարող են հրապարակվել միայն տվյալ հաճախորդին վերաբերող տեղեկությունները»:
- ✓ Օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բանկը բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքի 10, 11, 12 և 13 հոդվածներին համապատասխան տրամադրում է միայն իր հաճախորդի վերաբերյալ, ընդ որում, եթե հաճախորդների՝ բանկում պահվող փաստաթղթերում նշված են այլ անձանց կամ կազմակերպությունների անուններ կամ անվանումներ, գործարքի (գործառնության) պայմաններ և նման այլ տեղեկություններ, վերջիններս սույն հոդվածի իմաստով համարվում են հաճախորդի վերաբերյալ տեղեկություններ: 2. Բանկը իրավունք չունի տվյալ հաճախորդի վերաբերյալ սույն օրենքում սահմանված կարգով տեղեկություններ տրամադրելիս վերջինիս կողմից կնքված պայմանագրի կամ այլ գործարքների (գործառնությունների) կողմ հանդիսացող անձանց և կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, եթե դրանք չեն պահանջվել սույն օրենքով սահմանված կարգով»:

- ✓ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Բանկային գաղտնիք են համարվում հաճախորդին սպասարկելու կապակցությամբ տվյալ բանկին հայտնի դարձած հաճախորդի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, հաճախորդի հանձնարարությամբ կամ հօգուտ հաճախորդի կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև նրա առևտրային գաղտնիքը, գործունեության ցանկացած ծրագրի կամ մշակման, գյուտի, արդյունաբերական նմուշի մասին տեղեկությունները և նրա վերաբերյալ ցանկացած այլ տեղեկություն, որը հաճախորդը մտադիր է եղել գաղտնի պահել, և բանկը տեղյակ է կամ կարող էր տեղյակ լինել այդ մտադրության վերաբերյալ»:

Վերը նշված իրավանորմերի վերլուծության արդյունքում Կենտրոնական բանկի խորհուրդը հանգում է հետևյալին.

Օրենքի համաձայն բանկային գաղտնիքի տրամադրումը օրինաչափ գործողություն է, եթե այն իրականացվել է բացառապես օրենքով նախատեսված դեպքերում և հիմքերով: Հաշվի առնելով քրեական հետապնդում իրականացնող մարմիններին կամ դատարաններին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումը (Օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածները)՝ Կենտրոնական բանկը փաստում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմնին գրավոր կամ բանավոր ձևով հաղորդելը կարող է համարվել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների օրինաչափ տրամադրում միայն այն պարագայում, երբ համապատասխան հիմքի (տվյալ դեպքում դատարանի որոշման) առկայության դեպքում բանկի կողմից հաղորդվում են քրեական գործով որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված իր հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները, իսկ դատարաններին՝ միայն քրեական կամ քաղաքացիական գործի կողմ հանդիսացող իր հաճախորդի վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում՝ քաղաքացիական գործով կողմ են հանդիսանում հայցվորը և պատասխանողը, իսկ քրեական գործով՝ մեղադրանքի կողմը (դատախազ, քննիչ, հետաքննության մարմիններ, տուժող, քաղաքացիական հայցվոր) կամ պաշտպանության կողմը (կասկածյալ, մեղադրյալ, արդարացված, պաշտպան, քաղաքացիական պատասխանող): Ուստիև, հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության ապօրինի հրապարակման և վերջիններիս իրավունքների ոտնահարման հնարավոր ռիսկը զսպելու, Օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների համաձայն տրամադրում իրականացնելու նպատակով բոլոր այն դեպքերում, երբ դատարանի համապատասխան որոշմամբ պահանջվում է տրամադրել բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն անձի վերաբերյալ, ում կարգավիճակը որոշման բովանդակությունից անհայտ է, ապա բանկը պետք է ձեռնարկի միջոցառումներ անձանց կարգավիճակը պարզելու համար:

Կենտրոնական բանկը անվիճելի է համարում այն հանգամանքը, որ Օրենքի 10-րդ հոդվածը և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդվածի 3.2-րդ մասը սահմանում են երկու միաժամանակ պարտադիր և կումուլատիվ պայմանների առկայություն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմիններին բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելու համար առանց տարանջատելու՝ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է ֆիզիկական, թե իրավաբանական անձին, և միաժամանակ առանց տարանջատելու՝ պահանջվող տեղեկատվությունը վերաբերում է կենդանի, թե մահացած անձին: Այդ պայմաններն են՝

1) Քրեական գործով կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավված անձի առկայությունը (Օրենքի 10-րդ հոդված, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդված),
2) Խուզարկության կամ առգրավման վերաբերյալ դատարանի որոշումը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 172-րդ հոդված):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությունը չի թույլատրում որպես մեղադրյալ կամ կասկածյալ ներգրավել ո՛չ իրավաբանական անձին, ո՛չ էլ ֆիզիկական անձին մահվանից հետո, ինչպես նաև այն, որ Օրենքը չի սահմանում այդ անձանց բանկային գաղտնիքի տրամադրման կարգը, ուստի բանկերի կողմից իրավաբանական անձանց և մահացած ֆիզիկական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին որևէ հիմքով տրամադրելը կդիտվի որպես բանկային գաղտնիքի ապօրինի հրապարակում:

Կենտրոնական բանկի խորհուրդը փաստում է, որ քրեական հետապնդում իրականացնող մարմինների համար Օրենքի 10-րդ հոդվածով սահմանվել է հատուկ կարգավորում, որի առկայության պարագայում Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը կիրառելի չէ:

Կենտրոնական բանկի խորհուրդը փաստում է նաև, որ Օրենքի կարգավորումից դուրս են այն դեպքերը, երբ հարցմամբ պահանջվում է ներկայացնել տեղեկատվություն բանկի հաճախորդ չհանդիսացող անձի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, Կենտրոնական բանկի խորհուրդը գտնում է, որ բանկի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների առկայության մասին ընդհանրական հարցումների պատասխանները (այդ թվում՝ բացասական) նույնպես հանդիսանում են բանկային գաղտնիք

կազմող տեղեկություններ, որոնք քրեական հետապնդում իրականացնող մարմնին կամ դատարանին կարող են տրամադրվել Օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների համաձայն:

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով Օրենքի 7-րդ հոդվածի և 8-րդ հոդվածի 1-ին մասերը, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

պաշտոնապես պարզաբանում է.

1. Բանկը քրեական հետապնդում իրականացնող մարմնին Օրենքի 10-րդ հոդվածին համապատասխան բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող է տրամադրել բացառապես տվյալ քրեական գործով որպես մեղադրյալ կամ կասկածյալ ներգրավված անձանց վերաբերյալ: Բոլոր այն դեպքերում, երբ դատարանի որոշման բովանդակությունից հնարավոր չէ պարզել, թե արդյոք անձը, որի վերաբերյալ պահանջվում է տրամադրել տեղեկատվություն, հանդիսանում է տվյալ քրեական գործով որպես մեղադրյալ կամ կասկածյալ, ապա բանկը նշված փաստը պարզելու նպատակով գրություն է ուղարկում համապատասխան քրեական հետապնդում իրականացնող մարմնի ղեկավարին (գրության օրինակելի ձևը համաձայն սույն պարզաբանման Հավելված 1-ի): Քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից նշված փաստի առկայության վերաբերյալ բավարար հիմնավորումներ (դատարանի որոշման պարզաբանում, անձին որպես մեղադրյալ կամ կասկածյալ ներգրավելու մասին քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշում կամ քրեական հետապնդում իրականացնող մարմնի ղեկավարի կողմից բանկին ուղղված գրությամբ տրված հավաստում) ներկայացվելու դեպքում բանկն Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված ժամկետներում և կարգով տրամադրում է հայցվող տեղեկատվությունը:

2. Բանկը դատարանին Օրենքի 11-րդ հոդվածի համաձայն բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ կարող է տրամադրել բացառապես քրեական կամ քաղաքացիական գործով կողմ հանդիսացող իր հաճախորդի վերաբերյալ: Ընդ որում, քաղաքացիական գործով կողմեր են հայցվորը և պատասխանողը, իսկ քրեական գործով՝ մեղադրանքի կողմը (դատախազ, քննիչ, հետաքննության մարմիններ, տուժող, քաղաքացիական հայցվոր) և պաշտպանության կողմը (կասկածյալ, մեղադրյալ, արդարացված, պաշտպան, քաղաքացիական պատասխանող): Բոլոր այն դեպքերում, երբ դատարանի որոշման բովանդակությունից հնարավոր չէ պարզել, թե արդյոք անձը, որի վերաբերյալ պահանջվում է տրամադրել տեղեկատվություն, հանդիսանում է տվյալ քրեական կամ քաղաքացիական գործի կողմ, ապա բանկը նշված փաստը պարզելու նպատակով գրություն է ուղարկում դատարանին (գրության օրինակելի ձևը՝ համաձայն սույն պարզաբանման Հավելված 2-ի): Դատարանի կողմից նշված փաստի առկայության վերաբերյալ բավարար հիմնավորումներ (դատարանի որոշման պարզաբանում կամ դատարանի կողմից բանկին ուղղված գրությամբ տրված հավաստում) ներկայացվելու դեպքում բանկը Օրենքի 11-րդ հոդվածով սահմանված ժամկետներում և կարգով տրամադրում է հայցվող տեղեկատվությունը:

3. Բանկերի կողմից քրեական հետապնդում իրականացնող մարմիններին իրավաբանական անձանց և մահացած ֆիզիկական անձանց վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները որևէ հիմքով տրամադրելը կդիտվի որպես բանկային գաղտնիքի ապօրինի հրապարակում:

4. Առևտրային բանկերը քրեական հետապնդում իրականացնող մարմիններին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրում են միայն Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով, հետևաբար Օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաճախորդի կողմից տրամադրված թույլտվությունը հիմք չէ նրա վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու համար:

5. Քրեական հետապնդում իրականացնող մարմինների կամ դատարանի կողմից առանց դատարանի որոշման բանկի հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների առկայության մասին հարցումները բանկի կողմից ենթակա են մերժման անկախ հարցման բովանդակությունից: Բանկի հաճախորդ չհանդիսանալու վերաբերյալ տեղեկատվությունը Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն չի հանդիսանում բանկային գաղտնիք կազմող տեղեկատվություն, ուստի վերջինիս տրամադրման հետ կապված հարաբերությունները դուրս են Օրենքի կարգավորման շրջանակից:

6. Սույն պարզաբանումը չի շոշափում «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 13.1 հոդվածով կարգավորվող հարաբերությունները:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N 4

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի
թիվ 4 պաշտոնական պարզաբանման

_____ քրեական հետապնդում իրականացնող մարմնի
ղեկավար պարոն/տիկին _____-ին

Հարգելի պարոն/տիկին _____

Դատարանի «__»_____ ____ թ. որոշմամբ պահանջվել են _____-ի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

Վերոհիշյալ որոշումից հստակ չի երևում, թե _____ թիվ ____ քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ կամ կասկածյալ, թե ոչ:

Հաշվի առնելով, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրվում են միայն քրեական գործերով որպես մեղադրյալ կամ կասկածյալ ներգրավված անձանց վերաբերյալ, ուստի խնդրում եմ պարզաբանել, թե _____ թիվ ____ քրեական գործով ներգրավված է որպես մեղադրյալ կամ կասկածյալ, թե ոչ:

Կանխավ շնորհակալ եմ:

Տնօրեն/վարչության նախագահ

Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի
թիվ 4 պաշտոնական պարզաբանման

_____ դատարանի
դատավոր պարոն/տիկին _____-ին

Հարգելի պարոն/տիկին _____

Ձեր կողմից «__»_____ ____ թ. կայացված որոշմամբ/վճռով/դատավճռով պահանջվել են _____ _____-ի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ:

Վերոհիշյալ որոշումից/վճռից/դատավճռից հստակ չի երևում, թե _____ հանդիսանում է թիվ _____ քաղաքացիական/քրեական գործով կողմ, թե ոչ:

Հաշվի առնելով, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները դատարանին տրամադրվում են, եթե բանկի հաճախորդը հանդիսանում է քաղաքացիական/քրեական գործերով կողմ, ուստի խնդրում եմ պարզաբանել, թե _____ թիվ ____ քաղաքացիական/քրեական գործով կողմ հանդիսանում է, թե ոչ:

Կանխավ շնորհակալ եմ:

Տնօրեն/վարչության նախագահ

Նոտարներին և ժառանգներին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ [*]

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ստանում է բազմաթիվ հարցումներ, որոնցով խնդրվում է պարզաբանել, թե բանկի հաճախորդի մահվան դեպքում նրա վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններն ինչպես կարող են տրամադրվել հաճախորդի ժառանգներին, կամ արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ նոտարը կարող է բանկերից ստանալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ ժառանգական զանգվածը պարզելու, համապատասխան գույքը ժառանգական զանգվածի մեջ ներառելու և այն պահպանելու նպատակներով:

Հաշվի առնելով նշված հարցադրումները՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախաձեռնությամբ կազմավորվեցին աշխատանքային խմբեր Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որոշ առևտրային բանկերի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այդ խմբերում ներառվեցին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, «Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ-ի, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի, «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» ՓԲԸ-ի, «Պրոմեթեյ բանկ» ՍՊԸ-ի, «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչները (այսուհետ՝ Խումբ):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը սույն պարզաբանումը քննարկում է՝ հաշվի առնելով Խմբի կողմից ներկայացված կարծիքները քննարկվող հարցադրումների վերաբերյալ: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը լսել է նաև Խմբում ընդգրկված «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ի ներկայացուցչի արտահայտած մեկնաբանությունն առ այն, որ ժառանգության բացման վայրի նոտարն օրենքի ուժով լիազորված է հանդես գալու որպես ժառանգների ներկայացուցիչ և ժառանգների անունից ու ի շահ նրանց իրականացնելու ժառանգությունը պահպանելու և կառավարելու միջոցներ՝ ներառյալ ժառանգության զանգվածը պարզելու և այն պահպանելու նպատակներով ստանալու բանկերից բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը սույն պարզաբանման համար հիմք է ընդունում ներքոհիշյալը.

ելնելով այն փաստից, որ բանկի հաճախորդների ժառանգներին ժառանգատուի բանկային հաշիվների և բանկի նկատմամբ այլ իրավունքների, ինչպես նաև բանկի մոտ առկա նրա գույքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը միայն ժառանգության իրավունքի վկայագիր ներկայացնելու դեպքում ստիպում է առաջիններին կատարել լրացուցիչ գործողություններ, այդ թվում՝ ծախսեր, ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագիր ստանալու համար, որում կնշվեն նոր ի հայտ եկած գույքի մասին տեղեկությունները,

արձանագրելով այն փաստը, որ ժառանգության ընդունման գործընթացի կազմակերպման համար պետության կողմից ստեղծվել է հատուկ ինստիտուտ՝ ի դեմս նոտարների, ուստի բանկերը պետք է հնարավորինս զերծ մնան անձին՝ իբրև ժառանգ ճանաչելու և ժառանգության իրավունքը հիմնավորող փաստաթղթերի բավարարությունը գնահատելու գործընթացից, ինչը կարող է զուգորդվել հետագայում ժառանգությունից այս կամ այն հիմքով մեկուսացված անձին բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման համար պատասխանատվության կանչվելու ռիսկով,

անվիճելի համարելով այն, որ բանկային գաղտնիք համարվող տեղեկությունների ապօրինի հրապարակման ռիսկը մեծանում է այն անձանց շրջանակի ընդլայնմանը զուգահեռ, ում հասանելի են դարձվում այդ տեղեկությունները,

նպատակ ունենալով վերոհիշյալ խնդիրների լուծման համար առաջարկել այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն և՛ բանկի, և՛ դրա հաճախորդների ու վերջիններիս ժառանգների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը՝ միաժամանակ երաշխավորելով բանկային գաղտնիքի հետ կապված իրավահարաբերությունների անխաթարությունը՝

անհրաժեշտություն է առաջանում պարզաբանել վերը նշված հարցերը հետևյալի լույսի ներքո.

- «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն բանկերը հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները սույն օրենքին համապատասխան տրամա-

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (480), 8.01.2014):

դրում են տվյալ հաճախորդի ժառանգներին (իրավահաջորդներին), եթե վերջիններս կամ նրանց ներկայացուցիչները տվյալ անձանց ժառանգության (իրավահաջորդության) իրավունքները հիմնավորող բավարար փաստաթղթեր են ներկայացրել:

Նշված իրավական նորմը հստակ չի բացահայտում, թե որ փաստաթուղթն է համարվում ժառանգության իրավունքը հիմնավորող բավարար փաստաթուղթ:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգիրք/ 1239-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժառանգության զանգվածը պարզելու և այն պահպանելու նպատակներով նոտարն իրավունք ունի հարցում անել բանկերին և այլ վարկային կազմակերպություններին նրանց ավանդներում, հաշիվներում գտնվող կամ նրանց ի պահ հանձնված՝ ժառանգատուին պատկանող դրամի (արժույթի), արժութային ու այլ արժեքների վերաբերյալ:

Այդ իրավական նորմի առկայությամբ հստակ չի պարզաբանվում բանկերի համար բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները տրամադրելու պարտականությունը և ինչով էլ գործնականում բանկերի մոտ առաջանում են հարցեր, թե նոտարն իրավասո՞ւ է արդյոք բանկից ստանալ մահացած հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, թե ոչ և ո՞րն է ժառանգի դեպքում համարվում ժառանգության իրավունքը հիմնավորող բավարար փաստաթուղթ:

Նշված անհստակությունների պարզաբանման համար անհրաժեշտ է հետևյալ իրավանորմերի վերլուծությունը.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգությունն ընդունվում է ժառանգությունն ընդունելու կամ ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1228-րդ հոդվածը սահմանում է, որ ժառանգները կարող են առանց դատարան դիմելու ժառանգություն ընդունել սահմանված ժամկետի ավարտից հետո, երբ առկա է ժառանգությունն ընդունած մնացած բոլոր ժառանգների համաձայնությունը: Հետևաբար, բանկի հաճախորդի մահվան դեպքում նրա վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները հաճախորդի ժառանգներին տրամադրելու հետ կապված անհրաժեշտ է դիտարկել երկու հնարավոր իրավիճակներ.

1) երբ ժառանգությունն ընդունվում է ժառանգության իրավունքի վկայագիր ստանալու մասին ժառանգի դիմումը ժառանգության բացման վայրի նոտարին հանձնելով,
2) երբ ժառանգությունն ընդունվում է ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով:

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգների, շահառուների և այլ շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության համար ժառանգության բացման վայրի նոտարը ձեռնարկում է սույն օրենսգրքի 1240-րդ և 1241-րդ հոդվածներում սահմանված և ժառանգությունը պահպանելու ու կառավարելու համար անհրաժեշտ այլ միջոցներ: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ժառանգության զանգվածը պարզելու և այն պահպանելու նպատակներով նոտարն իրավունք ունի հարցում անել բանկերին և այլ վարկային կազմակերպություններին նրանց ավանդներում, հաշիվներում գտնվող կամ նրանց ի պահ հանձնված՝ ժառանգատուին պատկանող դրամի (արժույթի), արժութային ու այլ արժեքների վերաբերյալ:
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1189-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման վայրը ժառանգատուի բնակության վերջին վայրն է, իսկ եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա ժառանգության բացման վայր է համարվում ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը:
- «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ բանկերը պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ պահպանելու համար:
- «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումն այն անձի, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն օրենքով սահմանված կարգով՝ արգելվում է:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալ նորմերը, կարելի է եզրահանգել, որ.

1. Օրենսգրքի 1245-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. օրենսդիրը որպես ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթ է համարում համապատասխան նոտարի կողմից տրվող ժառանգության իրավունքի վկայագիրը, հետևաբար, որպես բավարար փաստաթուղթ օրենսդիրը նկատի է ունեցել հենց ժառանգության իրավունքի վկայագիրը: Իսկ այն դեպքում, երբ ժառանգությունն ընդունվում է ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով, ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթ է համարում ինչպես համապատասխան նոտարի կողմից տրվող ժառանգության իրավունքի վկայագիրը, այնպես էլ դատարանի կողմից համապատասխան ժառանգի ժառանգման փաստի վերաբերյալ դատարանի վճիռը (որոշումը):

2. Եթե ժառանգը բանկային գաղտնիք ստանալու համար պետք է բանկ ներկայացնի ժառանգության իրավունքի վկայագիր, ապա ստացվում է, որ օրենքի տրամաբանությամբ նոտարը Օրենսգրքի 1239-րդ հոդվածի համաձայն իրավասու էր կատարել համապատասխան հարցումներ՝ ժառանգական գույքը պարզելու նպատակով և ժառանգական գույքի առկայությունը պարզելու հիմքով էլ տրամադրել է բանկի մահացած հաճախորդի գույքի ժառանգության իրավունքի վկայագիր:

Այլապես, եթե օրենքի տրամաբանությամբ նոտարն իրավասու չէ նման տեղեկություն ստանալ բանկերից, ապա ժառանգական այլ գույքի բացակայության պայմաններում անհնարին է դառնում բանկային գաղտնիք կազմող տեղեկության ստացումը ժառանգի կողմից, այսինքն՝ խոչընդոտվում է նրա իրավունքը և Օրենսգրքի 1239-րդ հոդվածի առկայությունը իմաստազրկվում են: Հետևաբար, այդ մեկնաբանությունը սխալ է և ճիշտ է այն, որ Օրենսգրքի 1239-րդ հոդվածով սահմանված կարգով նոտարը իրավասու է կատարել բանկերից հարցում և ստանալ բանկի մահացած հաճախորդի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները, որոնց հիման վրա էլ նոտարից տրված ժառանգության իրավունքի վկայագրով ժառանգը հնարավորություն է ունենում Օրենքի 12-րդ հոդվածի համաձայն ներկայացնել այդ վկայագիրը բանկ՝ վերջինիս կողմից ժառանգին որպես մահացած հաճախորդի իրավահաջորդ ընդունելու և ճանաչելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

պաշտոնապես պարզաբանում է.

1. Օրենքի 12-րդ հոդվածի իմաստով ժառանգությունը հիմնավորող բավարար փաստաթուղթ է համարվում ժառանգության իրավունքի վկայագիրը, իսկ այն դեպքում, երբ ժառանգությունն ընդունվում է ժառանգված գույքը փաստացի տիրապետելու կամ կառավարելու միջոցով, ապա ժառանգությունը հիմնավորող բավարար փաստաթուղթ է համարվում ինչպես ժառանգության իրավունքի վկայագիրը, այնպես էլ դատարանի կողմից համապատասխան ժառանգի ժառանգման փաստի վերաբերյալ դատարանի վճիռը (որոշումը): Ընդ որում, ժառանգության իրավունքի վկայագիրը կամ դատարանի վճիռը (որոշումը) բանկի համար հիմք է ժառանգատուի վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրման համար՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ վկայագրում կամ վճռում (որոշման մեջ) նշված է ժառանգատուի ամբողջ կամ մի մասի գույքի կամ գույքային իրավունքների ժառանգման վերաբերյալ: Օրինակ, եթե անձը ժառանգել է ժառանգատուի միայն բնակարանը, որի վերաբերյալ անձը բանկին ներկայացնում է դրա վերաբերյալ ժառանգության իրավունքի վկայագիր կամ դատարանի վճիռ (որոշում), ապա դա հիմք է, որպեսզի բանկը տվյալ անձին տրամադրի ժառանգատուի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները:

2. Ժառանգության բացման վայրի նոտարին բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը չի համարվում բանկերի կողմից բանկային գաղտնիքի ապօրինի հրապարակում, եթե պահպանվել են հետևյալ բոլոր պայմանները միաժամանակ.

- բանկին դիմել է ժառանգության բացման վայրի նոտարը՝ ներկայացնելով գրություն՝ համաձայն սույն պարզաբանման Հավելված 1-ի,
- բանկը այդ գրությանը պատասխանել է՝ համաձայն սույն պարզաբանման Հավելված 2-ի,
- բանկը նոտարի պատասխանը տրամադրել է կամ ուղարկել է փակ ծրարով անմիջապես նոտարին, այլ ոչ նրա կողմից նշանակված այլ անձին (ներկայացուցչին):

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N 5

Ժառանգական գործին ընթացք տալու նպատակով
Նոտարի կողմից հնարավոր հարցման և հարցման պատասխանի ձևանմուշներ

Հավելված 1
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի
թիվ 5 պաշտոնական պարզաբանման

ամսաթիվ.ամիս.տարեթիվ «Բանկի անվանումը»
-ին

Ժառանգական գործին ընթացք տալու, ինչպես նաև ժառանգության զանգվածը պարզելու, համապատասխան գույքը ժառանգական զանգվածի մեջ ներառելու և այն պահպանելու նպատակներով խնդրում եմ _____ նոտարական տարածքի նոտար Պետրոս Պետրոսյանիս տրամադրել Պողոս Պողոսի Պողոսյանի (ծնված՝ 01.01.1950 թ., մահացած՝ 01.01.2000 թ., մահվան վկայական՝ 01010201, առկայության դեպքում լրացնել անձնագրի տվյալները և հասցեն) անվամբ «Բանկի անվանումը»-ում (այսուհետ՝ Բանկ) ունեցած ավանդներում, հաշիվներում գտնվող կամ ի պահ հանձնված՝ Պողոս Պողոսի Պողոսյանին պատկանող դրամի (արժույթի), արժութային ու այլ արժեքների վերաբերյալ տեղեկատվություն:

Սույնով հաստատում եմ, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով՝ ես կրում եմ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը չհրապարակելու և այն բացառապես ժառանգներին տրամադրելու պարտականություններ, որոնց չպահպանման դեպքում վրա է հասնում օրենքով սահմանված պատասխանատվություն:

Հաստատում եմ նաև, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1189-րդ հոդվածի համաձայն՝ հանդիսանում եմ ժառանգության բացման վայրի նոտար:

Կից ներկայացնում եմ Պողոս Պողոսի Պողոսյանի մահվան վկայականի/կամ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի/պատճենը:

Հարգանքով,
Նոտար՝ _____ _____

ամսաթիվ.ամիս.տարեթիվ

Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի
թիվ 5 պաշտոնական պարզաբանման

_____ նոտարական տարածքի

Նոտար _____-ին

Ի պատասխան _____ թ-ի թիվ ___ գրության

Հարգելի տիկին/պարոն _____

Դուք խնդրել եք Ձեզ տրամադրել Պողոս Պողոսի Պողոսյանի (ծնված՝ 01.01.1950 թ., մահացած՝ 01.01.2000 թ., մահվան վկայական՝ 01010201, առկայության դեպքում լրացնել անձնագրի տվյալները և հասցեն) անվամբ «Բանկի անվանումը»-ում (այսուհետ՝ Բանկ) ունեցած ավանդներում, հաշիվներում գտնվող կամ ի պահ հանձնված՝ Պողոս Պողոսի Պողոսյանին պատկանող դրամի (արժույթի), արժութային ու այլ արժեքների վերաբերյալ տեղեկատվություն:

Այդ կապակցությամբ հայտնում ենք Ձեզ, որ Պողոս Պողոսի Պողոսյանը Բանկում ունի _____:

Ձգուշացնում ենք Ձեզ, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումն այն անձի, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն օրենքով սահմանված կարգով, արգելվում է:

Հարգանքով,

լրացնել պաշտոնը **Պետրոս Պետրոսյան**

Կատարող՝ Անուն, ազգանուն
(010) 00-00-00 (0000)

Պարտատեր բանկերի կողմից ժառանգատուների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ տրամադրելու հարցի մասին *

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից ստացվում են բազմաթիվ հարցումներ, որոնցով խնդրվում է պարզաբանել, թե բանկի առջև պարտավորություններ ստանձնած հաճախորդի մահվան դեպքում բանկն ինչպիսի քայլեր կարող է ձեռնարկել վերջինիս նկատմամբ իր պահանջները ժառանգական զանգվածում ներառելու համար, որպեսզի չխախտի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակման արգելքը:

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին հասցեագրված հարցումներում բարձրացված խնդիրները, նպատակ ունենալով ապահովելու անհրաժեշտ պայմաններ բանկային համակարգի կայունության և բնականոն գործունեության համար, միաժամանակ երաշխավորելով բանկային գաղտնիքի հետ կապված հարաբերությունների անխաթարությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը խնդրի պարզաբանման տեսանկյունից ի թիվս այլոց կարևորում է հետևյալ օրենսդրական դրույթների քննարկումը.

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 1239-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ժառանգատուի պարտատերերին տեղեկացնելու նպատակով նոտարը մամուլում հաղորդագրություն է հրապարակում ժառանգության բացման վերաբերյալ՝ պարտատերերին առաջարկելով հաղորդագրությունը հրապարակելու օրվանից վեցամսյա ժամկետում ներկայացնել ժառանգատուի նկատմամբ իրենց պահանջները: Օրենսգրքի 1243-րդ հոդվածի համաձայն՝ պարտատերերն իրավունք ունեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ներկայացնել իրենց պահանջները: Ընդ որում, պահանջները, մինչև ժառանգների կողմից ժառանգության իրավունքի վկայագիր ստանալը, կարող են ներկայացվել ժառանգությունն ընդունած ժառանգին կամ կտակակատարին, իսկ նշված անձանց բացակայության դեպքում՝ ժառանգության բացման վայրի նոտարին: Նշված ժամկետում պահանջի չներկայացումը պարտատիրոջը կարող է զրկել հետագայում ժառանգական գույքից դրանց բավարարում ստանալու հնարավորությունից, հետևաբար բանկը պետք է հնարավորություն ունենա օրենքով չարգելված եղանակներով պաշտպանել իր իրավունքները:

2) Օրենսգրքի 1239-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժառանգների, շահառուների և այլ շահագրգիռ անձանց իրավունքների պաշտպանության համար ժառանգության բացման վայրի նոտարը ձեռնարկում է սույն օրենսգրքի 1240 և 1241 հոդվածներում սահմանված և ժառանգությունը պահպանելու ու կառավարելու համար անհրաժեշտ այլ միջոցներ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ժառանգությունը պահպանելու և կառավարելու միջոցները նոտարը ձեռնարկում է ժառանգի, կտակակատարի, պարտատիրոջ, տեղական ինքնակառավարման մարմնի կամ ժառանգական գույքի պահպանման շահերից հանդես եկող այլ անձանց դիմումի հիման վրա, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իր նախաձեռնությամբ: Ավելին, ըստ հոդվածի 3-րդ մասի՝ ժառանգության զանգվածը պարզելու և այն պահպանելու նպատակներով նոտարն իրավունք ունի հարցում անել բանկերին և այլ վարկային կազմակերպություններին նրանց ավանդներում, հաշիվներում գտնվող կամ նրանց ի պահ հանձնված՝ ժառանգատուին պատկանող դրամի (արժույթի), արժութային ու այլ արժեքների վերաբերյալ:

3) Օրենսգրքի 1189-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգության բացման վայրը ժառանգատուի բնակության վերջին վայրն է, իսկ եթե ժառանգատուի բնակության վերջին վայրն արտասահմանում է կամ անհայտ է, ապա ժառանգության բացման վայր է համարվում ժառանգության զանգվածի մեջ մտնող անշարժ գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի, իսկ անշարժ գույքի բացակայության դեպքում՝ շարժական գույքի կամ դրա առավել արժեքավոր մասի գտնվելու վայրը: Սույն կետում մեջբերված դրույթը վկայում է, որ երբեմն կարող են բարդություններ առաջանալ ժառանգության բացման վայրի նոտարին պարզելիս: «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նոտարական պալատը ներկայացնում և պաշտպանում է նոտարների շահերը, նրանց օգնություն է ցույց տալիս նոտարական գործունեություն իրականացնելիս: Հետևաբար, վերոհիշյալ բարդությունների դեպքում պետք է հնարավոր համարվի նոտարական գործողությունների իրականացման՝ ներառյալ պահանջ-

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 10-ին (ՀՀՊՏ N1 (480), 8.01.2014):

ների ներկայացման գործընթացում ներգրավել նոտարական պալատին՝ վերջինիս կանոնադրական նպատակների շրջանակներում և ներքին իրավական ակտերին համապատասխան: Այդուհանդերձ, այդպիսի ներգրավումը պետք է լինի հնարավորինս սահմանափակ՝ հաշվի առնելով «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներն առ այն, որ բանկերը պարտավոր են տեխնիկական այնպիսի միջոցներ ձեռնարկել և կազմակերպական այնպիսի կանոններ սահմանել, որոնք անհրաժեշտ են բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները պատշաճ պահպանելու համար:

4) «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն բանկին իրավաբանական, հաշվապահական, այլ խորհրդատվական կամ ներկայացուցչական ծառայություններ մատուցող կամ բանկի համար որոշակի աշխատանքներ կատարող անձանց և կազմակերպություններին տվյալ բանկի կողմից բանկային գաղտնիք կազմող տեղեկություններ հայտնելը կամ տրամադրելը, պայմանով, որ դա անհրաժեշտ է տվյալ ծառայությունները մատուցելու կամ աշխատանքները կատարելու համար և որ այդ անձինք և կազմակերպությունները պարտավոր են ձեռնպահ մնալ այդ օրենքի 8 հոդվածով սահմանված գործողություններից կամ անգործությունից՝ բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

5) «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումն այն անձի, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն օրենքով սահմանված կարգով, արգելվում է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկային գաղտնիքի պաշտպանության հարաբերություններում մասնագիտացված կազմակերպություն հանդիսանում է բանկը, վերջինը օրենքով սահմանված դեպքերում և կարգով ոչ պետական մարմիններին և անձանց բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկություններ տրամադրելիս պետք է նրանց զգուշացնի սույն կետում վկայակոչված օրենսդրական արգելքի մասին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «զ» կետերը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

պաշտոնապես պարզաբանում է.

1. Իր հաճախորդի մահվան մասին ցանկացած եղանակով ծանուցված բանկի կողմից մահացած հաճախորդի՝ բանկի հանդեպ ունեցած պարտավորությունների մասին տեղեկությունների հայտնումը ժառանգության բացման վայրի նոտարին (նոտարներին)՝ ժառանգությունը պահպանելու և կառավարելու միջոցներ ձեռնարկելու և համապատասխան գույքը ժառանգական զանգվածի մեջ ներառելու նպատակով, չի համարվում բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ապօրինի հրապարակում, եթե համապատասխան գրությունը ներկայացվել է սույն պարզաբանման Հավելված 1-ում նշված օրինակելի ձևին համապատասխան:

2. Բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների ապօրինի հրապարակում չի համարվում նաև ժառանգատուի վերաբերյալ ժառանգական գործի բացման մասին իրեն ծանուցելու նպատակով բանկի կողմից նոտարական պալատ ներկայացրած գրության մեջ ժառանգատու հաճախորդի նկատմամբ բանկի պահանջի առկայության մասին նշումը, եթե բանկի համար անհայտ է, թե ով է ժառանգության բացման վայրի նոտարը: Սույն կետով նախատեսված գրության օրինակելի ձևը ներկայացված է սույն պարզաբանման Հավելված 2-ում:

3. Սույն պարզաբանման 1-ին և 2-րդ կետերով նախատեսված գրությունները բանկը համապատասխանաբար նոտարին և նոտարական պալատ կարող է ներկայացնել բացառապես առձեռն նրանց հանձնելու կամ փակ ծրարով նրանց փոստային հասցեով ուղարկելու միջոցով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 դեկտեմբերի 2013 թ., N 6

Հավելված 1

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի
թիվ 6 պաշտոնական պարզաբանման

Բանկային գաղտնիք

«__» _____ 20__ թ. Թիվ

ՀՀ «_____» նոտարական գրասենյակի
նոտար _____

Հարգելի տիկին/պարոն _____

«_____»-ի (այսուհետ Բանկ) հաճախորդ _____-ը
(բանկի անվանումը) *(անունը, ազգանունը)*
(անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝ _____, հասցե՝ _____)
մահացել է:

Բանկը հանգուցյալի նկատմամբ ունի հետևյալ պահանջները՝

1. _____
2. _____
3. _____

Խնդրում ենք ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1239-րդ հոդվածի 2-րդ մասով՝ որպես ժառանգատուի ժառանգության բացման վայրի նոտար ձեռնարկել համապատասխան միջոցներ վերջինի ժառանգությունը պահպանելու և կառավարելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ զգուշացնում ենք, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը այն անձի, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն օրենքով սահմանված կարգով՝ արգելվում է: Ուստի խնդրում ենք որպես ժառանգատուի ապագա ժառանգների օրինական ներկայացուցիչ սույն գրությամբ Ձեզ հասցեագրված տեղեկություններ տրամադրել բացառապես ժառանգատուի ժառանգներին՝ համապատասխան գույքը վերջիններին տրվող ժառանգության իրավունքի վկայագրերում նշելու միջոցով:

Հարգանքով,

Լրացնել պաշտոնը _____

Կատարող՝ _____
Հեռ.՝_____

Հավելված 2

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 10-ի
թիվ 6 պաշտոնական պարզաբանման

Բանկային գաղտնիք

«__» _____ 20__ թ. Թիվ ___

ՀՀ նոտարական պալատի նախագահ
_____

Հարգելի տիկին/պարոն _____

«_____»-ի (այսուհետ՝ Բանկ) հաճախորդ _____-ը
(բանկի անվանումը) *(անունը, ազգանունը)*
(անձը հաստատող փաստաթղթի տվյալներ՝ _____, հասցե՝ _____) մահացել է:

Բանկը հանգուցյալի նկատմամբ ունի գույքային պահանջներ:

Խնդրում ենք հիշյալ անձի վերաբերյալ ժառանգական գործ բացվելու դեպքում այդ մասին տեղեկացնել Բանկին՝ նշելով ժառանգական գործը վարող նոտարի անունը և ազգանունը:

Միևնույն ժամանակ զգուշացնում ենք, որ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների հրապարակումը այն անձի, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որին այդ տեղեկությունները վստահված են եղել, հայտնի են դարձել նրա ծառայության կամ աշխատանքի կապակցությամբ կամ տրամադրվել են սույն օրենքով սահմանված կարգով, արգելվում է: Ուստի խնդրում ենք ձեռնպահ մնալ սույն գրությամբ բացահայտված տեղեկություններն այլ անձի՝ բացառությամբ ժառանգության բացման վայրի նոտարից, տրամադրելուց:

Հարգանքով,

լրացնել պաշտոնը _____

Կատարող՝ _____

Հեռ.՝ _____

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ԴԵԿՏԵՄԲԵՐ 2013)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ու Թ Յ Ու Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 239

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 242

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 247

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 248

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 258

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը

Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը

Վարկային ներդրումներ 278
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 290
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 292
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 298
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվամում	*2013թ. նոյեմբեր*	*2013թ. նոյեմբերի իրական աճի ինդեքսը 2012թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*2013թ. դեկտեմբեր*	*2013թ. դեկտեմբերի իրական աճի ինդեքսը 2012թ. դեկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		101.8[1]		105.6
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	116280.0[1]	102.8[1]	130688.8	103.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	613.8	92.4	798.6	97.8
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	68370.0	109.0	58677.2	116.4
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	216029.3	100.2	359234.5	99.8
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	62224.0	92.7	85744.4	93.2
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	86308.7	104.0	105630.7	110.8
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձ *(ՀՀ դրամ)*	159952[1]	107.1	203482[1]	112.7

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2013 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.9	102.0	100.3	100.1
Փետրվար	99.6	98.4	101.0	100.3
Մարտ	100.4	99.3	97.5	99.6
Ապրիլ	99.9	99.1	101.4	99.1
Մայիս	100.0	100.3	101.7[1]	100.2
Հունիս	99.9	99.8	99.7	96.1
Հուլիս	100.4	100.3	100.0	83.9
Օգոստոս	100.3	100.9	101.3	92.3
Սեպտեմբեր	99.8	103.3	99.0	93.2
Հոկտեմբեր	100.3	101.5	100.5	94.5
Նոյեմբեր	100.9	99.6	100.5	100.6
Դեկտեմբեր	101.1	100.6	100.2	100.8
2013 թ. հունվար – դեկտեմբերը 2012 թ. հունվար – դեկտեմբերի համեմատությամբ	105.8	104.7	102.5	99.0

ԳՆԱՁ

Ժամանակաշրջան	*2011*	*2012*	*2013*	*2013*	*2013*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	3.4 [2]	3.6	2.9	2.9	2.6
Փետրվար	0.9 [2]	-0.9	-0.4	2.5	3.1
Մարտ	0.8	0.1	0.4	2.9	3.4
Ապրիլ	-0.2	-0.6	-0.1	2.8	3.9
Մայիս	0.0	-1.3	0.0	2.8	5.2
Հունիս	-1.4	-1.3	-0.1	2.7	6.5
Հուլիս	-3.0	-1.5	0.4	3.2	8.5
Օգոստոս	-0.6	-0.4	0.3	3.5	9.3
Սեպտեմբեր	0.8	0.8	-0.2	3.2	8.2
Հոկտեմբեր	0.3	1.2	0.3	3.5	7.1
Նոյեմբեր	1.2	1.4	0.9	4.5	6.6
Դեկտեմբեր	2.5	2.1	1.1	5.6	5.6
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	4.7	3.2	5.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	7.7	2.6	5.8		

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱԽՄԲԵՐԸ [3]

Անվանում	*2013 թ. դեկտեմբերը 2013 թ. նոյեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ) [3]*
ՍԳԻ	**101.10**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**102.07**	**1.11**
Բանջարեղեն և կարտոֆիլ	124.16	1.51
Միրգ	104.27	0.16
Ձկնամթերք	102.05	0.01
Շաքարավազ	98.30	-0.02
Սուրճ, թեյ, կակաո	99.43	-0.02
Կենդանական և բուսական յուղեր	98.97	-0.03
Մսամթերք	99.56	-0.04
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**99.97**	**-0.01**
Մշակույթի ապրանքներ	107.10	0.02
Հագուստ և գործվածք	100.50	0.01
Դեղամիջոցներ	100.30	0.01
Գեղահարդարման ապրանքներ	99.05	-0.02
Անձնական օգտագործման մեքենաներ և վառելանյութ	98.74	-0.03
Ծառայություններ, որից՝	**99.82**	**-0.06**
Հանգստի կազմակերպման	101.85	0.01
Տրանսպորտի	97.65	-0.08

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃ[3]

ժամանակաշրջան	2010	2011	2012	2013
նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	0.48	0.71[4]	0.65	0.79
Փետրվար	0.74	0.42[4]	0.08	0.21
Մարտ	0.82	0.64[4]	0.04	0.53
Ապրիլ	0.70	0.45[4]	0.02	0.51
Մայիս	0.04	0.32[4]	-0.16	0.38
Հունիս	-0.22	0.37[4]	0.35	0.54
Հուլիս	-0.42	0.21[4]	0.14	0.09
Օգոստոս	0.17	0.27[4]	-0.06	0.11
Սեպտեմբեր	0.63	0.42[4]	0.67	0.28
Հոկտեմբեր	1.21	0.36[4]	0.73	0.29
Նոյեմբեր	1.18	0.41	0.37	0.06
Դեկտեմբեր	0.63	0.55	0.58	-0.19
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	6.20	6.28[4]	5.27	3.63
Փետրվար	7.59	5.75[4]	4.91	3.73
Մարտ	7.14	5.68[4]	4.27	4.20
Ապրիլ	6.35	5.42[4]	3.81	4.71
Մայիս	5.92	5.75[4]	3.30	5.30
Հունիս	5.40	6.32[4]	3.26	5.50
Հուլիս	5.16	6.95[4]	3.19	5.49
Օգոստոս	4.96	7.01[4]	2.85	5.70
Սեպտեմբեր	4.86	7.01[4]	3.10	5.34
Հոկտեմբեր	5.53	6.09[4]	3.48	4.85
Նոյեմբեր	6.16	5.37	3.47	4.51
Դեկտեմբեր	6.26	5.29	3.50	3.69

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՃԻ ՆԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ[3]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. *այդ թվում՝*	**3.69**
Ձու	0.45
Կարագ	0.19
Ծառայություններ ատամնաբուժական, ատամների բուժման	0.18
Ծառայություններ կենցաղային ապրանքների վարձակալության հանձնման (վարձույթի)	0.16
Հավի բուդ	0.15
Մածուն	0.15
Ծխախոտ «Գառնի»	0.15
Պանիր «Չանախ»	0.14
Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների	0.13
Թարմ ծուկ «Իշխան»	0.12
Կարամել	0.12
Ծառայություններ առևտրային բանկերի, ավանդային	-0.11
Բջջային հեռախոսի կանխավճարային, րոպեավճար	-0.12
Խոզի միս	-0.16
Շաքարավազ	-0.20

[1] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:*

[2] *Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:*

[3] *Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:*

[4] *Տվյալները վերանայվել են ՀՀ ԿԲ կողմից՝ սպառողական զամբյուղի կառուցվածքի փոփոխության հետ կապված:*

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Անվանում	*2013 թ. հունվար – նոյեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2013 թ. հունվար – նոյեմբերը 2012 թ. հունվար – նոյեմբերի նկատմամբ (%)*	*2013 թ. հունվար – դեկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2013 թ. հունվար – դեկտեմբերը 2012 թ. հունվար – դեկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1348.8	108.4	1480.0	107.2
Ներմուծում *(ՍԻՖ)*	3993.9	104.2	4476.8	105.1
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	2645.1	102.2	2996.8	104.0

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	165347	23281	142066	1644850	251163	1393686
ԱՄՆ	13928	15248	-1320	127681	115347	12334
Ուկրաինա	1818	2151	-334	20783	21114	-331
Ղազախստան	2596	185	2411	26427	1734	24694
Գերմանիա	2102	2540	-438	26847	33177	-6330
Իսպանիա	637	746	-109	7534	11186	-3651
Ֆրանսիա	2058	1576	482	19917	25268	-5351
ԱՄԷ	1577	5618	-4041	23392	53989	-30597
Չինաստան	1749	8506	-6756	7108	82770	-75662
Թուրքիա	816	3491	-2675	3799	31221	-27421
Այլ երկրներ	27981	16755	11226	329130	235711	93420
Ընդամենը	**220609**	**80098**	**140511**	**2237468**	**862679**	**1374789**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2013 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	171900	22603	149297	1727945	235155	1492790
ԱՄՆ	11721	14149	-2427	152466	134063	18403
Ուկրաինա	1729	1915	-185	18281	21765	-3484
Ղազախստան	2659	151	2508	26756	2510	24246
Գերմանիա	2367	2662	-295	25628	47616	-21988
Իսպանիա	749	1132	-383	8860	16492	-7631
Ֆրանսիա	1905	1385	521	20651	23449	-2798
ԱՄԷ	1780	4694	-2914	32011	48291	-16280
Չինաստան	292	9223	-8931	5598	85968	-80370
Թուրքիա	179	2867	-2688	3398	29292	-25894
Այլ երկրներ	25051	18036	7015	280735	207550	73184
Ընդամենը	**220333**	**78816**	**141517**	**2302329**	**852151**	**1450178**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2012 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	132623	16347	116275	1444955	164588	1280367
ԱՄՆ	6326	3061	3265	66554	25936	40617
Ուկրաինա	1647	1706	-59	19094	15397	3698
Ղազախստան	2393	145	2248	22532	1575	20957
Գերմանիա	1361	612	749	11827	7962	3866
Իսպանիա	618	264	354	6315	3842	2473
Ֆրանսիա	1444	440	1004	12089	5292	6797
ԱՄԷ	430	699	-269	7596	7309	287
Չինաստան	76	1045	-969	2967	10646	-7679
Թուրքիա	110	451	-341	1615	4209	-2593
Այլ երկրներ	9032	4696	4336	91717	45493	46224
Ընդամենը	**156061**	**29468**	**126593**	**1687263**	**292249**	**1395014**

հազար ԱՄՆ դոլար

Երկիր	2013 թվական					
	Դեկտեմբեր			Հունվար-դեկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	160667	18791	141876	1606643	180350	1426293
ԱՄՆ	9339	3293	6046	82060	32933	49127
Ուկրաինա	1641	1425	217	17019	14812	2207
Ղազախստան	2369	149	2220	23758	2151	21607
Գերմանիա	1642	801	841	15586	8214	7372
Իսպանիա	720	470	251	6440	4602	1838
Ֆրանսիա	1579	589	991	14698	6116	8582
ԱՄԷ	458	965	-507	7723	7874	-150
Չինաստան	137	987	-850	1390	11829	-10439
Թուրքիա	146	489	-343	1838	4357	-2519
Այլ երկրներ	9081	6488	2593	92634	50975	41659
Ընդամենը	**187780**	**34445**	**153335**	**1869788**	**324212**	**1545576**





ԻՐԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՒՄԱՐԺԵՔ (ԻՆԴԵՔՍ) [1,2]

2012	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	133.2	128.7	127.6	122.8	124.3	120.4	119.4	118.2	117.1	117.8	119.7	120.6
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	218.3	214.0	213.7	207.5	212.7	208.8	210.8	210.4	208.2	208.1	209.2	207.7
2013	**Հ**	**Փ**	**Մ**	**Ա**	**Մ**	**Հ**	**Հ**	**Օ**	**Ս**	**Հ**	**Ն**	**Դ**
Իրական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	122.6	121.3	120.9	120.3	120.2	121.1	127.4	128.3	126.9	125.7	128.2	128.7
Անվանական արդյունավետ փոխարժեք, ինդեքս (1997=100)	205.9	205.4	204.9	204.4	205.0	206.9	217.0	218.6	218.0	216.5	219.1	218.6

[1] 2013 թ. հունվարին ամբողջ շարքը վերանայվել է, քանի որ հաշվարկի մեջ ընդգրկվել են 12 (նախկինում՝ 11) գործընկեր երկրների տվյալները՝ բացառելով մարդասիրական օգնությունը, բնական գազի, նավթի և ադամանդի առևտուրը, 2007-2011 թթ. կշիռներով (նախկինում՝ 2003-2007 թթ.), 1997=100:
[2] Բոլոր տվյալները ներկայացված են ըստ ԿԲ նախնական գնահատումների և պարբերաբար ենթակա են վերանայման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար


Ցուցանիշներ	2012	2013											
	Դ [3]	Հ	Փ	Մ [3]	Ա	Մ	Հ [3]	Հ	Օ	Ս [3]	Հ	Ն	Դ [4]
Համախառն միջազգային պահուստներ	**1799.4**	**1768.0**	**1771.6**	**1631.2**	**1638.2**	**1669.7**	**1606.3**	**1749.5**	**1794.3**	**2430.6**	**1955.8**	**2021.9**	**2253.0**
Ոսկի	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	31.7	31.8	21.6	1.7	13.7	34.4	34.0	74.4	65.6	6.4	14.1	1.9	1.9
Պահուստային դիրքը ԱՄՀ-ում	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Արտարժույթ [2]	1767.7	1736.2	1749.9	1629.6	1624.5	1635.3	1572.3	1675.1	1728.7	2424.1	1941.6	2020.0	2251.1

[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով:*

[2] *Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:*

[3] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*

[4] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*




ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2012	2013											
	Դ [2]	Հ	Փ	Մ [2]	Ա	Մ	Հ [2]	Հ	Օ	Մ [2]	Հ	Ն	Դ [3]
Համախառն արտաքին պարտավորություններ	**731.6**	**735.8**	**721.6**	**679.6**	**687.3**	**671.1**	**676.2**	**724.8**	**717.4**	**691.5**	**695.8**	**682.8**	**644.7**
ԱՄՀ վարկ	464.3	466.0	454.5	415.3	416.9	402.4	408.5	451.6	444.1	414.6	416.0	403.6	365.1
ՀՓԻ տեղաբաշխում	135.2	135.6	134.8	131.9	132.8	131.9	132.3	133.2	133.3	135.0	135.4	135.1	135.5
Այլ վարկեր	131.8	134.1	132.2	132.1	136.8	136.3	134.8	139.7	139.6	141.4	144.0	143.6	143.9
Այլ պարտավորություններ	0.3	0.1	0.1	0.2	0.8	0.5	0.6	0.4	0.4	0.5	0.5	0.4	0.2


[1] *Հաշվարկված է փաստացի փոխարժեքներով: Ընդգրկված են փոխարկելի արտարժույթով և ՀՀ դրամով պարտավորությունները:*
[2] *Ներառված են ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*
[3] *Տվյալները նախնական են: Ներառված չեն ՀՀ ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնությունները:*



ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

մլն ՀՀ դրամ

	Պահանջներ Կառավարության նկատմամբ		Կառավարության հաշիվներ և ավանդներ					Զուտ պահանջներ Կառավարության նկատմամբ
	Վերջնաժամկետի ժամանակացույցով	Ընդամենը	Ոչ վաճառքի ենթակա պահուստային դրամական միջոցների ներգրավման ժամանակացույցով	Վաճառքի ենթակա պահուստային դրամական միջոցների ներգրավման ժամանակացույցով	ՓԻԳԴ-երի միջոցներ հաշվում	ՓԻԳԴ-երի միջոցներ հաշվեգրված	Ընդամենը	
2012								
Դեկտեմբեր	15940	15940	106563	2146	1	572	109283	**-93342**
2013								
Հունվար	15784	15784	143768	2195	0	577	146540	**-130755**
Փետրվար	14383	14383	133612	2161	0	580	136353	**-121970**
Մարտ	12888	12888	114893	1894	0	594	117381	**-104493**
Ապրիլ	12818	12818	115478	1775	0	583	117836	**-105018**
Մայիս	13378	13378	111394	1556	0	592	113541	**-100163**
Հունիս	13148	13148	112382	1321	0	581	114284	**-101136**
Հուլիս	13366	13366	116876	1160	0	581	118617	**-105251**
Օգոստոս	13035	13035	130133	4809	0	576	135519	**-122483**
Սեպտեմբեր	12782	12782	134183	284110	0	575	418868	**-406086**
Հոկտեմբեր	11789	11789	197050	4643	0	574	202267	**-190478**
Նոյեմբեր	16555	16555	196696	4629	0	573	201898	**-185342**
Դեկտեմբեր	15259	15259	185847	4702	0	575	191124	**-175865**



ՓՈՂԻ ԱԳՐԵԳԱՏՆԵՐ ԵՎ ՓՈՂԻ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

	Փողի բազա մ [1] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Շրջանառությունում կանխիկ դրամ** *(մլրդ ՀՀ դրամ)*	**Ցպահանջ ավանդներ դրամով** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M1** [2] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Ժամկետային ավանդներ դրամով** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M2** [3] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Արտարժութային ավանդներ** *(մլրդ ՀՀ դրամ)*	**M2X** [4] *(մլրդ ՀՀ դրամ)*	**Փողի բազայի մուլտիպլիկատոր** [5]	**Դրամային զանգվածի մուլտիպլիկատոր** [6]
2012										
Դեկտեմբեր	683846	384065	161727	545793	192190	737983	608382	1346365	1.97	1.23
2013										
Հունվար	655927	351781	156998	508779	200378	709158	610987	1320145	2.01	1.22
Փետրվար	679554	342222	168718	510940	202542	713481	633431	1346912	1.98	1.22
Մարտ	645019	344020	158137	502157	211289	713445	650421	1363867	2.11	1.27
Ապրիլ	679618	346048	166212	512260	215608	727868	640145	1368013	2.01	1.22
Մայիս	714781	353291	159824	513115	214635	727751	656506	1384256	1.94	1.22
Հունիս	659174	351789	162354	514143	217085	731228	651890	1383118	2.10	1.32
Հուլիս	724935	365148	164740	529889	219027	748915	663298	1412213	1.95	1.28
Օգոստոս	733149	359178	166306	525484	220948	746433	679250	1425683	1.94	1.26
Սեպտեմբեր	722587	355298	180857	536155	224084	760239	697684	1457923	2.02	1.28
Հոկտեմբեր	719126	359366	183320	542686	231080	773766	693039	1466806	2.04	1.31
Նոյեմբեր	746394	352279	188504	540783	241450	782233	688405	1470638	1.97	1.32
Դեկտեմբեր	888057	384467	198901	583369	264677	848046	697327	1545372	1.74	1.31

[1] Փողի բազան ընդգրկում է ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամը, ՀՀ ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվները (դրամով և արտարժույթով) և ռեզիդենտների այլ հաշիվները (դրամով և արտարժույթով):


[2] M1-ն ընդգրկում է շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ցպահանջ ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[3] M2-ը դրամային զանգվածն է, ընդգրկում է M1-ը և ռեզիդենտների՝ ՀՀ դրամով ժամկետային ավանդները և փոխառությունները:


[4] M2X-ը փողի զանգվածն է, ընդգրկում է M2-ը և ռեզիդենտների՝ արտարժույթով ավանդները (ներառյալ՝ հաշիվները) և փոխառությունները:


[5] Փողի զանգվածի (M2X) և փողի բազայի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:

[6] Դրամային զանգվածի (M2) և փողի բազայի դրամային բաղադրիչների հանրագումարի հարաբերակցությունն ամսվա վերջի դրությամբ:


Փողի բազայի դինամիկան ըստ տարրերի
մլն ՀՀ դրամ
900000
750000
600000
450000
300000
150000
0
09
10
11
12
13
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ ՀՀ դրամով
Առևտրային բանկերի թղթակցային հաշիվներ արտարժույթով
Այլ հաշիվներ


Փողի զանգվածի կառուցվածքը
մլն ՀՀ դրամ
1600000
1400000
1200000
1000000
800000
600000
400000
200000
0
09
10
11
12
13
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով
Արտարժույթով ավանդներ


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը փողի զանգվածում
%
55
50
45
40
35
30
25
20
06
07
08
09
10
11
12
13


Շրջանառությունում կանխիկ դրամի տեսակարար կշիռը դրամային զանգվածում
%
70
65
60
55
50
45
40
06
07
